ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**78**-րդ տարի) **Թիվ-9** (1691) *Սեպտեմբեր 2024*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Հավատ սեփական ուժերի նկատմամբ (էջ 1-2)

2- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
Արցախի Հանրապետության իրավաքաղաքական փաստաթղթերն անխոցելի են (էջ 3-6)

3- Հայ դատ

Տաթևիկ Աղաջանյան
Արցախ. մեկ տարի առանց հայերի (էջ 7-9)

Տաթեւիկ Դավթեան
Արցախից բռնի տեղահանության ազդեցութիւնը Արցախի երեխաների իրաւունքների վրայ (էջ 10-11)

Վահագն Խաչատրեան
Ազրպէյճանի կողմից իրականացուող մշակութային ցեղասպանութիւնը Արցախում (էջ 12-15)

4- Տարածաշրջանային

Ժաննա Վարդանեան
Ձէնք՝ նաւթի դիմա՞ց, թէ՞ աւելին. Ազրպէյճան-Իսրայէլ կապերի ներկան ու ապագան (էջ 16-19)

5- Ռազմաքաղաքական

Սարգիս Սարգսյան
44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 1) (էջ 20-31)

6- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Հայ մտավորականության լույսն ու ստվերը (էջ 32-35)

7- Բնապահպանություն

Արմեն Վարդանյան
Ռազմավարական հենասյուն Սևանը ձախողվող պետական քաղաքականության ներքո (էջ 36-39)

8- Դեմքեր և դեպքեր

Մարգարիտա Խաչատրյան
Օնիկ պապիկի՝ մնացորդաց սերնդի հայի թափառական ճակատագրի մասին (էջ 40-42)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Սփիւռքը վարկաւորել ըստ արժանւոյն (էջ 43)

Հավատ սեփական ուժերի նկատմամբ

2024 թվականի սեպտեմբերի 2-ին մեկ անգամ ևս ապրեցինք ազգային այն մեծ խայտառակությունը, որի մեջ խորասուզված է հայ ժողովուրդը: Ազգային ուժերը Հայաստանում նշեցին Արցախի անկախության հռչակման օրը՝ սրանով ուղերձ հղելով ներքին ու արտաքին լսարանին այն մասին, որ հայ ժողովրդի համար Արցախի հարցը մնում է չլուծված: Հակառակ սրա՝ երկրի իշխանությունը ոչ միայն լռություն պահպանեց, այլև գործադրեց ամեն ճիգ ու ջանք ձախողելու նման միջոցառումների անցկացումը և հակառակ ուղերձը հղելու արտաքին համապատասխան ուժերին:

2024 թ. մարտի 12-ին անցկացրած մամուլի ասուլիսում Նիկոլ Փաշինյանն ասում է, թե Հայաստանը անցած տարիներին, ըստ էության, եղել է Ռուսաստանի ֆորպոստը, բայց Ռուսաստանը չի գնահատել այդ հանգամանքը: Հակառուսական հետևողական քաղաքականությունից այն կողմ այս հայտարարության հետևում կա մեկ այլ ասելիք կամ նույնպես անվանենք ուղերձ: Նա արևմտյան հովանավորներին ասում է, թե ինքն ու իր գլխավորած ուժը պատրաստ են Հայաստանը դարձնելու նրանց ֆորպոստը: Կատարելով հովանավորների կամքը՝ Փաշինյանը հետևողականորեն իրագործել է Արցախից հրաժարվելու ծրագիրը: Միաժամանակ նույն ուժերը, որքան էլ որ Նիկոլին և իր նմաններին խաղացնեն իրենց մատների շարժումով, անդրկովկասյան քաղաքական մեծ խաղի համար հենարան են տեսնում ոչ թե փոքր ու այսօր գործոն չհանդիսացող Հայաստանին, այլ հեռանկարային Ադրբեջանին ու իրենց դարավոր գործակից Թուրքիային: Սերտ հարաբերություններ ունենալով վերջինների հետ՝ արտաքին այդ ուժերը ցանկանում են ճանապարհ հարթել նրանց համար, որպեսզի նրանց միջոցով էլ իրականացնեն Ռուսաստան, Կենտրոնական Ասիա, Իրան թափանցելու իրենց փայփայած հարյուրամյակների ծրագիրը: Այլ խոսքով, Նիկոլ Փաշինյանն ապավինում է մի ուժի, որն իրականում հետապնդում է ոչ միայն Արցախն ադրբեջանական տեսնելու, այլև Հայաստանի ինքնուրույն քաղաքական գործոն լինելու հեռանկարն անգամ ոչնչացնելու նպատակ:Այդ ուժերը հասկանում են, որ սեփական երկրի ինքնության ոչնչացմանը ծառայող նիկոլները հավերժ չեն կարող իշխել, օրինաչափորեն նրանց փոխարինելու են գալու ազգային ուժերը, իսկ Հայաստանը ոտքի հանելու և Հայաստանի ինքնիշխանությունը վերականգնելու ռազմավարությունը խորտակիչ կարող է լինել տարածաշրջանի նոր ճարտարապետության մասին երազողների համար: Այսօր արդեն, երբ փաշինյանական իշխանությունը Արցախը հանձնելուց հետո պայքարում է այս հարցի վերարծարծումը թույլ

չտալու համար, երբ բարձրաստիճան ՔՊ-ականները հայտարարում են, թե Արցախի հանձնման օրը Հայաստանի իրական անկախության օրն է, որ Արցախի հարցի արծարծումը վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության համար այլևս անհեթեթ է ապացուցելը, որ այս ուժը հենց արտաքին մեծ ծրագրերը սպասարկելու համար է իշխանության բերվել: Հետևողականության առումով դժվար չէ վերը բերված օրինակների կողքին ավելացնելը այս ուժի ներկայացուցիչների նախկին հայտարարություններն այն մասին, թե իրենց «հեղափոխությունը» ավելի կարևոր է, քան Արցախի ազատագրումը, որ արցախյան պատերազմի զոհերը եղել են հանուն ոչնչի: Վերջապես բազմիցս հիշված օրինակների կողքին կարելի է ավելացնել 2024 թ. հունիսի 12-ի արյունոտ օրը խորհրդարանում Փաշինյանի արած այն հայտարարությունը թե. «Պետք է 2018-ին ասեի, որ ԼՂ-ն պետք է լինի Ադրբեջանի կազմում, իմ ձախողումն է, որ չեմ ասել»:

Հայաստանի ինքնիշխանության ոչնչացման ծրագիրը, անխոչընդոտ գլուխ բերելու համար իշխող բանդան ունի արտաքին ուժերի թույլտվությունը առանց միջոցների մեջ խտրություն դնելու հաշվեհարդար տեսնելու ազգային ուժերի անհամաձայնության և բողոքի դրսևորումների հետ: Երկիրը արտաքին հովանավորներին հանձնելու ստանձնած պարտավորությունը վերջնականորեն հնարավոր կլինի իրականացնել, երբ կլուծարվի ՀԱՊԿ-ը և ռուսական ռազմուժը կհեռացվի Հայաստանից:

Բայց այս ամենը դեռ չի նշանակում, թե դրածո իշխանության առջև բացված է իր սև գործն անելու հարթ ճանապարհ: Նույնքան ակնհայտ է, որ այս ուժը ներկայացնող քիչ թե շատ մտածելու ընդունակ միակ անձը լուրջ տագնապի մեջ է, և

այժմվանից մտմտում է հաջորդ ընտրությունների մասին: Պատերազմում խայտառակ պարտություն կրելուց հետո նա 2021 թ. կարողացավ ժողովրդի մեկ հատվածից քվե կորզել՝ խոստանալով խաղաղություն և լավ ապագա: Տարիներ անց ոչ պատերազմի վտանգն է փոքրացել ոչ խաղաղության հեռանկարն է ուրվագծվում: Փաշինյանը մտածում է, որ ժողովրդին հերթական անգամ և գոնե կարճ ժամանակով խաբելու համար իրեն հարկավոր է գոնե ձեռքին ունենալ Խաղաղության պայմանագիր կոչվող ինչ որ թղթի կտոր: Դրանից հետո իր կառավարման արկածախնդրությունը շարունակելու համար նա առջևում կունենա քաղաքականապես և ֆիզիկապես դիմանալու ժամանակի նոր պաշար: Նա համոզել է իրենից երկիրը խլողներին, որ, որպեսզի մնա իշխանության գլխին և կարողանա նրանց նորանոր պահանջները կատարել, նախ պետք է ընտրվի, այլապես եթե այսօր փորձի փոխել Սահմանադրությունը, հանձնել Զանգեզուրի միջանցքը, սահմանագծման ու սահմանազատման անվան տակ հանձնել նորանոր տարածքներ, երկրի ներսում կարող է դժգոհության այնպիսի ալիք բարձրանալ, որը պատմության աղբանոցը կշպրտի իրեն իր թայֆայի և դավաճանական ծրագրերի հետ: Հայաստանը հոշոտելու ձգտող ուժերը համաձայն են նրա այս տրամաբանության հետ, բայց, մյուս կողմից, նրանք ոչ մի երաշխիք չունեն, թե Նիկոլը կարող է երկար դիմանալ իր տեղում, հետևաբար, մի կողմից՝ Նիկոլի պահպանմանը նպաստելու, մյուս կողմից՝ օր առաջ նրանից առավելագույնը պոկելու հակասության մեջ են: Սպասելի է, որ բնապահպանական բնույթի համաշխարհային խորհրդաժողովը Բաքվում անցկացնելուց հետո Ալիևը Նիկոլի վրա ճնշումը մեծացնելու համար կգնա սահմանային նոր սադրանքների և ընդհուպ նոր պատերազմի: Դրա հարմար նախապայմաններ են ձևավորվում նաև աշխարհաքաղաքական միջավայրում: Աշխարհը զբաղված է Ռուսաստանի և Ուկրաինայի, Մերձավոր Արևելքի գնալով շիկացող հակամարտություններով, ինչպես և դրանց հավանական վերաճմամբ ավելի նոր և ավելի հզոր առճակատումների: Ինչպես 2020 թվականին, նոր պատերազմը, թերևս, Նիկոլ Փաշինյանին հնարավորություն կտա ավելի հեշտությամբ գնալու նոր զիջումների, կրկին հայտարարելով, թե խնայում է զինվորների կյանքը: Իսկ առկա իրավիճակում ցուցադրելով իր հավատարմությունը թելադրված խաղին, և ձև անելով, թե իբր ամուր է իր տեղում՝ Նիկոլ Փաշինյանը եթե հաջողեցնի հասնելու Խաղաղության պայմանագրի կնքման, ամենայն հավանականությամբ, կկազմակերպի արտահերթ ընտրություններ՝ անակնկալի բերելով բոլորին բացի իր կողքից քարշ տվող արբանյակ ուժերի:

Սեպտեմբերի 22-ին Սրբազան պայքարի շարժումը ձեռնարկեց մեծ հանդիպում Մարզահամերգային համալիրում և հայտարարեց պայքարի նոր փուլի մեկնարկի մասին: Իրականությունն այն է, որ, ի հակառակ պարտված և պայքարի անընդունակ իշխանության, ազգային ուժերի համար ակնառու է, որ Հայաստանը կրկին կարելի է դարձնել ռազմական և տնտեսական առումներով ուժեղ, դաշնակիցների հետ բազմաբևեռ կապերով ամուր, մրցունակ երկիր՝ համախմբելու դեպքում համահայկական ներուժը և վերականգնելով ազգային միասնականությունը:

Տարբեր գերուժերի և միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից հնչել և հնչում են հայտարարություններ Արցախի հարցի լուծված չլինելու, արցախահայության վերադարձի անհրաժեշտության մասին՝ կարևորելով դրա համար անհրաժեշտ իրավական քաղաքական երաշխիքների ապահովումը: Նույնքան ակնհայտորեն այս ծրագրին դեմ են Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի իշխանությունները և նրանց հովանավորները:

Պետք է խոստովանել, որ ցայսօր Նիկոլ Փաշինյանին հաջողվել է հասարակական դժգոհության սլաքները զգալի չափով շեղել իրենից դեպի ազգային դաշտ, առաջնորդության հարցի և առաջնորդողների անձերի վերաբերյալ շինծու ու անպտուղ քննարկումների ոլորտ: Այս հարցում Նիկոլին կամա թե ակամա աջակցող հանգամանքներ են դառնում դիմացի դաշտի որոշ գործիչների անհամարժեք հավակնոտությունը և հասարակական տարբեր շերտերի հավատի պակասը, իշխանությունների և արտաքին դերակատարների սարքած քարոզչական թակարդում մոլորվելը: Պակասում է այն գիտակցությունը, որ գլխավոր հարցն այսօր ընդհանուր նպատակի շուրջ համախմբումն է, իսկ ապագայի վերաբերյալ պատկերացումները լուծվելու են առկա քաղաքական-իրավական հնարավորությունների ճանապարհով:

Մեր ներկա դժբախտությունների գլխավոր պատճառը հավատի պակասն է սեփական ուժերի նկատմամբ: Գալիք հաղթանակների, հայության ու հայրենիքի նոր վերածնունդի երաշխիքը պետք է դառնա հավատը սեփական ուժերի նկատմամբ, այն հավատը, որով մենք հայրենիք ազատագրեցինք, զսպեցինք դարավոր թշնամուն, կառուցեցինք մեր նոր պետականությունը, եղանք հպարտ ու արժանապատիվ: ■

Արցախի Հանրապետության իրավաքաղաքական փաստաթղթերն անխոցելի են

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Համաձայն Արցախի Հանրապետության Սահմանադրության հոդված 1-ի 2-րդ կետի, Արցախի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անվանումները նույնական են:

Հայաստանի ներկայիս իշխանությունը փակում է Արցախի Հանրապետության էջը. ճանաչելով Արցախը Ադրբեջանի կազմում, այս իշխանությունը մերժեց Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Արցախի Հանրապետության, Արցախի հիմնահարցի գոյությունն ընդհանրապես: «Լեռնային Ղարաբաղի նախագահ», «Արցախի պաշտոնյա», «Արցախի ներկայացուցչություն» հասկացություններն այլևս գոյություն չունեն այս իշխանության համար:

Մյուս կողմից, ՀՀ իշխանությունը հետևողականորեն իրականացնում է «խաղաղության պայմանագրի» նախապայմանները. ընդունել թուրք-ադրբեջանական շահը սպասարկող ՀՀ նոր Սահմանադրություն, տրամադրել Ադրբեջանին Սյունիքով «ճանապարհ» (միջանցք) դեպի Նախիջևան:

Նշենք, որ ՀՀ իշխանությունը «ճանապարհի» (միջանցք) վերահսկողությունը ՀՀ սահմանապահ ուժերից վերցնելով կարող է, օրինակ, հանձնել «այլ միջազգային կազմակերպությունների», որոնք չի բացառվում որ լինեն ՀՀ ինքնիշխանությանը սպառնացող ուժեր: Սա Հայաստանի անվտանգային միջավայրի լրջագույն խնդիր է (ճանապարհի քողի ներքո կարող է իրականացվել հարակից տարածքների բռնազավթում, բնակչության արտագաղթ, գյուղերի դատարկում և այլն): Այս առումով բազմիցս իրենց դիրքորոշումն արտահայտել են Իրանը (3-րդ երկրի վերահսկողությունը Հայաստանի ճանապարհներին, ՀՀ տարածքային ամբողջականության դեմ ցանկացած սպառնալիք կամ սահմանների վերափոխումը լիովին անընդունելի են և կարմիր գիծ՝ Իրանի համար), ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունը (համաձայն 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետի՝ տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները):

Տարածաշրջանում վտանգավոր են Թուրքիայի դերակատարության մեծացումը, թուրք-ադրբեջանական գործոնի ակտիվությունը:

ԱՐՑԱԽԻ բռնազավթումից, Արցախի ժողովրդի բռնի տեղահանումից, էթնիկ զտումից հետո արագընթաց տեղի է ունենում ՀԱՅԱՍՏԱՆԻ սահմանամերձ տարածքների զավթման գործընթաց Ադրբեջանի կողմից: Թուրք-ադրբեջանական դաշինքն իրականացնում է հայոց պետականությունը մասնատելու, հայ ազգին ոչնչացնելու դավադիր ծրագիրը,

որի առանցքում «Մեծ Թուրանի» իրականացման ծրագիրն է:

Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է գոյութենական պայքարի անհրաժեշտության առջև: Ներկայացնենք ռազմավարական, առանցքային փաստաթղթեր, որոնք իրավական առումով փաստում են Արցախի Հանրապետության գոյությունը:

1991-ի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման վերաբերյալ հռչակագիրը:

Համաձայն որոշման, ընդունվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ/ԱՀ) հռչակման մասին հռչակագիրը[1] (Նշենք, որ հիմք է ընդունվել 1990-ի ապրիլի 3-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու կարգի» մասին օրենքը:

Այդ օրենքի առանցքը ԽՍՀՄ կազմից դուրս գալու հանրաքվեի գաղափարն էր):

1991-ի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը համաձայնեց, որ «հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն որոշելով համագործակցության ձևը ուրիշ պետությունների և ընկերակցությունների հետ»:

1992-ի հունվարի 6-ին Ստեփանակերտում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին հռչակագիրը.

«Ելնելով ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքից, հենվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի ազատ կամքի վրա, որ արտահայտվել է 1991 թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրապետական հանրաքվեի արդյունքներում՝

- հավատարմություն հայտնելով այն սկզբունքներին, որ բովանդակում է 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղը Հանրապետություն հայտարարելու մասին Հռչակագիրը
- զարգացնելով Լեռնային Ղարաբաղի 1918-1920 թվականների անկախ, ժողովրդական ինքնակառավարման փորձը և այլն»[2]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ հռչակված պետականությունը:

Համաձայն այս փաստաթղթի՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը անկախ պետություն է, ունի իր պետական դրոշը, զինանշանը, օրհներգը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, ինչպես նաև միջազգային իրավական այն փաստաթղթերը, որոնք կարգավորում են մարդու իրավունքների և ազատությունների պահպանումը: Իր քաղաքացիների պաշտպանության և բնակչության անվտանգության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծվում են իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա զինված ուժեր, հասարակական կարգի պահպանության և պետական անվտանգության մարմիններ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, իրականացնում է արտաքին անկախ քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը և այլն»[3]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու մասին Հռչակագիրը և Մարդու իրավունքների հռչակագիրը հիմք են ծառայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության և օրենսդրության ընդունման համար:

2006-ի դեկտեմբերի 10-ին Արցախի Հանրապետությունն ընդունում է իր Սահմանադրությունը:

«Արցախի ժողովուրդը՝ դրսևորելով անսասան կամք զարգացնելու և պաշտպանելու ինքնորոշման իրավունքի հիման վրա 1991 թվականի սեպտեմբերի 2-ին ստեղծված և 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով անկախ հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես ազատ, իրավահավասար քաղաքացիների ինքնիշխան պետություն,

Արցախի խորհրդարան, 1991 թ.

որտեղ մարդը, նրա կյանքն ու անվտանգությունը, իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են,

- հաստատելով հավատարմությունը 1992 թվականի հունվարի 6-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին Հռչակագրի սկզբունքներին,
- երախտագիտությամբ հիշելով մեր նախնիների և ներկա սերունդների հերոսական պայքարը ազատության վերականգնման համար, խոնարհվելով մեզ պարտադրված պատերազմում նահատակվածների հիշատակի առջև,
- ոգեշնչված աշխարհասփյուռ հայության դրսևորած միասնության զորությամբ,
- վերակերտելով Արցախում ազգային պետականության պատմական ավանդույթները,
- գիտակցելով պատմական Հայրենիքի ճակատագրի համար սեփական պատասխանատվությունը ներկա և ապագա սերունդների առջև,
- իրականացնելով մեր ինքնիշխան իրավունքը, մեզ համար, սերունդների և բոլոր նրանց համար, ովքեր կցանկանան ապրել Արցախում, ընդունում և հռչակում ենք սույն Սահմանադրությունը»[4]:

2017-ի փետրվարի 20-ին Արցախի Հանրապետությունը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) հանրաքվեով հաստատում է Սահմանադրության բարեփոխումները. Արցախի ժողովուրդը,

«• դրսևորելով անսասան կամք՝ զարգացնելու և պաշտպանելու ինքնորոշման իրավունքի հիման վրա 1991 թվականի սեպտեմբերի 2-ին ստեղծված և 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով անկախ հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը,

• հաստատելով հավատարմությունը 1992 թվականի հունվարի 6-ին ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին Հռչակագրի սկզբունքներին,

• կարևորելով 2006 թվականին ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության դերն անկախ պետականության կայացման և ամրապնդման գործում,

• զարգացնելով ազգային պետականության պատմական ավանդույթները,

• ոգեշնչված Մայր Հայաստանի և աշխարհասփյուռ հայության՝ Արցախի ժողովրդին զորավիգ լինելու վճռականությամբ,

• հավատարիմ մնալով հայրենիքում ազատ ապրելու և արարելու իր նախնիների երազանքին և վառ պահելով ազատության համար պայքարում նահատակվածների հիշատակը,

• իրականացնելով իր ինքնիշխան և անօտարելի իրավունքը, ընդունում է Արցախի Հանրապետության Սահմանադրությունը»[5]:

Արցախի Հանրապետության Սահմանադրության /2017/ հոդված 1-ի կետ 1-ում նշվում է. Արցախի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է: Վերոնշյալ փաստաթղթերն ապացուցում են, որ Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) գոյությունը իրավական առումով

անխոցելի է: Ինչպես նաև՝ առկա մի շարք ռազմավարական փաստաթղթերում ակնհայտ է, որ Արցախն ու Մայր Հայաստանը անբաժանելի են.

1989-ի դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին[6],

1992-ի հուլիսի 8-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին[7],

1990 -ի օգոստոսի 23-ի ՀՀ Անկախության հռչակագիրը[8],

ՀՀ Սահմանադրություն[9] (ընդունվել է 1995-ի հուլիսի 5-ին, Սահմանադրության փոփոխությունները՝ 2015-ին), 2007-ի ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն[10], 2007-ի ՀՀ ռազմական դոկտրին[11] և այլն:

Արցախի հիմնահարցի կարգավորմանն անդրադարձել են միջազգային կառույցներ, (ՄԱԿ, ԵԱՀԿ Մինսկի խումբ,...), կնքվել են մի շարք միջազգային փաստաթղթեր:

Թեև Ադրբեջանը բազմիցս տապալել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեռքբերումները Արցախյան հարցում, սակայն հաջողություններն ակնհայտ են եղել. «Միջազգային հանրությունը և Հայաստանը սկսեցին խոսել գործնականում միևնույն լեզվով, այն է՝ խնդրի բացառապես խաղաղ կարգավորումը, հիմնված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման միջազգային ճանաչման և նրա անվտանգության երաշխիքների վրա, այլընտրանք չունի»[12]:

Այս համատեքստում առաջնահերթ է Ազգային իշխանության կայացումը, վերսկսել բանակցությունները միջազգային հարթակներում Արցախյան հիմնախնդրի շուրջ, այս անգամ ներառել 2023-ին Արցախում տեղի ունեցած ցեղասպանությունը (շրջափակում, բռնազավթում, հայրենազրկում, էթնիկ զտում...): Միջազգային հանրությունը պետք է ճանաչի, ընդունի այս ոճրագործությունը որպես ցեղասպանություն, ճանաչի Թուրքիային որպես մասնակից և հովանավոր: Հետևաբար, պետք է կարևորել Արցախի Հանրապետության ներկայացուցչության ինստիտուտը, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդությամբ զորավիգ լինենք Արցախի ժողովրդին, որպեսզի միջազգային հարթակներում նորից բարձրացվի և վերջնականապես լուծվի Արցախյան հիմնահարցը: ■

Հղումներ

1 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագիր, 1991-ի սեպտեմբերի 2, http://www.parliament.am/library/LGH/Laws/ankaxutyan%20hrchakagir.pdf

2 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հռչակագիր, 1992-ի հունվարի 6:

3 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հռչակագիր, 1992-ի հունվարի 6:

4 Արցախի Հանրապետության Սահմանադրություն, 2006-ի դեկտեմբերի 10, https://hy.wikisource.org/wiki/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%AB_%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

5 Արցախի Հանրապետության Սահմանադրություն, 2017-ի փետրվար 20, https://karabakhcenter.com/hy/post/arcakhi-hanrapeto%D6%82tyan-sahmanadro%D6%82tyo%D6%82n/

6 1989-ի դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3153

7 1992-ի հուլիսի 8-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3278

8 ՀՀ Անկախության հռչակագիր, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1895

9 ՀՀ Սահմանադրություն, https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510

10 ՀՀ Ազգային Անվտանգության Ռազմավարություն, 2007, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189

11 ՀՀ ռազմական դոկտրին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116

12 2008-2018 թթ. ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը «Sputnik Армения» գործակալությանը հոդված է տրամադրել իր պաշտոնավարման տարիներին Արցախյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի մասին:

Արցախ. մեկ տարի առանց հայերի

Տաթևիկ Աղաջանյան
Լրագրող Արցախ

Արցախի հայաթափումից անցել է մեկ տարի: Մի տարի է, ինչ ամբողջ Արցախում չեն գործում հայկական դպրոցները, եկեղեցիներում չեն հնչում հայկական աղոթքի ձայները, անտեր ու անխնամ մնացած գերեզմաններին այցելող չկա, իսկ Արցախի նախագահականում ծածանվում է ադրբեջանական դրոշը: Երբեմնի աշխույժ ու հայաշունչ Արցախում այժմ մեծ ծավալով ու արագությամբ ընթանում է ադրբեջանականացման և հայկական հետքի ոչնչացման, որոշ դեպքերում՝ յուրացման քաղաքականություն: Անհավատալի է թվում, բայց օրը ցերեկով եկեղեցի, գերեզմանոց, հասարակական ու մասնավոր կառույցներ քանդող Ադրբեջանի իշխանությունների ձեռքը բռնող չկա, բացակայում են նույնիսկ դատապարտող, թեկուզ անատամ հայտարարությունները, ինչն էլ ավելի է «ոգևորում» փաստացի առանց հայերի մնացած Արցախում (չհաշված մինչև երկու տասնյակ հայերի, որոնց ադրբեջանցիները կալանավորի նման պահում են Ստեփանակերտում) շարունակել իր քաղաքականությունը: Մենք՝ արցախցիներս էլ վախով ու անզորությունից ծնված ցավով հեռվից հետևում ենք մեր հայրենի օջախների ավերմանը, հարազատ վայրերի ձևախեղմանը:

Վերջերս էլ ադրբեջանական մեդիայում «Մենք ենք մեր սարերը» (Տատիկ-պապիկ) հուշակոթողի մասին եղան հրապարակումներ, ինչից կարելի է ենթադրել, որ Ադրբեջանը փորձում է յուրացնել Արցախի խորհրդանիշ համարվող կոթողը՝ այն ներկայացնելով որպես «Ադրբեջանի բազմամշակութային և ազգային-կրոնական հանդուրժողականության բազմաթիվ օրինակներից մեկը»: Ցավալի է, բայց ստիպված ենք սփոփվել այն մտքով, որ, յուրացվելով, Արցախի խորհրդանիշ կոթողը չի արժանանա Արցախի Ազգային Ժողովի շենքի, Բերձորի Սուրբ Համբարձման կամ Շուշիի Կանաչ ժամ եկեղեցիների ճակատագրին, այդպես գոնե կանգուն կմնա «Դեդոն ու բաբոն»՝ մինչև իրական տերերի վերադարձը:

Ի՞նչ են անում ՀՀ իշխանություններն արցախցիների վերադարձի, սեփականության իրավունքները պաշտպանելու ուղղությամբ: Կարելի է ասել, որ պաշտոնական մակարդակով ոչինչ չի արվում: ՀՀ իշխանություններն որդեգրել են Արցախի հարցը «թաղելու» քաղաքականություն, չեն բարձրաձայնում նույնիսկ հայկական դարավոր պատմամշակութային ժառանգության ոչնչացման մասին, ի՞նչ խոսք կարող է լինել արցախցիների մյուս հիմնարար իրավունքների պաշտպանության մասին:

Սեպտեմբերի 9-ին ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, արձագանքելով Հայաստանի և Արցախի

միջխորհրդարանական հանձնաժողովի աշխատանքների մասին «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանի հարցին, ասել է, որ այդ ֆորմատը պետք է լուծարել: «Քանի որ երկրորդ կողմն այլևս իրավազոր չէ և չի ներկայացնում այն, ինչ ժամանակին ներկայացնում էր, մենք պետք է շատ լրջորեն քննարկենք այդ ֆորմատը չեղարկելը, որովհետև Լեռնային Ղարաբաղի, Արցախի պաշտոնյա այլևս գոյություն չունի և նման կարգավիճակ ՀՀ-ում որևիցե մեկն այլևս չունի, այդ ֆորմատը գոյություն չունի»,- ասել է Ալեն Սիմոնյանը, ով նաև ՀՀ-ի կողմից տվյալ հանձնաժողովի նախագահն է:

Արծվիկ Մինասյանը հիշեցրել է, որ Սահմանադրությամբ և օրենքներով Լեռնային Ղարաբաղ և Արցախի Հանրապետություն անվանումները՝ որպես իրավական եզր, առայսօր առկա են ՀՀ օրենքներում և միջազգային պայմանագրերում, և անձը չի կարող որոշել վերացնել այն:

Օգոստոսի 31-ին էլ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ «այն ընկալումներով և ձևակերպումներով, որոնցով Լեռնային Ղարաբաղի մի խումբ հայրենակիցներ փորձում են ձևակերպել վերադարձի հարցը», ինքն իրատեսական չի համարում: Փաշինյանի կարծիքով՝ ներկայացված բո-



վանդակությունը հակասում է ՀՀ պետական շահերին:

Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանը, արձագանքելով Փաշինյանի հայտարարությանը, նշել է, որ վերադարձն արցախցիների իրավունքն է, և այն չի կարող խոչընդոտել և հակասել Հայաստանի պետական շահերին: «Վերադարձի հարցը մշտապես մեր օրակարգում է, որի լուծման համար Արցախի Ազգային ժողովի կողմից ստեղծվել է հանձնախումբ, որի ղեկավարն է ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Մենք պարբերաբար հանդիպում և քննարկում ենք հնարավոր վերադարձի հետ կապված հարցերը: Արցախցիները մեծ ցանկություն ունեն վերադառնալու, շենացնելու իրենց հայրենիքը, կրկին հայկական դարձնելու Արցախը, սակայն մենք պետք է պատրաստ լինենք, և մեր վերադարձը հնարավոր կլինի միջազգային երաշխիքներով, արժանապատիվ, արդարացի և ամենակարևորը՝ մենք պետք է ապահով զգանք մեր հայրենիքում: Եթե այդ չափանիշներն ապահովվեն, մենք պատրաստ ենք բանակցել այդ հարցերի շուտափույթ լուծման համար»,- ընդգծել է Արցախի նախագահը: Սակայն վերադարձի կարևոր պայմաններից է արցախցիների՝ համախումբ բնակեցումը և վերադարձի միասնական տեսլականի պահպանումը: Իսկ ամբողջ ՀՀ-ով և աշխարհով մեկ ցրված արցախցիների պարագայում դա իրատեսական չէ: Իշխանություններն էլ արցախցիների համայնքային կազմակերպությունները պահելու մտադրություն չունեն: Դրա մասին է վկայում նաև տեղահանված արցախցիների բնակապահովման պետական ծրագիրը:

Արցախցիների համար բնակարան ձեռք բերելու աջակցության ծրագիրը հավանության է արժանացել ՀՀ կառավարության մայիսի 16-ի նիստում: Ըստ հիմնավորման՝ նպատակն է Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմից, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանված շուրջ 25 000 ընտանիքներին Հայաստանում բնակարանով ապահովելը: Ծրագրի մասնակիցներին կառավարությունը կտրամադրի բնակարանի ձեռքբերման կամ տան կառուցման հավաստագրեր: Ծրագիրն իրականացվելու է հինգ տարիների ընթացքում (2024-2029 թթ.)՝ երեք փուլերով: Հունիսի 14-ին «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի» շրջանակներում ՀՀ կառավարությունը հաստատել էր արցախցիներին բնակարանի գնման հավաստագրեր տրամադրելու կարգը: Հավաստագրերը տրամադրվում են ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար՝ 3 մլն-ից մինչև 5 մլն դրամ անվանական արժեքով: Աջակցության չափը կախված է նրանից, թե ծրագրի մասնակիցը Հայաստանի ո՞ր բնակավայրում է մտադիր բնակարան գնել կամ տուն կառուցել: 5 մլն դրամը սահմանված է սահմանամերձ 242 բնակավայրերի համար, 4 մլն-ը՝ 148 քաղաքային և գյուղական բնակավայրերում իրացնելու դեպքում:

Այուս 3 մլն դրամի հատկացումը գործում է մնացած բոլոր բնակավայրերում՝ բացի Երևանի առաջին և երկրորդ գոտիներից: Իսկ եթե ընտանիքն ունի գործող հիփոթեք, ընտանիքի յուրաքանչյուր անդամի 2 մլն դրամ է հատկացվելու:

Ծրագրով բնակարան ձեռք բերելու կամ կառուցելու համար նախընտրելի բնակավայրերը ՀՀ սահմանամերձ տարածքներում են: Ստացվում է, որ արցախցիները կշարունակեն բնակվել ցրված վիճակում՝ կենտրոնից հեռու: Բնական է, որ երկուերեք տասնամյակ հետո նրանք կկորցնեն իրենց ինքնությունը, համախմբված չեն լինի, և ընդմիշտ կթաղվի արցախյան հարցը, ինչպես դա եղավ նախիջևանցիների դեպքում:

Բնակարանային քաղաքականության հետևանքը կլինի այն, որ սահմանամերձ շրջաններում կբարձրանան վաճառվող տների գները, և տունը վաճառած տանտերերի հնարավորությունները կմեծանան Երևանում կամ այլ քաղաքներում գնելու նոր բնակարաններ: Իսկ դրանով նախ՝ փոփոխության կենթարկվի ժողովրդագրական պատկերը սահմանամերձ շրջաններում, նաև սահմանամերձ շրջաններից դեպի քաղաքներ կամ կենտրոն տեղափոխված բնակիչները կհանդիսանան իշխանությունների պոտենցիալ ընտրողներն ու աջակիցները:

Այսպիսով, արցախցիներին բնակարանների տրամադրման իշխանությունների քաղաքականության հիմնական նպատակն արցախցիներին կենտրոնից հեռու, ցրված վիճակում պահելն է, արտագաղթի հնարավորության մեծացումն ու աստիճանաբար բռնագաղթածի կարգավիճակից զրկելը, ինչպես

նաև Արցախ վերադարձի մասին մտքերի ու ծրագրերի փոշիացումը:

Իսկ արցախցիների արտագաղթի տեմպերը չափազանց մեծ են: Ըստ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության տվյալների՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը Լեռնային Ղարաբաղում հաշվառված 49 975 մարդ է մեկնել Հայաստանից, որից 23 404-ը վերադարձել է, իսկ 26 571-ը՝ ոչ: Այսինքն՝ հուլիսի մեկի դրությամբ ՀՀ-ից անվերադարձ հեռացել է մոտ 27 000 արցախցի: Ենթադրվում է, որ այդ թիվն ավելի կմեծանա 2024 թ. դեկտեմբերից հետո, երբ կդադարի ՀՀ կառավարության կողմից տրվող բնակվարձի փոխհատուցման ծրագիրը (ընտանիքի յուրաքանչյուր անդամին ամսական 40+10 հազար դրամ է հատկացվում):

Բնակապահովման ծրագրից օգտվելու պարտադիր պայման է սահմանվել ՀՀ քաղաքացիություն ընդունելու պահանջը: Իրականում ՀՀ իշխանությունները կարող էին մեկ որոշմամբ «070»-ի կողմից արցախցիներին տրված անձնագիրը հավասարեցնել ՀՀ լիիրավ քաղաքացու անձնագրին, որովհետև այդ անձնագիրը ՀՀ քաղաքացու անձնագիր է, և դրանով իսկ միաժամանակ կպահպանվի նաև բոնագաղթածի կարգավիճակը: Վերոհիշյալ քայլի դեպքում՝ արցախցիները կհանդիսանան և՛ ՀՀ քաղաքացի, և բոնագաղթած՝ տարբերվելով անձնագրի կոդով: Իսկ այժմ իշխանությունն այս քայլով փորձում է խորացնել հայաստանցի-ղարաբաղցի տարբերակումը՝ հայտարարելով, որ «ՀՀ քաղաքացին բողոքում է արցախցիներից, որ նրանք բոնագաղթածի կարգավիճակով չեն ծառայում ՀՀ զինված ուժերում»:

Իրականում որպես ճամփորդական որակված անձնագրերով արցախցիները չեն կարող նույնիսկ ազատ տեղաշարժվել: ՀՀ-ից ելքի համար պարտադիր է փախստականի կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայությունը, իսկ որոշ եվրոպական երկրներ էլ 070 կոդով անձնագրով շենգեն վիզա չեն տրամադրում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի խոսքով՝ մինչև 2024 թ, սկիզբն այդ խնդիրը չկար, համենայն դեպս, ինքն այդ մասին ահազանգեր չի ստացել: «2024 թ. մարտ-ապրիլ ամիսներին առաջին դեպքերն արձանագրվեցին: Դեսպանատներ կան, որոնք առանց որևէ խոչընդոտի տրամադրում են շենգեն վիզա: Նույն Ֆրանսիայի դեսպանատունը, չի եղել մի դեպք, որ մերժի ընթացք տալ գործին՝ պատճառաբանելով, թե 070 կոդով է: Դեսպանատներ կան, որոնք երբեմն տարբերակված մոտեցում են ցուցաբերում: Անձին Գերմանիայի դեսպանատունը մերժել է, հետո հրավիրող կողմը առանձին նամակով դիմել է Գերմանիայի դեսպանատուն, և տվյալ անձին նորից կանչել են հարցազրույցի ու տրամադրել վիզա: Դեսպանատներ էլ կան, որ ընդհանրապես որևէ ձևով չեն

տրամադրում վիզա, ընթացք էլ չեն տալիս դիմումներին: Դրանց շարքում հատուկ ընդգծեմ Լեհաստանի, Լիտվայի, Չեխիայի դեսպանատները: Իսպանիայի դեսպանատան Վիզաների կենտրոնից պարզաբանել են, որ հյուպատոսի հրահանգով չեն կարող վերցնել փաստաթղթերը»,- ասել է Գեղամ Ստեփանյանը:

Արցախի ՄԻՊ-ը հիշեցրել է, որ այդ բոլոր պետությունները Փախստականի կարգավիճակի մասին կոնվենցիայի անդամներ են, և 28-րդ հոդվածով փախստականներն ունեն ազատ տեղաշարժի իրավունք, իսկ Կոնվենցիայի անդամ կողմերը պարտավորվում են նրանց անձը հաստատող փաստաթուղթն ընդունել՝ որպես ճամփորդական և առնվազն՝ որպես այդպիսին հիմք պիտի ընդունվի այդ երկրների կողմից: «Եթե ասում եք՝ 070 կոդով անձնագիրը չի հավաստում կամ իշխանությունների ասածից բխում է, որ չի հավաստում ՀՀ քաղաքացիության մասին, ապա ասեք՝ ինչո՞ւ դրանք չեք դիտարկում նորմալ ճամփորդական փաստաթուղթ: Գոնե որպես ճամփորդական փաստաթուղթ ընդունելով՝ պետք է ընթացքավորեն վիզայի գործընթացը»,- հարցրել է Գեղամ Ստեփանյանը:

Այսպիսի անպատասխան հարցեր արցախցիները շատ ունեն, որոնց շրջանակն ու թիվն օրեցօր ավելանում է: Իսկ ո՞վ պիտի պատասխանի այս հարցերին, ո՞վ կարող է լուծում տալ դրանց: Միայն պետականամետ, ազգային մտածողություն ունեցող իշխանությունը: Մինչ այդ արցախցիներին մնում է ինքնակազմակերպվել, հնարավորինս կոմպակտ ապրել, ամեն գնով պահպանել Արցախի պետականության մնացորդները, բարբառն ու սովորույթները, համախմբվել ազգային ուժերի շուրջ: Այդպիսի ուժ, բացի պետական մարմիններից, կարող է լինել ՀՀ-ում իր գործունեությունը շարունակող Արցախի թեմը, կամ Արցախի ՀՅԴ և մյուս կառույցները: ■

Արցախից բռնի տեղահանության ազդեցությունը Արցախի երեխաների իրաւունքների վրայ

Տաթեւիկ Դաւթեան
Իրաւագիտութեան մագիստրոս, մի շարք տեղական եւ միջազգային գիտաժողովներում հանդես է եկել զեկոյցներով, հետազոտութեան թեման՝ Արցախահայութեան նկատմամբ իրականացուած ցեղասպանական գործողութիւնները: Աշխատում է Հայաստանի Հանրապետութեան Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութիւնում:

ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի նախաձեռնութեամբ, 2024 թ. իրականացուեցաւ «Հայ Ուսանողութիւնը Արցախի Համար» հետազօտութիւններու մրցանքը, որուն մասնակցեցան մի քանի տասնեակ ուսանողներ աշխարհի տարբեր երկիրներէ:

Ծրագրին հիմնական նպատակն է մէկտեղել հայ ուսանողութեան կարողութիւնը՝ քաղաքական, տնտեսական, ընկերաբանական, իրաւագիտական, մշակոյթի եւ հետաքննողական լրագրութեան բնագաւառներու մէջ, հմուտ խորհրդատուներու հետ համագործակցիլ եւ արդիւնքները տրամադրելի դարձնել հայանպաստ գործունէութիւն ծաւալող ազդեցիկ հիմնարկներու՝ արդիւնաւէտ օգտագործման համար:

Կը ներկայացնենք մրցանքին գնահատանքի արժանացած ուսանող՝ ***Տաթեւիկ Ն. Դաւթեանի (ՀՀ) հետազօտութեան ամփոփագիրը, նիւթ՝ «Արցախից բռնի տեղահանութեան ազդեցութիւնը Արցախի երեխաների իրաւունքների վրայ»****, խորհրդատու՝ Գեղամ Ստեփանեան, Արցախի Հանրապետութեան Մարդու Իրաւունքներու Պաշտպան:*

Ռազմական գործողութիւններին չմասնակցող երեխաների իրաւունքները զինուած հակամարտութեան կամ ռազմական իրավիճակում երաշխաւորուած են «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանութեան մասին» 1949 թ. Ժնեւի կոնուենցիայով, ինչպէս նաեւ 1977 թուականի Յունիսի 8-ի թիւ 1 լրացուցիչ արձանագրութեամբ:

2022 թուականի Դեկտեմբերի 12-ին սկսուած եւ շուրջ 9 ամիս տեւող շրջափակմանը յաջորդեց 2023 թուականի Սեպտեմբերի 19-ին Ազրպէյճանի լայնածաւալ յարձակումը Արցախի Հանրապետութեան դէմ՝ աւելի տեսանելի դարձնելով Ազրպէյճանի յանցաւոր նկրտումների վերաբերեալ կանխատեսումները:

Արցախի Հանրապետութեան խաղաղ բնակչութիւնը գտնուում էր հրետակոծութեան տակ, ըստ ՔԼՄ հետազօտութիւնների եւ ականատեսների Ազրպէյճանի ԶՈՒ-ն կիրառել է հրետանի եւ անօդաչու թռչող սարքեր:

Արցախում բնակուող շուրջ 30,000 երեխաների իրաւունքներ խախտուած են եղել ինչպէս շրջափակման ընթացքում, այնպէս էլ ռազմական գործողութիւնների սկսման եւ դրան յաջորդող՝ իրադարձութիւնների ընթացքում:

Դէպքերն ու իրադարձութիւնները յստակ ուսումնասիրելով կարող ենք եզրակացնել, որ Պաքուի կողմից նախապէս մտածուած է եղել Արցախի Հանրապետութեան դէմ ռազմական գործողութիւնների սկսման ժամը՝ այն սկսուել է ցերեկը՝ կէսօրից յետոյ՝ երբ երեխաներն ու ուսանողները դասի են եղել: Շարունակուող ռմբակոծութիւնները խաղաղ բնակչութեան նկատմամբ միտուած են եղել մեծացնելու խուճապը՝ երեխաների եւ ծնողների միջեւ կապի հաստատումն անհնար դարձնելով:

Ազրպէյճանի կողմից ռազմական գործողութիւնների հետեւանքով կան երեխաների սպանութեան արձանագրուած դէպքեր, բազմաթիւ երեխաներ մնացել էին առանց հարազատների եւ առանց տարհանման հնարաւորութեան: Արցախում մարդիկ յուսահատ փորձում էին գտնել իրենց երեխաներին, որոնց հետ կապն ընդհատուել էր: Սեպտեմբերի 20-ի դրութեամբ վիրաւոր երեխաների թիւը եղել է 13: Արցախի Սառնաղբիւր գիւղում զոհուել է 5 խաղաղ բնակիչ, որոնցից 3-ը երեխաներ են եղել, որոնք սպանուել են դպրոցում: Որոշ դիտարկումների ընթացքում պարզ է դառնում, որ երեխաները բախուել են սննդի սահմանափակումների, սանիտարական պայմանների եւ առողջապահական խնամքի անհասանելիութեան՝ ինչպէս օրինակ, ռազմական գործողութեան ընթացքում երկու երեխայ ծնուել է նկուղում, իսկ յատկապէս Արցախի սահմանամերձ գիւղերից տարհանուած երեխաները, ովքեր ռազմական գործողութեան աւարտից յետոյ չէին կարող վերադառնալ իրենց տները եւ ստիպուած ապաստան էին գտել Ստեփանակերտի օդանաւակայանում՝ գիշերում էին դրսում, առանց սնունդի, հագուստի, հիգիենայի պարագաների:

Ազրպէյճանի ռազմատենչ գործողութիւնների հետեւանքով խախտուել է երեխաների՝ մայրենի լեզուով

խօսելու, իրենց մշակոյթն ու կրօնը պահպանելու իրաւունքը: Արցախի բնակչութեանը բռնի հպատակեցման Ազրպէյճանի նպատակներից մէկն այն էր, որ բնակչութիւնն այլեւս ինտեգրուի Ազրպէյճանին եւ դառնայ Ազրպէյճանի քաղաքացի՝ կորցնելով իր մայրենի լեզուն, կրօնն ու մշակոյթը: Բռնի տեղահանման պարագայում, ցաւօք, մասամբ եւս բախւում ենք այս իրաւունքի խախտման դրսեւորումներին, քանի որ ՀՀ-ում Արցախից բռնի տեղահանուածների տեղաբաշխումը չի իրականացւում ըստ համայնքային բաժանման, երեխաները կորցնում են իրենց Արցախեան մշակութային առանձնայատկութիւնների պահպանման ու արցախեան բարբառով խօսելու հնարաւորութիւնը:

Արցախում 2023 թուականի սեպտեմբերեան ռազմական գործողութիւնների եւ բռնի տեղահանման ընթացքում խախտուել է 30 հազարից աւելի երեխաների կրթութեան իրաւունքը, որոնցից շուրջ 21 հազարը՝ դպրոցահասակ: Արցախից բռնի տեղահանուած երեխաները ռազմական գործողութիւնների եւ բռնի տեղահանման կազմակերպման ողջ ընթացքում զրկուած են եղել կրթութեան իրաւունքի իրացումից: Այս պահին էլ Արցախից բռնի տեղահանուած դպրոցահասակ 21 հազար երեխաներից ՀՀ մարզերի եւ Երեւանի դպրոցներում ընդգրկուել է դեռ 17 հազարը:

Շուրջ 30,000 երեխաներ ինչպէս շրջափակման ընթացքում, այնպէս էլ ռազմական գործողութիւնների եւ բռնի տեղահանման ընթացքում ենթարկուել է հոգեբանական եւ ֆիզիկական բռնութեան, ու վախի:

Երեխաների կեանքին առնչուող գրեթէ բոլոր ոլորտներում Ազրպէյճանի կողմից իրականացուած բռնի տեղահանումը իր ազդեցութիւնն է ունեցել. երեխաները սպաննուել են, վիրաւորուել, հարկադրուած են եղել լքել իրենց տներն ու հայրենիքը, զրկուել կրթութիւնից եւ անվտանգ ու ապահով միջավայրով պայմանաւորուած բոլոր առաւելութիւններից: Շատերը կորցրել են իրենց հայրերին ու եղբայրներին, որոշ դէպքերում նաեւ մայրերին կամ պապիկներին, ովքեր որպէս քաղաքացիական անձինք սպաննուել են Ազրպէյճանի ԶՈՒ անձնակազմի կողմից:

Տասնեակ զոհերի հարազատներ չէին կարողանում յուղարկաւորել իրենց հարազատներին՝ ոմանք հարազատների մարմիններն իրենց հետ տեղափոխել են ՀՀ, որպէսզի ատրպէյճանական զինուած ստորաբաժանումները չպղծեն հարազատների շիրիմները, ինչպէս արուել է դա 2020 թուականից յետոյ Արցախի Հանրապետութեան օկուպացուած շրջանների դէպքում: Սա եւս հոգեբանական մեծ սթրես է եղել երեխաների համար, սակայն որոշ դէպքերում հարազատները յուղարկաւորել են հարազատներին՝ չիմանալով, որ գիւղը ժամեր անց պիտի յանձնուի թշնամուն, ուստի այսօրինակ դէպքում երեխաները բախուել են մէկ այլ իրաւունքի խախտման եւ հոգեբանական սթրեսի՝ այլեւս իրենց հարազատների շիրիմներին այցելելու անհնարինութեան:

Արցախից բռնի տեղահանման հետեւանքով ընտանիքները կորցրել են ամէն ինչ, եւ յայտնուել եկամտի աղբիւրի բացակայութեան առջեւ, ինչը իր բացասական ազդեցութիւնն է ունենում երեխաների եւ նրանց ընտանիքների բարեկեցութեան վրա:

Պատերազմը, բռնի տեղահանումը կործանարար ազդեցութիւն են թողնում նաեւ երեխաների հոգեկան առողջութեան եւ բարեկեցութեան վրայ: Շուրջ 30,000 երեխայ գտնւում է դէպրեսիայի, տագնապի եւ հոգեկան առողջութեան այլ խնդիրների վտանգի ներքո՝ հնարաւոր երկարաժամկէտ հետեւանքներով եւ ազդեցութեամբ:

Չնայած ներկայում Արցախի Հանրապետութիւնում ստեղծուած իրավիճակը բաւարար չէ անվտանգ վերադարձի համար, սակայն միջազգային իրաւունքի մեխանիզմները թոյլ են տալիս Արցախի Հանրապետութեան՝ իրենց տները լքած բնակիչներին իրացնելու իրենց բնակավայր վերադառնալու իրաւունքը: Արցախի Հանրապետութեան բնակիչներն ունեն ներքին ինքնորոշման իրաւունք եւ համաձայն Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին միջազգային դաշնագրի՝ «Առանց արտաքին միջամտութեան ազատ որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը, տնտեսական, սոցիալական եւ մշակութային զարգացումը»: ■

Ազրպէյճանի կողմից իրականացուող մշակութային ցեղասպանութիւնը Արցախում

Վահագն Խաչատրեան
Մագիստրոս, սովորել է Արցախի պետական համալսարանի Ֆինանսներ և կառավարում բաժնում: Աշխատել է լրագրող՝ «Ապառաժ» թերթում: Այժմ աշխատում է «Օփթիմայզ Քոնսալթինգ» ընկերութիւնում՝ ֆինանսական վերլուծաբան:

Կը ներկայացնենք մրցանքին գնահատանքի արժանացած ուսանող՝ ***Վահագն Խաչատրեանի (Արցախ) հետազօտութեան ամփոփագիրը, նիւթ՝ «Արցախի հոգեւոր ժառանգութեան պաշտպանութեան հիմնախնդիրը»,*** *խորհրդատու՝ Հոգեշնորհ Տ. Գարեգին Վարդապետ Համբարձումեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան գրասենեակի ղեկավար:*

Ներածութիւն

Մշակութային Ցեղասպանութիւնը ներառում է մշակութային տարրերի, այդ թւում լեզուի, կրօնի, պատմութեան, արուեստի, մշակութային կոթողների, այսինքն՝ մարդկանց որոշակի խմբի մշակոյթի մէջ ներառուող երեւոյթների համակարգուած եւ միտումնաւոր ոչնչացում կամ աղաւաղում: Գիտակցելով, որ ժողովրդի հաւաքական կերպարի եւ յիշողութեան պահպանման համատեքստում իր ուրոյն դերակատարութիւնը ունի նիւթական եւ ոչ նիւթական (լեզու, գրականութիւն, սովորոյթներ, աւանդական արհեստներ), մշակութային ժառանգութեան պահպանումը, Ազրպէյճանը տարիներ ի վեր փորձել է դրանք խլել, խեղաթիւրել ու վերացնել, այդպիսով ոչնչացնելով նաեւ Արցախի ժողովրդի էթնոմշակութային ինքնութիւնը:

Սոյն յօդուածում փորձել ենք աւելի մանրամասն եւ փաստացի ներկայացնել Արցախում հայկական մշակութային հազարամեայ հետքը, Ազրպէյճանի կողմից իրականացուած եւ շարունակուող մշակութային ցեղասպանութիւնը՝ միջազգային հանրութեան թոյլտուութեամբ: Ուսումնասիրութիւնը էլ աւելի արդիական է դառնում այս օրերին, երբ համայն հայութեան համար գերնպատակ պէտք է լինի Արցախի հայկական մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնն ու պահպանումը, որն Արցախի ամբողջական հայաթափումից յետոյ Արցախի հայկականութեան գլխաւոր վկան է դարձել:

Արցախի պատմութիւնն ու մշակութային հետքերը

Ազգային ինքնութեան եւ ազգի հաւաքական յիշողութեան ձեւաւորումը մշակութային ժառանգութիւնն է ամրապնդում: Հայկական լեռնաշխարհի Արցախեան հատուածում հնագիտական հետազօտութիւնների համաձայն հին ժամանակներից սկսած ապրել եւ արարել է մարդը՝ ստեղծելով հարուստ մշակութային ժառանգութիւն: Այն որ, Արցախում հնագոյն ժամանակներից ի վեր ապրում են հայեր, փաստում են Արցախի տարածքում առկայ բազմաթիւ պատմամշակութային յուշարձանները եւ պատմական իրադարձութիւնները: Արցախ աշխարհի մասին առաջին գրաւոր տեղեկութիւնները հաղորդում է Մովսէս Կաղանկատուացին, որի «Պատմութիւն Աղուանից աշխարհի»[1] երկը գլխաւոր սկզբնաղբիւրն է, իսկ նրա հեղինակը՝ Աղուանից երկրի առաջին պատմիչը:

Արցախը Աղուանից կաթողիկոսութեան կազմում

Ազրպէյճանը ներկայումս փորձում է Արցախի բռնազաւթուած տարածքներում գտնուող հայկական եկեղեցիները ներկայացնել որպէս աղուանական՝ ժխտելով դրա հայկականութիւնը, սակայն պատմական փաստերը վկայում են, որ ՀԱՍԵ կազմաւորման պահից ի վեր նրա անբաժան մասն է կազմել նաեւ Աղուանից հոգեւոր առաջնորդութիւնը, որի կազմում ժամանակին եղել է նաեւ Արցախը: Աղուանից կաթողիկոսութեան ժառանգութիւններից է Դադի վանքը:

Աղուանից առաջնորդարանի ստեղծումը կապուած է Արցախում եւ Ուտիքում քրիստոնէութեան տարածման հետ, որը տարածել են Թադէոսի 70 աշակերտնե-

րից Եղիշան եւ Դադին: Ըստ Բաբգէն Յարութիւնեանի՝ Գ. Լուսաւորիչը հիմնել է 36 եպիսկոպոսութիւններ, որոնցից էր նաեւ Ամարասի եպիսկոպոսութիւնը: Առաջին եպիսկոպոս է կարգուել Գ. Լուսաւորչի թոռ Գրիգորիսը: Վերջինս քրիստոնէութիւն է քարոզել, ինչպէս Հայոց արեւելից կողմում (Մեծ Հայքի Ուտիք եւ Արցախ նահանգները պատմութեան մէջ յիշատակւում են նաեւ որպէս «Հայոց Արեւելից կողմեր»), այնպէս էլ բուն Աղուանքում, որտեղ ըստ մեզ հասած տուեալների 11 աղուանական ցեղեր եւս դարձել են հայ առաքելական եկեղեցու հետեւորդներ, սակայն արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում նրանց մի մասն ընդունել է մահմեդականութիւն եւ սկսել հանդէս գալ «լեզգիներ» անուամբ, իսկ ՀԱՍԵ հետեւորդները՝ «ուդիներ»: 15-րդ դարից սկսած Աղուանից կաթողիկոսութիւնը բաժանւում է երկու ճիւղերի՝ Ճալէթի եւ Գանձասարի: Ճալէթը, որպէս կաթողիկոսանիստ, գործեց 15-16-րդ դարերում, իսկ Գանձասարի աթոռը առաւել հիմնաւոր ու կենսունակ էր եւ գործեց մինչեւ 1815 թ.: 1813 թ. Գիւլիստանի պայմանագրով Ղարաբաղի՝ ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ յայտնուելուց յետոյ Հայ Աղուանից եկեղեցու վերջին կաթողիկոս Սարգիս Հասան Ջալալեանցը 1815 թ. յայտարարւում է Արցախի արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ: Աղուանից կաթողիկոսութեանը ենթակայ թեմերը միաւորւում եւ կազմում են մետրոպոլիտութիւն՝ ի հոգեւորս ենթակայ մնալով Ամենայն Հայոց կաթողիկոսութեանը: 1836 թ. մարտի 11-ի՝ Ռուսական կայսրութեան կողմից հաստատուած եկեղեցական նոր կանոնադրութեամբ Ղարաբաղի թեմական կենտրոնը տեղափոխւում է Շուշի: 1921 թ. Արցախի՝ Ազրպէյճանին բռնակցումից յետոյ, 1933 թ. Ազրպէյճանական իշխանութիւնները փակում են Արցախի հայոց թեմը, որը վերաբացւում է 1989 թ.՝ Արցախեան շարժման արդիւնքում[2]:

Ազրպէյճանի «Սպիտակ եղեռն»-ի քաղաքականութիւնը խորհրդային ժամանակաշրջանում եւ դրանից յետոյ

ԼՂԻՄ կազմաւորման հէնց սկզբից Ազրպէյճանի ղեկավարութիւնը սկսում է կոպտօրէն ոտնահարել ԼՂԻՄ հայ բնակչութեան իրաւունքները: Դա արտայայտուել է հայոց լեզուն եւ մշակոյթը սահմանափակելու, հայկական յուշարձանները եւ մշակութային արժէքները ոչնչացնելու եւ դրանք իւրացնելու փորձերով: Նպատակը՝ ԼՂ-ի լիովին կլանումն էր՝ արցախահայութեանը իր հոգեւոր մշակութային արմատներից կտրելու ճանապարհով: Հէնց այդ ժամանակներից սկսած, Ազրպէյճանը առաջ է քաշում պատմական փաստարկներից զուրկ եւ յօրինուած աղուանական տեսութիւնը, որով արցախահայութեանը համարում են բռնութեամբ հայացուած աղուաններ, որոնց ազրպէյճանցիները համարում են իրենց նախնիները, իսկ նրանց կողմից ստեղծուած ժառանգութիւնը՝ աղուանական, որը պատկանում է Ազրպէյճանի ժողովրդին: 1988 թ. ապրիլի 27-ին Ադր. ԽՍՀ նախարարների խորհուրդն իր հ. 145 որոշմամբ աղուանական-ազրպէյճանական է յայտարարում Արցախում, Նախիջեւանում եւ Ուտիքում գտնուող բոլոր յուշարձաններն ու կոթողները: 1921 թուականից ի վեր մինչ Արցախի ազատագրումը, ըստ պատմաբան Հրաչիկ Յարութիւնեանի, աւերուել եւ ամբողջովին ոչնչացուել է 167 եկեղեցի, 8 վանական համալիր, 123 հայկական գերեզմանոց, 2500 խաչքար, 10000-ից աւելի տապանաքար եւ 47 բնակավայր:

Ազրպէյճանի մշակութային Յեղասպանութիւնը 44-օրեայ պատերազմից յետոյ Արցախի գրաւեալ տարածքներում

Ինչպէս Արցախեան առաջին պատերազմում, այնպէս էլ 44-օրեայ պատերազմում ազրպէյճանական զինուժի թիրախում էին յայտնւում նաեւ հայկական եկե-



ղեցիներն ու յուշարձանները: Արցախի մշակութային կենտրոն Շուշիում ռազմական գործողությունների ընթացքում մեծ վնասներ է կրել Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Հոկտեմբերի 8-ին ազրպէյճանական զինուժը երկու անգամ հրթիռակոծել էր եկեղեցին: Human Rights Watch միջազգային իրաւապաշտպան կազմակերպությունը սա համարել էր հնարաւոր պատերազմական յանցագործություն[3]: 2020 թ. նոյեմբերին FIP.am-ը պարզել էր[4], որ Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին մասամբ աւերուած է: 2021 թ. Google Earth-ի արբանեակային լուսանկարները ցոյց էին տուել, որ եկեղեցու վերին հատուածն ամբողջովին հարթեցուած է՝ թէ՛ զանգակատունը, թէ՛ գմբէթը վերացուած են: 2021 թ. մարտին BBC-ին յայտնեց[5], որ ազրպէյճանցիները հիմնայատակ վերացրել են Ջեբրայիլ (Մեխակաւան) բնակավայրում Ջօրաւոր Սբ. Աստուածածին քրիստոնէական եկեղեցին, իսկ մինչ այդ տարածուած նիւթերից երեւում էր, որ ազրպէյճանցիները հեռացրել են եկեղեցու խաչը եւ մահմեդական աղօթք հնչեցրել: Հայկական եկեղեցիների աղուան-ազրպէյճանական ներկայացման քաղաքականության շրջանակում, 2021 թ. մայիսին Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Հադրութի շրջանի Ծակուռի գիւղում յայտարարեց, թէ տեղի Սուրբ Աստուածածին եկեղեցին աղուանական է. «*Ինչպէս հայերը պղծեցին մեր մզկիթները, այնպէս էլ պղծեցին աղուանական հին տաճարը, բայց մենք այն կը վերականգնենք: Բոլոր այս կեղծուած արձանագրությունները (մատրով ցոյց է տալիս արեւմտեան բարաւորի շինարարական արձանագրությունը եւ խաչը) վերագրուել են աւելի ուշ*»: Ալիեւի խօսքերից պարզ է դառնում, որ վերանորոգումից յետոյ հայկական արձանագրությունները ջնջուելու են: Ազրպէյճանի կողմից գրաւուած տարածքներում ազրպէյճանցիները վանդալիզմի են ենթարկում յատկապէս արցախեան պատերազմին նուիրուած յուշակոթողներն ու տապանաքարերը: Շուշիում քանդուել է հայոց ցեղասպանության զոհերին նուիրուած յուշակոթողը:

ԱՀ տարածքում գտնուող յուշարձանների պաշտօնական ցանկը ընդգրկում է աւելի քան 4000 յուշարձան[6]: 2023 թ. սեպտեմբերից յետոյ այն ամբողջութեամբ անցել է Ազրպէյճանի վերահսկողության տակ: Ազրպէյճանը արդէն իսկ հասցրել է աւերել եւ ոչնչացնել նաեւ 2023 թ. սեպտեմբերից իր վերահսկողության տակ անցած տարածքների յուշարձանները: Մասնաւորապէս տարածուած նկարները եւ տեսանիւթերը փաստում են, որ ազրպէյճանցի զինուորականները Մարտակերտ-Քարվաճառ մայրուղուց ուղիղ նշանառութեամբ կրակ են բացել Թարթառի վերնահովտի նշանաւոր հոգեւոր կենտրոններից մէկի՝ Չարեքտար վանքի ուղղութեամբ, տապալել Ստեփանակերտի 50 մետրանոց խաչը, քանդել Վանք գիւղի ավտոմեքենաների համարանիշների պատը[7], վանդալիզմի ենթարկել Ստեփանակերտում գտնուող Ստեփան Շահումեանի արձանը[8]:

Վտանգի տակ է յայտնուել նաեւ Գանձասարի Վանական համալիրը: Հոկտեմբերի 3-ին Ազրպէյճանի մշակոյթի նախարարության յուշարձանների պահպանության վարչությունը յայտարարություն տարածեց, ըստ որի հայկական կողմը «գրաւման ժամանակ» իբր վանդալիզմի է ենթարկել Գանձասարի վանքը՝ «անօրինական» վերականգնողական, վերանորոգման աշխատանքներ կատարելով, ինչն ըստ Ազրպէյճանական կողմի՝ հակասում է միջազգային իրաւունքների նորմերին եւ սկզբունքներին: Չբաւարարուելով այսքանով, ազրպէյճանական կողմը պատմության կեղծարար Ռիզուան Հուսէյնովի կողմից 2023 թուականի հոկտեմբերի 4-ին տարածեց յայտարարություն, ըստ որի Գանձասարի վանքի եւ, մասնաւորապէս, Սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու եւ գաւթի արձանագրությունները իբր կեղծուել, վերափոխուել են հայերի կողմից, ինչն իբր երեւում է արձանագրությունների հին ու նոր լուսանկարները համեմատելիս[9]:

Հետաքրքրական է հայկական մշակութային ժառանգության իւրացման հարցում նաեւ ռուս ուղղափառ եկեղեցու դիրքորոշումը եւ այս համատեքստում տեղի ունեցած որոշ իրադարձություններ: Մասնաւորապէս, պատերազմից յետոյ Պաքուում ռուս ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Ալեքսիյ Նիկանորովն իր առաջին հարցազրոյցներից մէկում



Հին Շուշին

անդրադարձել էր ոչ թէ Ազրպէյճանում ռուս ուղղափառների խնդիրներին, այլ Աղուանական եկեղեցու եւ Հայ առաքելական եկեղեցու կապին: 2020 թ. «Независимая газета»-ի հետ հարցազրոյցի ժամանակ պնդել է, որ 428 թ. հայկական պետութեան գոյութեան դադարումից յետոյ տարածաշրջանում ստեղծուած որեւէ կոթող չի կարող հայկական համարուել: Գրիգորիսին համարում է Ալբանական եկեղեցու առաջին արքեպիսկոպոս, իսկ Դադի վանքն ու Գանձասարը աղուանացի իշխանների եւ կաթողիկոսների ընտանեկան դամբարան: Իր տուած հարցազրոյցներից մէկում էլ նա հայերին անուանել է «Կովկասում յայտնուած տարրեր»: 2021 թ. հեղինակել է «Կովկասեան Աղուանքի եկեղեցու պատմութիւնն ըստ Մովսէսի Կաղանկատուացու» գիրքը, որտեղ նա շարունակել է իր անհեթեթ մտքերը: Հետաքրքրականն այն է, որ Պաքուում ռուս ուղղափառ եկեղեցու եւ պատրիարքի ներկայացուցիչը քննարկում է աղուանական եկեղեցու վերականգնման հարցում ուղիներին օգնելու անհրաժեշտութիւնը[10]:

Միջազգային հանրութեան լռութիւնը՝ Ազրպէյճանի կողմից մշակութային ցեղասպանութեան իրականացման պատճառ

Մշակութային ժառանգութեան ոչնչացումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ քաղաքակրթական աղէտ: Եթէ Արցախում տեղի ունեցած ցեղասպանութիւնն ու էթնիկ զտումները նպատակ ունէին ֆիզիկապէս ոչնչացնել արցախահայութեանը, նրանց հայրենազրկել, ապա մշակութային ցեղասպանութեան նպատակը տարածաշրջանից հայկական հետքի վերացումն է, արցախահայութեան պատմական յիշողութեան ջնջումը: Այդ գործողութիւնները մարտահրաւէր են միջազգային հանրութեան համար: Միջազգային հանրութեան լուռ համաձայնութիւնը, անտարբերութիւնը եւ անգործութիւնը սպառնալիք է ամբողջ աշխարհի համար: Ցաւոք, պէտք է արձանագրենք, որ միջազգային հանրութեան կոչերն ու ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանի որոշումները չկանխեցին Ազրպէյճանի՝ Արցախում հայերի էթնիկ զտումների ու ցեղասպանութեան իրականացման ծրագրերը: Փորձելով գտնել միջազգային հանրութեան յանցաւոր լռութեան պատճառները, հանգում ենք այն եզրակացութեան, որ միջազգային դերակատար երկրները չեն ցանկանում սրել յարաբերութիւնները Ազրպէյճանի հետ, իսկ միւս կողմից այն պայմանաւորուած է ՀՀ վարչապետ Ն. Փաշինեանի յայտարարութիւններով, որոնցով նա փաստացի ճանաչել է Արցախը որպէս Ազրպէյճանի մաս: Այսպիսով պէտք է նշենք, որ միջազգային հանրութիւնն այս պահին չունի այն գործիքակազմը, որը կը զսպի աշխարհում տեղի ունեցող մշակութային ցեղասպանութիւնները: Ըստ այդմ, առաւել քան կարեւոր է դառնում մշակութային ցեղասպանութիւնը քրէականացնող նոր օրենքի ընդունումը: ■

Հղումներ

1 Ուտիք նահանգի հետ միասին Արցախը կոչուել է «Աղուանք», «Արեւելից կողմանք», «Խորին աշխարհն Հայոց»:
2 «Աղուանից կաթողիկոսութեան պատկանելիութիւնը», Մելանեայ Բալաեանի հարցազրոյցը «Ապառաժ» թերթին, 2023թ.:
3 «Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ տաճարի Ազրպէյճանական «վերականգնման» շուրջ», monumentwatch.org,
4 Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին մասամբ աւերուած է - fip.am,
5 Nagorno-Karabakh: The mystery of the missing church - BBC News,
6 «Արցախի մշակութային ժառանգութիւնը յարձակումների թիրախում», Համլետ Պետրոսեան, Հայկուհի Մուրադեան, Երեւան 2022թ., 56 էջ,
7 «Վանքի ավտոմեքենաների համարանիշների պատը քանդուել է Ազրպէյճանի նախագահի հրամանով», monumentwatch.org,
8 «Ազրպէյճանցիները Ստեփանակերտում վանդալիզմի են ենթարկել Ստեփան Շահումեանի արձանը», monumentwatch.org,
9 «Գանձասարի բոնաւիրացումն սկսուած է», monumentwatch.org,
10 Игумен Алексий (Никоноров): Блестящие результаты деятельности Мехрибан Алиевой по укреплению взаимопонимания между культурами я видел своими глазами! / Культура / Независимая газета (ng.ru).

Զէնք՝ նաւթի դիմաց, թէ՞ աւելին. Ազրպէյճան-Իսրայէլ կապերի ներկան ու ապագան

Ժաննա Վարդանեան
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի ասպիրանտ

Կը ներկայացնենք մրցանքին Երրորդ կրթաթոշակի արժանացած ուսանող՝ ***Ժաննա Վարդանեանի (ՀՀ) հեւպազօրութեան ամիսոփագիրը, նիւթ՝ «Ազրպէյճան եւ Իսրայէլ յարաբերութիւնները»,*** *խորհրդատու՝ Շահան Գանտրահարեան, Պէյրութի Ազգակ օրաթերթի գլխաւոր խմբագիր, Լիբանան:*

Ազրպէյճանն ու Իսրայէլը տարիներ շարունակ զարգացրել են փոխշահաւէտ համագործակցութիւն, որը պահող հիմնասիւներն են զէնքի ու նաւթի վաճառքը:

Հարեւանների հետ մշտապէս հակամարտող Իսրայէլի համար Ազրպէյճանը կարեւոր է երկու հիմնական պատճառով՝ նաւթ եւ տեղադիրք՝ Իրանի հետ հարեւանութիւն: Կարեւորելով մուսուլմանական երկրների հետ յարաբերութիւնների զարգացումը՝ Իսրայէլն Ազրպէյճանի ուղղութեամբ ակտիւացել է ԽՍՀՄ փլուզումից անմիջապէս յետոյ: 1993-ին Թել Աւիւն արդէն դեսպանութիւն ունէր Պաքուում: Թէեւ այդ ժամանակ Ազրպէյճանը, իսլամական երկրների, այդ թւում՝ Իրանի արձագանքից զգուշանալով, փոխադարձաբար դեսպանութիւն չի բացել Թել Աւիւում, այդ հանգամանքը չի խանգարել այս երկու երկրներին տարբեր ոլորտներում համագործակցութեան զարգացման, բարձրաստիճան պատուիրակութիւնների փոխանակման համար:

Այս առումով երկու երկրների յարաբերութիւնների համար շրջադարձային էր 2022 թուականը, երբ Պաքուն որոշեց դեսպանատուն բացել Իսրայէլում, ինչն էլ իրականացուեց 2023-ի Մարտին: Այս հարցում նախկին զգուշաւորութեան կարիքը Պաքուն այլեւս չունէր, քանի որ դրան հակադրուող կողմերն այլեւս սպառնալիք չէին Ազրպէյճանի համար:

Իրանի հետ յարաբերութիւններն այսպէս թէ այնպէս սրուած էին:

Պաքուն իր քայլը պատճառաբանում էր նաեւ նրանով, որ Թեհրանը հիւպատոսութիւն էր բացել Հայաստանում՝ Կապանում, բայց սա, ի հարկէ, ընդամէնը պատրուակ էր: Արաբական երկրներն էլ սկսել էին կապեր հաստատել Իսրայէլի հետ: Միւս կողմից էլ, 2020 թուականի պատերազմից յետոյ Ազրպէյճանն արդէն այնքան էլ կարիք չունէր, որ հակամարտութեան հարցում արաբական երկրներն իրեն աջակցեին:

Դեսպանատան բացումից մէկ ամիս անց Պաքու է մեկնում Իսրայէլի արտգործնախարարը՝ երկրների միջեւ երբեւէ փոխանակուած ամենամեծ պատուիրակութեամբ: Յաջորդ ամիս էլ Պաքու է այցելում Իսրայէլի նախագահը:

Տնտեսական համագործակցութիւն

Երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառութիւնը պտտւում է երկու գործօնի շուրջ: Մի կողմից Ազրպէյճանը նաւթ եւ նաւթամթերք է արտահանում Իսրայէլ: Միւս կողմից Իսրայէլը զէնք, զինամթերք եւ ռազմական տեխնիկա է մատակարարում Ազրպէյճանին: Առեւտրի մասին տուեալներին յետադարձ հայեացք նետելով՝ նոյնիսկ կարելի է տեսնել, թէ երբ են երկու երկրները պատրաստուել մարտական գործողութիւնների կամ այլ ճգնաժամերի:



Այսպէս, Ազրպէյճանից Իսրայէլ արտահանումն իր փիքին հասել է 2008 թուականին՝ գերազանցելով 3,5 միլիառ տոլարը: Առհասարակ, Ազրպէյճանից Իսրայէլ արտահանումը մշտապէս եւ գրեթէ ամբողջութեամբ կազմուած է եղել նաւթից եւ փոքր քանակութեամբ նաւթամթերքից: Միւս ապրանքները չնչին տեղ ունեն արտահանման մէջ:

Այս փիքին յաջորդել է Իսրայէլից Ազրպէյճան արտահանման փիքը՝ աւելի քան 260 միլիոն տոլարի ապրանք է մատակարարուել Պաքուին: Սրա մեծ մասն էլ կազմել են ռատդիօ եւ նաւիգացիոն սարքաւորումները, աւիացիոն սարքաւորումները, սպառազինութիւնը եւ զինամթերքը: Այս փուլը համընկել է Իրանի շուրջ լարուածութեան աճին:

Երկու երկրների միջեւ առեւտրի յաջորդ փիքը եղել է 2016 թուականին՝ համընկելով Ապրիլեան պատերազմի, դրանից յետոյ Ազրպէյճանի սպառազինման հետ: Այդ տարի Իսրայէլը եւս 260 միլիոն տոլարի ապրանքներ է ուղարկել Ազրպէյճան. մեծ մասը՝ նորից սպառազինութիւն, ռազմական տեխնիկա, զինամթերք, սարքաւորումներ:

Այս փուլում Ազրպէյճանից Իսրայէլ արտահանումը այնքան էլ մեծ չի եղել, նոյնիսկ աւելի փոքր է եղել, քան նախորդ տարիներին:

Միեւնոյն ժամանակ, այն, ինչ ցոյց են տալիս այս տուեալները, արդէն իսկ վտանգաւոր միտումներ է բացայայտուում: 2022 թուականի տուեալներով՝ Իսրայէլը կրկին Ազրպէյճանին մատակարարել է հիմնականում ռազմական նշանակութեան ապրանքատեսակներ, այդ թւում նաեւ՝ ԱԹՍ-ներ:

Սպառազինութիւնների մատակարարումների դիմաց Ազրպէյճանը մշտապէս վարձահատոյց է եղել ոչ միայն նաւթով, այլեւ լրացուցիչ քաղաքական ու տնտեսական արտօնութիւններով:

Մասնաւորապէս, Իսրայէլն առաջին երկրներից էր, որ հնարաւորութիւն ստացաւ այսպէս կոչուած վերակառուցման աշխատանքներ իրականացնել 2020 թուականի Արցախեան պատերազմի հետեւանքով Ազրպէյճանի օկուպացիայի տակ յայտնուած արցախեան տարածքներում: Իսրայէլական ընկերութիւնները օկուպացուած Կովսականում «խելացի գիւղի» կառուցման նախագծին ներգրաւուեցին:

Դրանից բացի, իսրայէլական ընկերութիւնները յայտեր են ներկայացրել նաեւ «կանաչ էներգիայի», գիւղատնտեսութեան, հիւանդանոցների կառուցման ոլորտներում գործունէութեան համար: Ըստ Պաքուում Իսրայէլի դեսպանի՝ Արցախից գրաւուած տարածքներում շինարարական աշխատանքներին մասնակցելու համար յայտ է ներկայացրել մի քանի տասնեակ իսրայէլական ընկերութիւն:

Ռազմական համագործակցութիւն

2020 թուականի Արցախեան պատերազմում Ազրպէյճանի համար առանցքային դեր են ունեցել իսրայէլական ռազմական անօդաչուները: Դրանց ձեռքբերումներն Ազրպէյճանը սկսել էր դեռ 2000-ականների վերջին:

Այս շրջանում Ազրպէյճանի ռազմական գնումները անհանգստացրել էին նաեւ Իրանին, քանի որ Իսրայէլից գնումների մի մասը նաեւ ծովային զինատեսակներ էին, բազաւորուելու էին Կասպից ծովում եւ ակնյայտօրէն նախատեսուած չէին Արցախեան մարտական գործողութիւնների համար: Հէնց այդ ժամանակն էր, որ համընկնում է Իրանի շուրջ միջազգային լարուածութեանը, ինչին անդրադարձել ենք այլ յօդուածներում:

Իսկ հայ-ազրպէյճանական համատեքստում 2015 թուականի առանձին մարտական գործողութիւնների ժամանակ եւ յատկապէս 2016 թուականի Ապրիլեան պատերազմի ժամանակ Ազրպէյճանը կիրառեց այդ իսրայէլական ԱԹՍ-ները եւ՛ հետախուզական, եւ՛ հարուածային գործողութիւնների ընթացքում:

2016-ի Դեկտեմբերին Իլհամ Ալիեւը նոյնիսկ յայտարարեց, որ այդ պահի դրութեամբ Ազրպէյճանը եւ Իսրայէլը ստորագրել են ռազմական տեխնիկայի գնման 4,58 միլիառ ԱՄՆ տոլարի պայմանագիր: Սակայն բաց աղբիւրներում առկայ տեղեկութիւններով այս թիւը չէր հաստատուում:

Իսրայել-Ադրբեջան առևտուրը 2019 թվականին - [Export reported by Israel]



Միեւնոյն ժամանակ, Ազրպէյճանին սպառազինելու հարցում Իսրայէլի դերը շատ մեծ է: Այս երկիրը երկրորդ տեղում է Ազրպէյճանին վաճառուած սպառազինութիւնների ծաւալով եւ այդ ցուցանիշով զիջում է միայն Ռուսաստանին: Այդ սպառազինութիւնները յատկապէս մեծ կշիռ ունեն 2010-ականների կէսերի մատակարարումներում:

Այստեղ նոյնպէս պէտք է յիշատակել, որ տուեալները կարող են ամբողջական չլինել, քանի որ երկրները յակուած չեն զեկուցելու իրենց ռազմական գնումների մասին: Այս ցուցանիշները վերցրել ենք SIPRI հետազօտական ինստիտուտի բազաներից, որոնք այս պահին առաւել հեղինակաւոր են համարւում:

Ռազմինֆօ կայքի տուեալներով՝ 2020 թուականի դրութեամբ ազրպէյճանական զինուած ուժերի սպառազինութեան մէջ եղել են հետեւեալ իսրայելական ԱԹՍ-ները.

- հետախուզական՝ Orbiter-2, Orbiter-3, Heron, Hermes-900, Hermes-450, Aerostar, Thunder-B, Skylark,
- հարուածային եւ մահապարտ՝ Orbiter-1K, Harop (Harpy-2), Sky Striker:

Սրանց զգալի մասը, ըստ SIPRI-ի տուեալների, Իսրայէլն Ազրպէյճանին վաճառել է 2010-ականների երկրորդ կէսին: Աւելին, սրանցից առնուազն հետախուզական Orbiter-2 եւ Aerostar, ինչպէս նաեւ մահապարտ Orbiter-1K ԱԹՍ-ներն իսրայէլական արտօնագրով արտադրուել են հէնց Ազրպէյճանում՝ Իսրայէլից բերուած մասերով:

2020 թուականի պատերազմի ընթացքում Արցախի դէմ Ազրպէյճանը կիրառել է նաեւ Իսրայէլից գնած այլ սպառազինութիւն: Մասնաւորապէս յայտնի է Lora հեռահար հրթիռային համալիրի կիրառման դէպքը. դրանով թիրախաւորուել էր Աղաւնոյի կամուրջը, որը կապում էր Արցախը Հայաստանի հետ:

Բացի սեփական արտադրութեան զինատեսակներն Ազրպէյճանին մատակարարելուց, Իսրայէլը յայտնի է նաեւ նրանով, որ ներգրաւուել է Չեխիայից եւ Սլովակիայից Ազրպէյճանին զինատեսակների ապօրինի մատակարարման գործարքում: Մասնաւորապէս, Դանա Հաուբիցները եւ RM-70 Ռապիրա ՀԿՌՀ-ները Ազրպէյճան են հասցուել Իսրայէլի օդանաւակայաններով՝ փոխադրման փաստը կոծկելու համար: Սրանք նոյնպէս յետագայում կիրառուել են 2020 թուականի Արցախեան պատերազմում:

Իսրայէլից Ազրպէյճան ռազմական մատակարարումները շարունակւում են նաեւ այսօր:

Զէնքի մատակարարումներից զատ, Իսրայէլն Ազրպէյճանի հետ համագործակցում է նաեւ ռազմական կրթութեան, արդիւնաբերութեան ոլորտներում: Օրինակ, իսրայէլցի հրահանգիչները մասնակցել են Ազրպէյճանի ՋՈ, ինչպէս նաեւ յատուկ նշանակութեան ուժերի վերապատրաստմանը: Իսրայէլը զբաղուել է նաեւ Ազրպէյճանի բանակի թանկերի ու այլ զրահատեխնիկայի արդիականացմամբ: Իսկ 2011 թ. Ազրպէյճանում բացուել է համատեղ գործարան, որը զբաղւում է արդէն վերը յիշատակուած Aerostar, Orbiter տեսակի համատեղ ԱԹՍ-ների հաւաքմամբ:

Համագործակցութիւնն ակտիւ է նաեւ կիբէր ոլորտում: Օրինակ, 2022-ին Իսրայէլ է մեկնել Ազրպէյճանի թուային զարգացման եւ տրանսպորտի նախարարը, եւ այցի ընթացքում որոշուել է Ազրպէյճանում Իսրա-



յէլի աջակցութեամբ ստեղծել կիբերանվտանգութեան կենտրոն, որտեղ իսրայէլական Technion համալսարանի փրոֆէսորադասախօսական կազմը 3 տարում պէտք է պատրաստի 1000 մասնագէտի:

Ամփոփում

Ազրպէյճան-Իսրայէլ յարաբերութիւնները զարգանում են դինամիկ: Դրանց վրայ, մեծ հաշուով, չեն ազդում անգամ Իրանի ու Թուրքիայի գործօնները:

Թել Աւիւ-Պաքու կապերը միշտ անհագստացրել են Իրանին ու շատ յաճախ Ազրպէյճանի հետ յարաբերութիւնների սրման պատճառ դարձել: Ու չնայած Իրանի տարատեսակ զգուշացումներին ու ուղերձներին՝ Ադրբեջանը շարունակել է Իսրայէլի հետ համագործակցութիւնը:

Թուրքիայի դէպքում, թէեւ այս երկիրը հռետորաբանութեան մակարդակում հակամարտութեան մէջ է Իսրայէլի հետ, սակայն գործնականում Թուրքիան եւս տնտեսական համագործակցութիւն ունի Թել Աւիւի հետ: Դրա ցուցանիշներից է նաեւ այն, որ ազրպէյճանական նաւթն Իսրայէլ է հասնում Պաքու-Թբիլիսի-Ջէյհան խողովակաշարով ու անխափան՝ անգամ Գազայում պատերազմի պայմաններում: Աւելին, Պաքուն երբեմն փորձում է միջնորդի դեր ստանձնել երկու գործընկերների միջեւ:

Ընդհանուր առմամբ, չնայած արտաքին, մասնաւորապէս՝ Իրանի որոշակի դիմադրութեանը՝ Իսրայէլի եւ Ազրպէյճան համագործակցութիւնը կայուն է, բազմաբովանդակ եւ երկկողմանի ձեռնտու: Այս իմաստով երկու կողմերին էլ կարելի է նախանձախնդիր եւ նախաձեռնող համարել այս յարաբերութիւնների մէջ:

Իսրայէլի համար Ազրպէյճանը յարմար եւ հարուստ առեւտրային գործընկեր է, որին կարելի է սեփական ռազմական արտադրանքը վաճառել: Այն նաեւ յարմար հարթակ է Իրանի դէմ փոքր մասշտաբի գործողութիւններ իրականացնելու եւ աւելի մեծ մասշտաբի նախագծեր մշակելու համար: Այս պայմաններում Ազրպէյճանն էլ իր հերթին պատրաստ է եւ փորձում է միջնորդ դառնալ, երբ սրւում են իր դաշնակից Թուրքիայի եւ գործընկեր Իսրայէլի յարաբերութիւնները: Միւս կողմից, Իրանի հետ սրումների փուլերում Ազրպէյճանի շահերը համընկնում են Իսրայէլի շահերի հետ: Թուրքիայի պէս դաշնակից ունենալուց բացի, Իրանի հետ լարուած յարաբերութիւններում Պաքուն ունենում է նաեւ Իսրայէլի լուրջ աջակցութիւնը:

Ազրպէյճանի համար նոյնպէս Իսրայէլը լաւ գործընկեր է, եւ հարցը միայն նաւթի վաճառքը չէ: Պաքուի համար առաւել կարեւոր է ի դէմս Իսրայէլի ունենալ զէնքի մատակարարի, որը կարող է յաղթահարել խոչընդոտներ՝ այդ զէնքը հասցնելու համար:

Ըստ էութեան, Պաքուի ու Թել Աւիւի յարաբերութիւնները կայուն են եւ դիմացկուն: Եթէ նոր գործօններ չաւելանան, առայժմ այս յարաբերութիւններին ոչինչ չի կարող սպառնալ:

44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 1)

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

2024 թվականի սեպտեմբերի 27-ին լրանում է Արցախի դեմ ադրբեջանական լայնածավալ ագրեսիայի 4-րդ տարին: Այս ընթացքում, տարբեր հետազոտողներ փորձել են պարզել. հնարավո՞ր էր արդյոք, որ հայկական կողմն այդ պատերազմում չկրեր նման ծանր պարտություն, ինչի հետևանքով, սկզբնական շրջանում, Արցախը բզկտվեց, կորցնելով իր տարածքների գերակշիռ մասը, այնուհետև, ենթարկվելով էթնիկական զտման՝ հայաթափվեց: Տողերիս հեղինակը փորձել է վերլուծել քառամյա վաղեմության իրադարձությունների ընթացքը, և հասկանալ, թե ինչ պատճառով հայկական կողմը չկազմակերպեց համարժեք դիմադրություն, չնայած նրան, որ մինչ այդ հնչում էին մարտակոչեր, և մեզ վստահեցնում էին, որ հայոց բանակը տարածաշրջանում ուժեղագույնն է: Ինչպե՞ս պատահեց, որ պատերազմի առաջին տասնօրյակում 2-րդ բանակային կորպուսից մինչև Արցախի 9-րդ պաշտպանական շրջան, հայկական բանակն ամուր պահեց պաշտպանական գիծը, և, այնուամենայնիվ, 9-րդ պաշտպանական շրջանի ճեղքումը տեղի ունեցավ, որը, հետագայում չհաջողվեց կանգնեցնել: Մինչև օրս անպատասխան են մնում բազմաթիվ հարցեր: Օտարերկրյա անկախ մասնագետները, օգտագործելով տվյալ պահին իրենց ձեռքի տակ եղած գեոլոկացիոն պատկերները, վերլուծելով նյութը, փաստել են, որ ադրբեջանական ուժերը, պատերազմի 26-րդ օրը օկուպացրել էին Լեռնային Ղարաբաղի տարածքի ընդամենը 10 տոկոսը: Մեկ այլ վերլուծության համաձայն, որի արդյունքները հրապարակվել են հոկտեմբերի 14-ին, ադրբեջանական ուժերը գրավել էին Լեռնային Ղարաբաղի տարածքի ընդամենը 2,8 տոկոսը:

Սույն ուսումնասիրությունը կատարելու ժամանակ ունեցել եմ բազմաթիվ զրույցներ անկախ դիրքորոշում ունեցող ռուս ռազմական վերլուծաբանների հետ, որոնց եզրահանգումներին կանդրադառնանք հաջորդիվ: Օգտագործվել են նյութեր «Փոթորիկ Կովկասում» (Буря на Кавказе) գրքից: Գիրքը 2020-ի արցախյան պատերազմի մասին ռուս, հայ, թուրք և միջազգային փորձագետների հոդվածների ժողովածու է, որը 2021-ին հրատարակել է Մոսկվայի Ռազմավարությունների և տեխնոլոգիաների կենտրոնը՝ Ռուսլան Պուխովի ղեկավարությամբ: Լուրջ աղբյուր է «Army Standard» առցանց հրատարակությունը (army-standard.ru): Կողմերի նյութական կորուստների վերաբերյալ տվյալներ կան՝ շնորհիվ բլոգերներ Ստեյն Միտցերի և Յակուբ Յանովսկու վերլուծությունների, ովքեր փաստագրել և դասակարգել են կողմերի

տրանսպորտային միջոցների կորուստները՝ հիմնվելով երկու կողմերի հրապարակած տեսողական կադրերի վրա՝ խուսափելով նույն ոչնչացված տեխնիկան մեկից ավելի անգամ հաշվելուց: Ստեյն Միտցերը և Յակուբ Յանովսկին ներկայացնում են Oryx-ը կամ Oryxspioenkop-ը հոլանդական պաշտպանական վերլուծական և ռազմական հետազոտությունների կայքը, որը տեղեկատվություն է հավաքում բաց աղբյուրներից: Լուրջ ռեսուրս է Bellingcat («Bellingcat», ոճավորված որպես bell¿ngcat) առցանց հրատարակությունը, որը հիմնադրվել է 2014 թվականի հուլիսին բրիտանացի լրագրող և բլոգեր Էլիոթ Հիգինսի կողմից և զբաղվում է պատերազմական գոտիների վերաբերյալ հետաքննող լրագրությամբ՝ օգտագործելով բաց կոդով տվյալների վերլուծություն: Ռազմավարական և միջազգային հետազոտությունների ամերիկյան կենտրոնը (CSIS)՝ պաշտպանության, անվտանգության քաղաքականության և միջազգային հարաբերությունների վերաբերյալ ամենահեղինակավոր հետազոտական կենտրոններից է: Կազմակերպությունը հիմնադրվել է 1962 թվականին Ջորջթաունի համալսարանում: Ռուսական փորձագիտական վերլուծական «think tank» (անգլերեն «ուղեղի

վստահություն») կենտրոններից՝ լուրջ աշխատանք է կատարել Ազգային հետազոտական համալսարանի Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի Միջերկրական հետազոտությունների կենտրոնը, ՌԴ ԱԳՆ Միջազգային հարաբերությունների ինստիտուտի (ՄԳԻՄՕ) Ռազմաքաղաքական հետազոտությունների կենտրոնը, «Ռազմաքաղաքական վերլուծություն» ինտերնետ կայքը, ամենամեծ ռազմական վերլուծական կայքերից՝ Los Tarmour-ը, որի հետազոտությունները հիմնականում նվիրված են 20-21-րդ դարերի տեղական հակամարտությունների ժամանակ ռազմական տեխնիկայի կորստին: Լուրջ ռեսուրսներ են Միջազգային քաղաքականության կենտրոնի (CIP) «Security Assistance Monitor» վերլուծական կենտրոնը և Action on Armed Violence (AOAV) բրիտանական բարեգործական կազմակերպությունը: Նշենք, որ հեղինակիս հավաքած և մշակած մեծածավալ նյութը կարող է ներկայացվել ընթերցողի ուշադրությանը միայն հոդվածների շարքի ձևաչափով՝ պահպանելով ժամանակագրության սկզբունքը:

Այսպիսով՝ Ադրբեջանը և Արցախը ավելի քան երեք տասնամյակ ներքաշված են Արցախի շուրջ բուռն և կատաղի էթնիկական հակամարտության մեջ, որում ներգրավված է եղել և Հայաստանը:

Հակամարտությունը հանգեցրել է երկու լայնամասշտաբ պատերազմների՝ 1992-94 և 2020 թվականներին, և սահմանային բախումների, որոնցից ամենալուրջը 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմն էր: Սրա հետևանքով Ադրբեջանն ու Հայաստանը հայտնվեցին աշխարհի ամենառազմականացված երկրների շարքում: Բոնների Կոնվերսիայի միջազգային կենտրոնի 2019 թվականի զեկույցում Հայաստանը և Ադրբեջանը դասվել են աշխարհի ամենառազմականացված երկրների ցանկում՝ համապատասխանաբար 3-րդ և 10-րդ տեղերում: Միևնույն ժամանակ, Արցախը աշխարհի ամենառազմականացված տարածքներից մեկն էր: Շուրջ երեք տասնամյակ Հայաստանն ու Ադրբեջանը զինվել են՝ մեծ քանակությամբ զենք գնելով մի շարք երկրներից:

Խորհրդային ժառանգություն և նոր մատակարարներ

Երկու երկրներն էլ ԽՍՀՄ փլուզումից հետո ժառանգել են իրենց տարածքում առկա խորհրդային ռազմական ակտիվները: Ադրբեջանը տեխնիկայի առումով ի սկզբանե առավելություն ուներ հայկական կողմի նկատմամբ: Օրինակ՝ Ադրբեջանն ուներ 436 տանկ Հայաստանը՝ 77, հետևակի 558 մարտական մեքենա (IFV՝ հետագայում լատինատառ կօգտագործվեն զինատեսակների միջազգային դասակարգման հապավումները)՝ հայկական 150-ի դիմաց, 389 զրահափոխադրիչ (APC)՝ 39-ի դիմաց, 388 միավոր հրետանի՝ 160-ի դիմաց, 63 ռազմական ինքնաթիռ՝ երեքի դեմ: Հայաստանը գերակայություն ուներ միայն ուղղաթիռների քանակով՝ 13-ը Ադրբեջանի 8-ի դիմաց:

Հայաստանին և Ադրբեջանին սպառազինություն մատակարարողների ամբողջական ցանկը կարող է երբեք էլ հայտնի չլինել, սակայն տարբեր բաց աղբյուրներում առկա տվյալների հիման վրա կազմվել է երկու երկրների կողմից անկախությունից ի վեր ձեռք բերված զենքերի համապարփակ ցուցակը: Հիմնական աղբյուրը Ստոկհոլմի Խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) առևտրային ռեգիստրն է, որն անկախ միջազգային ինստիտուտ է, որի նյութերը նվիրված են հակամարտությունների, սպառազինությունների, սպառազինությունների վերահսկման և զինաթափման հետազոտություններին:

Զենքի մատակարարումներ Ադրբեջանին

Ի տարբերություն Հայաստանի, որը լրջորեն կախման մեջ էր ռուսական զենքի մատակարարումներից և ռուսների «բարեհաճությունից», Ադրբեջանն ի սկզբանե ուներ սպառազինությունների առևտրի դիվերսիֆիկացված շուկա: Նրա հիմնական մատակարարներն են եղել և մնում Ռուսաստանն ու Իսրայելը: Ադրբեջանը զգալի քանակությամբ զենք է գնել Ուկրաինայից, Բելառուսից, Թուրքիայից և մի շարք այլ երկրներից: Ռուսաստանը եղել է Ադրբեջանի զենքի առևտրի հիմնական գործընկերը մինչև 2013-2014 թվականները: Ըստ SIPRI-ի՝ 2009-2013 թվականներին այն կազմել է Ադրբեջան զենքի ներմուծման 80%-ը և 2015-2019 թվականներին՝ 31%-ը: SIPRI տվյալների բազան ցույց է

տալիս, որ Ադրբեջանը սկսել է զենք գնել Ռուսաստանից 2007 թվականից սկսած: 2007-2014 թվականներին Ռուսաստանը Ադրբեջանին մատակարարել է 62 Տ-72 տանկ և 70 ԲՏՌ - 80 հետևակի մարտական մեքենա (IFV), Ադրբեջանը ռուսներից ստացել է 100 «Կորնետ» հակատանկային հրթիռ: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել էր, որ «Ռուսաստանի հետ ռազմական և տեխնիկական համագործակցությունը գնահատվում է 4 միլիարդ դոլար»: 2011 թվականին Ռուսաստանը 300 միլիոն դոլարով Ադրբեջանին վաճառել է երկու **Ս-300** «Ֆավորիտ», զենիթահրթիռային համալիր (ԶՀՀ), որոնք ունակ են խոցելու գերցածրից մինչև գերբարձր բարձրություններում թռչող նշանակետեր: Ադրբեջանը նաև գնել է 360 միլիոն դոլար արժողությամբ 24 ՄԻ-24 մարտական ուղղաթիռ: Ադրբեջանը ՌԴ-ից ձեռք է բերել 18 «Մստա» ինքնագնաց հաուբից և 18 «Վենա» ինքնագնաց ականանետային համակարգեր: Ռուսաստանը Ադրբեջանին նաև մատակարարել է մեծ քանակությամբ հակատանկային հրթիռներ, այդ թվում՝ 1000 «Բաստիոն» հրթիռ, և 800 հրթիռ «Խրիզանտեմա-Ս» տանկային կործանիչների համար: Ռուսաստանը նաև Ադրբեջանին մատակարարել է 100 միավոր Տ-90 տանկ, 118 ԲՄՊ-3, 18 «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր և 36 SOU-1Ա (ռուս.՝ ТОС-1А), համազարկային կրակի՝ ծանր հրանետային համակարգ (ԾՀՀ): Ադրբեջանին մատակարարվել է երկու «Բուկ» համազորային թրթուրավոր ինքնագնաց համակարգ և 200 հրթիռ այդ համակարգերի համար, ինչպես նաև 200 «Իգլա-Ս»-ն փոքր հեռահարության դյուրակիր զենիթահրթիռային համալիր և 1000 հրթիռ դրանց համար:

Հիշեցնենք, որ շատ վստահելի SIPRI շվեդական վերլուծական կենտրոնը գործում է 1966-ից, մասնագիտացած է հակամարտությունների և խաղաղության հետազոտության մեջ, ուսումնասիրում է աշխարհում զենք ու զինամթերքի արտադրությունն ու տեղաշարժը և հրապարակում վիճակագրական տվյալներ տարբեր երկրների միջև զենքի առևտրի վերաբերյալ: Կենտրոնը տվյալները վերցնում է բաց աղբյուրներից՝ պաշտոնական և ոչ պաշտոնական: SIPRI-ի հրապարակած տվյալները կարող են ամբողջությամբ ճշգրիտ չլինել, քանի որ զենքի վերաբերյալ գործարքները կարող են տեղի ունենալ նաև գաղտնի:

2000-ականների կեսերից, և հատկապես 2010-ականներից Իսրայելը դարձավ Ադրբեջանին զենքի հիմնական մատակարարը: 2016 թվականին Ալիևը պնդում էր, որ Ադրբեջանը Իսրայելից 4,85 միլիարդ դոլարի պաշտպանական տեխնիկա է գնել: Ըստ մեկ այլ զեկույցի՝ Իսրայելը Առաջին Արցախյան պատերազմի ժամանակ Ադրբեջանին մատակարարել է դյուրակիր հակաօդային պաշտպանության Stinger համակարգեր: SIRPI-ի տվյալները ցույց են տալիս, որ Ադրբեջանը 2013-ից 2017 թվականներին զենքի իր ներմուծման 30%-ը ստացել է Իսրայելից, իսկ 2015-2019 թվականներին այն հասել է 60%-ի: Այսպիսով՝ SIPRI տվյալներով 2005-ից մինչև 2020 թվականը Ադրբեջանն Իսրայելից գնել է 6 միավոր LYNX («Կոտեշ») համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, որը մոտ 2019 թվականի օգոստոսին վերանվանվել է՝ PULS (ճշգրիտ և համընդհանուր գործարկման համակարգ), և 50 EXTRA հրթիռ, որը դասվում է «ցամաք-ցամաք» հրթիռների շարքին: Այս զինատեսակների արտադրողն իսրայելական Israel Military Industries ընկերությունն է: Պատվերի տարվա և քանակի վերաբերյալ ինստիտուտը նշում է, որ սա գուցե ճշգրիտ թիվ չէ:

2014-ին Ադրբեջանական AzTV հեռուստաընկերությունը ցուցադրել էր Ադրբեջանի ԶՈՒ Lynx-ի գործարկման կադրերը: Իսրայելը Ադրբեջանին մատակարարել է մի շարք անօդաչու թռչող սարքեր, որոնք սովորաբար կոչվում են թափառող զինամթերք («կամիկաձե» անօդաչու թռչող սարքեր): Իսրայելը Ադրբեջանին 14 Aerostar անօդաչու թռչող սարք է մատակարարել: Ադրբեջանը ստացել է տասը Hermes-450 ԱԹՍ: Քանակի վերաբերյալ կենտրոնը նշում է, որ տեղեկությունը գուցե և ճիշտ չէ: Hermes-450-ի միայն ինքնաթիռը գնահատվում է շուրջ 2 մլն դոլար, իսկ այն սպասարկող վերգետնյա համակարգերը ներառյալ՝ մոտ 10 մլն դոլար: Առավելագույն արագությունը 176 կմ/ժ է, տևողությունը՝ մինչև 14 ժամ: Բացի սրանից, Իսրայելից Ադրբեջանը գնել է հինգական Heron և Searcher, տասը Orbiter-3, երկու Hermes-900, 80 Orbiter-1K, 50 Harops և 100 Skystrikers ԱԹՍ-ներ: Ադրբեջա-

նը 2008 թվականին ստացել է հինգ իսրայելական 155 մմ ինքնագնաց հրետանային կայանք՝ հիմնված Tatra T815 VVN 6x6 թափքի վրա: 2010-2011 թվականներին Ադրբեջանը գնել է տասը CARDOM ինքնագնաց ականանետային համակարգեր և 2009-2010 թվականներին տասը Sufa զրահամեքենա: Ադրբեջանը 2018 թվականին ձեռք է բերել չորս LORA MRL և 50 LORA կառավարվող «երկիր-երկիր» հրթիռ:

2008-ին գնվել են նաև հինգ ATMOS-2000 ինքնագնաց հրետանային կայանք, տասը Sufa տեսակի զրահապատ մեքենա, 100 միավոր Spike-MR բազմաֆունկցիոնալ հակատանկային հրթիռային համակարգ (որը 2016 թ. ավելացել է 250-ով), տասը CARDOM SP ականանետային հրետանի: Քանակի վերաբերյալ SIPRI-ն կրկին նշում է, որ տվյալները գուցե ճշգրիտ չեն: Լուրջ ձեռքբերում է Barak MX հակաօդային պաշտպանության համակարգը, որի գնման մասին խոսվում էր նաև 2023 թվականին: 40 միավոր Barak-LRAD զենիթահրթիռային համալիր (ՋՀՀ), որը առաքվել է միայն 2016-ին: Կա նաև դրա փորձարկման տեսանյութը: 2016-ին առաքվել է նաև 40 միավոր Barak-ER: 2013-ին գնվել են վեցական Shaldag և OPV-62 արագ հարձակման նավեր, 100 միավոր LAHAT հակատանկային ղեկավարվող հրթիռներ, որոնց լուսանկարը հրապարակված է: Նույն տարում Ադրբեջանը ձեռք է բերել նաև 250 Spike-NLOS տեսակի հրթիռ, որն առաքվել է 2018-ին: 2015-ին գնվել է 100 SandCat զրահամեքենա, դրանցից մեկի խոցման մասին ՀՀ ՊՆ-ն հայտնել էր 2020-ի հոկտեմբերին: Նույն տարում Ադրբեջանը գնել է նաև մեկ տասնյակ SandCat Spike-LR տեսակի ռազմական մեքենա:

2018 թվականին Ադրբեջանը ստացել է SPEAR տասը ականանետ, որոնք նույնպես տեղադրված են SandCats-ի վրա: 2016 թվականին Իսրայելը մատակարարել է մեկ Barak-LR SAM համակարգ՝ 80 Barak-8 հրթիռներով և 100 LAHAT հակատանկային կառավարվող հրթիռներով: 2016-ին գնվել է 100 միավոր Orbiter-1K «կամիկաձե» տեսակի ԱԹՍ, որն առաքվել է 2020-ին և տասը Orbiter-3 բազմակի օգտագործման, հետախուզական ԱԹՍ: Երկուսն էլ Aeronautics Defense Systems ընկերության արտադրանքներն են:

2009-ին Wikileakes-ը հրապարակել էր պաշտոնական Բաքվի և Թել Ավիվի գաղտնի նամակագրությունը, որտեղ խոսվում էր Իսրայելից ստացվող որակյալ սպառազինության մասին, որն Ադրբեջանը չի կարողանում ձեռք բերել ԱՄՆ-ից և Եվրոպայից:

2016-ի ապրիլին սկսած բախումների ժամանակ ադրբեջանական կողմը կիրառեց մարտական անօդաչու թռչող սարքեր: Արցախի պաշտպանության բանակը հրապարակել էր իսրայելական արտադրության խոցված ThunderB ԱԹՍ-ի լուսանկար:

Այս սարքը կշռում է մոտ 28 կգ, կառավարման հեռահարությունը 150 կմ է, իսկ թռիչքի տևողությունը 24 ժամ, դրա կառավարման համար պահանջվում է 2-3 մարդ: Իսրայելը նաև սարքավորումներ է մատակարարել Ադրբեջանի ռազմածովային ուժերին, որոնք գործում են Կասպից ծովում: 2014-2018 թվականներին Ադրբեջանը ստացել է վեց OPV-62 և Shaldag արագ հարձակման նավ (FAC) և 250 Spike-NLOS հրթիռներ ռազմանավերի համար: 2014-2016 թվականներին Իսրայելը մատակարարել է երկու EL/M-2288 AD-STAR ռազմածովային ռադար: 2020 թվականի հոկտեմբերին իսրայելական առաջատար «Հաարեց» թերթը հայտնել էր, որ Իսրայելը շարունակում է զենք մատակարարել Ադրբեջանին: Ուկրաինան եղել է Ադրբեջանի զենքի առևտրի առաջին գործընկերներից մեկը: 1993-1994 թվականներին, Առաջին Արցախյան պատերազմի վերջին փուլում, Ուկրաինան մատակարարել է 150 S-55 տանկ: Ուկրաինան մատակարարել է նաև ՄիԳ-21 կործանիչներ, ինչը բացահայտվել է հայերի կողմից գերեվարված ուկրաինացի վարձկան օդաչուի կողմից: SIPRI տվյալների բազան ցույց է տալիս, որ Ուկրաինան Ադրբեջանին մեծ քանակությամբ սպառազինություն է մատակարարել 2002-2013 թվականներին: Գրեթե բոլորը եղել են օգտագործված խորհրդային սարքավորումներ՝ 55 Դ-30 հաուբից, 45 S-72 տանկ, 12 «Սմերչ» և մեծ քանակությամբ հրթիռներ, ԲՄՊ-1, ԲՏՌ-3, 18 ԲՏՌ-80 և 150 ԲՏՌ-70 զրահամեքենա:

Ուկրաինան Ադրբեջանին մատակարարել է 85 Մ-43 ականանետ, 54 2U1 «Գվոզդիկա», երեք 2U7 «Պիոն» և 16 2U3 «Ակացիա»:

Խորհրդային արտադրության զենքի մեծ զինանոց ունեցող հետխորհրդային մեկ այլ երկիր՝ Բելա-

ռուսը, որը նաև Հայաստանի պաշտոնական դաշնակիցն է՝ Ռուսաստանի գլխավորած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում (ՀԱՊԿ), 2006 թվականից զգալի քանակությամբ զենք է մատակարարել Ադրբեջանին 153 S-72 տանկ, 12 2U7 Պիոն ինքնագնաց հրացաններ, 30 միավոր Դ-30 և 26 Գիացինտ-Բ հաուբիցներ: Ադրբեջանը Բելառուսից ձեռք է բերել 11 Սու-25 ինքնաթիռ: Բելառուսի կողմից Ադրբեջանին սպառազինության ամենանշանակալի վաճառքը «Պոլոնեզ» բելառուսական արտադրության համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի վաճառքն էր: Համակարգը նախատեսված է բաց և փակ կենդանի ուժի, ոչ զրահապատ և զրահապատ ռազմական տեխնիկայի և այլ օբյեկտների գերճշգրիտ ոչնչացման համար: Կրակի հեռավորությունն ի սկզբանե կազմել է 200 կմ: Բելառուսը 2018-2019 թվականներին Ադրբեջանին մատակարարել է ևս տասը «Պոլոնեզ» համակարգ: Հայ ռազմական վերլուծաբան Լեոնիդ Ներսիսյանի խոսքով, Բելառուսը «Պոլոնեզ» հրթիռներ է մատակարարել Ադրբեջանին 2020 թվականի հոկտեմբերին՝ Արցախյան երկրորդ պատերազմի ամենաթեժ պահին:

Չնայած Թուրքիան եղել է Ադրբեջանի ամենամոտ քաղաքական դաշնակիցը 1990-ականների սկզբից ի վեր, այն սպառազինությունների նշանակալից մատակարար չի դարձել միայն 2010-ականներին: Ղարաբաղյան Առաջին պատերազմի ժամանակ Թուրքիան միայն «գաղտնի ուղիներով սահմանափակ քանակությամբ ռազմական մատակարարումներ» էր տրամադրում,- գրում է թուրք վերլուծաբան Սաբրի Սայարը: 2000 թվականին Թուրքիան կատարեց իր առաջին վաճառքը, որը գրանցված էր SIPRI տվյալների բազայում, երբ Ադրբեջանին մատակարարեց AB-25 պարեկային նավ: 2010-2011 թվականներին Ադրբեջանը գնել է 72 զրահատեխնիկա (ԱՊՎ), այդ թվում՝ 35 «Կոբրա» և 37 «Շորլանդ»: Թուրքիան մատակարարել է 90 ինքնագնաց MRL, այդ թվում՝ 30 T-107, 40 T-122 Sakaryas և 20 TRG-300 Kasirgas հրթիռային կայանքներ: Ադրբեջանը ստացել է 108 կառավարվող հրթիռ S-122-ների և S-300-ների համար: 2018-2019 թվականներին Թուրքիան «օդ-երկիր» տասը SOM-B1 հրթիռ է մատակարարել: Ըստ կառավարամետ Daily Sabah թերթի սյունակագիր Մերվե Շեբնեմ Օրուչի, Թուրքիան նաև մինչև 2020 թվականի հուլիսը մատակարարել է Altay տանկեր և S129 ԱՏԱԿ ուղղաթիռներ, սակայն այս տեղեկությունը մնում է չհաստատված: 2020 թվականի Արցախյան պատերազմի ժամանակ Ադրբեջանը գործի է դրել Bayraktar TB2 անօդաչու թռչող սարքեր, որոնք հավանաբար շահագործվել են թուրքական անձնակազմի կողմից: Անհասկանալի է մնում՝ Թուրքիան այդ անօդաչու թռչող սարքերը մատակարարե՞լ է Ադրբեջանին, թե՞ պարզապես «փոխառել» է դրանք պատերազմի ընթացքում: Նույնը վերաբերում է թուրքական F-16 կործանիչներին, որոնք, ըստ 2020 թվականի հոկտեմբերին արված արբանյակային պատկերների, տեղակայվել են նախ՝ Գյանջայի օդանավակայանում, այնուհետև՝ Ադրբեջանի Գաբալայի ավիաբազայում:

Ադրբեջանը Հարավային Աֆրիկայից ձեռք է բերել զգալի թվով զրահափոխադրիչներ (ԱՊԿ): 2009-2015 թվականներին Հարավային Աֆրիկան մատակարարել է 60 Matador և 85 Marauder զրահամեքենաներ, որոնք հավաքվել են Ադրբեջանում: 2009-2010 թվականներին Հարավային Աֆրիկան Ուկրաինայից տասը աշտարակ է մատակարարել Մի-24 ուղղաթիռների (ըստ ՆԱՏՕ-ի դասակարգման՝ Hind - «Doe» խորհրդային/ռուսական հարվածային ուղղաթիռ է: Ոչ պաշտոնական անվանումն է «Կոկորդիլոս») արդիականացման համար: Միացյալ Նահանգները 2009-2014 թվականներին մատակարարել է 140 դիզելային շարժիչ այս APC-ների համար:

2002 թվականին Ադրբեջանը Սլովակիայից գնել է մեկ T-72 տանկ: Ավելի զգալի մատակարարում է տեղի ունեցել 2017-2018 թվականներին, երբ Սլովակիան Ադրբեջանին վաճառեց 36 DANA հաուբից: Չեխիան 2017-2018 թվականներին վաճառել է 30 RM-70 (RM-70 (չեխ. raketomet vzor. 1970 - 1970 թվականի հրթիռային կայանքի մոդել) բազմակի արձակման հրթիռային համակարգ (MLRS), որն արտադրվել է Չեխոսլովակիայում և Խորհրդային ԲՄ-21 «Գրադ»-ի չեխոսլովակյան տարբերակն է: ՆԱՏՕ-ի դասակարգման համաձայն՝ M-1972 Ադրբեջան առաքվել են Սլովակիայի և Իսրայելի միջոցով: Հետաքննությունը պարզել է, որ 54 Tatra 815 բեռնատար նախ՝ ուղարկվել է Իսրայել, այնուհետև վերադարձվել՝ Սլովակիա, որտեղ դրանք վերածվել են ֆունկցիոնալ Dana հաուբիցների և RM-70 արձակման կայանների, այնուհետև Իսրայելով արտահանվել Ադրբեջան՝ շրջանցելու ԵԱՀԿ-ի կողմից Ադրբեջանի զենքի էմբարգոն: Չեխիայի Սենատի նախագահ Միլան Շտեխը 2017 թվականին Հայաստան կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ Չեխիայի իշխանությունները չեն համաձայնել չեխական զենքի արտահանմանը Ադրբեջան:

Ադրբեջանը 2002 թվականին Բուլղարիայից գնել է խորհրդային արտադրության 36 օգտագործված Մ-46 քարշակային հրացան, իսկ 2019 թվականին

Իսպանիայից՝ Lanza-LTR օդային որոնման ռադար: Բուլղարական ռազմական և պաշտպանական նորությունների հետազոտական և վերլուծական «Bulgarian Military» հարթակը՝ «Ադրբեջանի սև շուկա. որտե՞ղ են ավարտվում արևմտյան զենքերը» հոդվածով անդրադարձավ Ադրբեջանի կողմից սև շուկայում զենք վաճառելու փաստին՝ փորձելով հասկանալ, թե որքանով է նպատակահարմար արևմտյան երկրների կողմից Ադրբեջանին զենք վաճառելը և որտեղ և ինչ նպատակներով կարող է օգտագործվել: Շատ վերլուծաբաններ հիմնավոր կասկածներ ունեն, որ Բաքուն զենք և զինամթերք է մատակարարել «Իսլամական պետության» զինյալներին Սիրիայի թեժ կետերում: Բուլղարացի լրագրող Դիլյանա Գայտանջիևան հրապարակել է մի հոդված, որը պարունակում է Anonymous Bulgaria հաքերային խմբի կողմից ձեռք բերված գաղտնի տեղեկատվություն, ըստ որի, ադրբեջանական Silk Way Airlines-ը զենք է տեղափոխել Սաուդյան Արաբիա, իսկ այս երկրից զենք է փոխանցվել Եմենի սաուդամետ ուժերին, սիրիացի ջիհադիստներին, Մալիին, Բուրկինա Ֆասո և Աֆղանստան: Հատկանշական է, որ այս տեսակետը պաշտպանում են նաև ադրբեջանցի ընդդիմադիր վերլուծաբանները: Timeturk-ի փոխանցմամբ՝ Ադրբեջանում ստեղծվել է «Մահմուտ» զինյալ խմբավորում, որը մասնակցում է Սիրիայում Բաշար ալ Ասադի դեմ ուղղված ռազմական գործողություններին: Այդպիսի խմբավորումների կողմից Ադրբեջանից ձեռք բերված զենքի մեծ մասը, ոչ առանց թուրքական կողմի աջակցության, ընկնում է «Իսլամական պետության» ձեռքը և այդպիսով տարածվում է աշխարհով մեկ:

Հարց է ծագում՝ արդյո՞ք Միացյալ Նահանգներին անհրաժեշտ են օրենքներ, որոնք օրինականացնում են ավտորիտար ռեժիմներին զենքի մատակարարումը: Ամերիկացի պատմաբան, հակապատերազմական վերլուծական կենտրոնի խմբագիր Դենիել Լարիսոնը համոզված է, որ ԱՄՆ-ին դա պետք չէ: Նա կոչ է արել Վաշինգտոնին իրավական մեխանիզմներ մշակել՝ արգելելու ՆԱՏՕ-ի զենքի մատակարարումն Ադրբեջանին, քանի որ Բաքվին տրամադրվող ռազմական օգնությունն իրական վտանգ է ներկայացնում Կովկասի իրավիճակի համար: Այսինքն, եթե Միացյալ Նահանգները և եվրոպական երկրներն իսկապես ցանկանում են արդարացնել արտաքին քաղաքականության և միջազգային ահաբեկչության դեմ պայքարում մարդու իրավունքների պաշտպանության իրենց հանձնառությունը, նրանք պետք է սկսեն բարեփոխել իրենց օրենսդրական համակարգերը, մասնավորապես, դադարեցնել ռազմական օգնությունը Ադրբեջանին:

Պլատֆորմի նյութում նշվում է նաև այն փաստը, որ 2020 թվականին արցախյան պատերազմի ժամանակ Թուրքիայի աջակցած սիրիական զինյալ խմբավորման անդամները կռվել են Ադրբեջանի կողմից: Օգտագործելով սիրիացի մարտիկներին,

որոնք սերտորեն կապված են Արցախում «Իսլամական պետության» և «Ալ-Քաիդա» ահաբեկչական խմբավորումների հետ, Ադրբեջանը ձգտում էր նվազագույնի հասցնել իր կորուստները,- ասում է Վաշինգտոնի CNA վերլուծական կենտրոնի ռազմական փորձագետ Մայքլ Քոֆմանը: Վաշինգտոնի Գլոբալ քաղաքականության կենտրոնի փորձագետ Էլիզաբեթ Ցուրկովան, ով հարցազրույց է անցկացրել հակամարտության մեջ ներգրավված տասնյակ սիրիացիների հետ, ասում է՝ նրանց օգտագործել են որպես «թնդանոթի միս» Արցախում վերջին պատերազմի ժամանակ, հատկապես հարավում գործողությունների ժամանակ: Կասկածից վեր է, որ թուրքական իշխանությունները՝ Ադրբեջանի հետ միասին, բացահայտ օգտագործելով ջիհադիստներին, մարտահրավեր են նետել միջազգային հանրությանը: Բաքուն դժվար թե կարողանա իր վարկը մաքրել ահաբեկիչների հետ համագործակցության ստվերից, համագործակցության՝ Լեռնային Ղարաբաղը գրավելու համար: Իսկ Հյուսիսատլանտյան դաշինքում Թուրքիայի գործընկերները, իրենց հերթին, պետք է հաշվի առնեն Անկարայի հետ հետագա ռազմատեխնիկական համագործակցության հնարավորությունը, հատկապես հունիսին ռազմական համագործակցության մասին ադրբեջանա-թուրքական համաձայնագրի ստորագրման լույսի ներքո, որն ընդլայնում է Բաքվի մուտքը դեպի ՆԱՏՕ-ի ժամանակակից զենքեր: Ո՞վ գիտի, թե ում դեմ այն կարող է օգտագործվել վաղը:

Ադրբեջանն ավելի քիչ քանակությամբ զինտեխնիկա է ձեռք բերել այլ երկրներից: 2002 թվականին Վրաստանը 6 Սու-25 ինքնաթիռ է մատակարարել Ադրբեջանին: Թեև Պակիստանը միշտ էլ Ադրբեջանի հավատարիմ աջակիցն է եղել, սակայն Ադրբեջանի դիվանագիտության բերումով ադրբեջանա-պակիստանյան զենքի առևտուրը սահմանափակ է: Պակիստանը 2018 թվականին մատակարարել է տասը MFI-17 Super Mushshak ուսումնական ինքնաթիռ: Ըստ SIPRI տվյալների բազայի՝ Ադրբեջանին անհայտ մատակարարից մատակարարվել է երկու օգտագործված Bell 412 ուղղաթիռ: Թեև SIPRI-ի տվյալների բազան չի նշում Սերբիայից Ադրբեջան զենքի տեղափոխման

մասին, Սերբիայի նախագահ Ալեքսանդր Վուչիչը 2020 թվականի օգոստոսին հայտարարեց, որ իր երկիրը «տասն անգամ ավելի շատ զենք է վաճառել Ադրբեջանին», քան Հայաստանին: Եվրամիության, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի կողմից հրապարակված զենքի փոխանցման պաշտոնական տվյալները վկայում են զենքի վաճառքի մասին թե՛ Հայաստանին, թե՛ Ադրբեջանին:

Միացյալ Նահանգներ

ԱՄՆ պաշտպանության նախարարության Պաշտպանության անվտանգության համագործակցության գործակալության (DSCA) կողմից հրապարակված 2020 թվականի պատմական վաճառքի գրքում հրապարակված վերջին տվյալների համաձայն՝ ԱՄՆ-ը գրեթե հավասար քանակությամբ զինտեխնիկա է վաճառել Հայաստանին և Ադրբեջանին: Տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանը ստացել է 51,1 մլն դոլարի ռազմական միջոցներ, իսկ Ադրբեջանը՝ 56,2 մլն դոլարի: Այս վաճառքները ԱՄՆ կառավարության արտաքին ռազմական վաճառքի (FMS) ծրագրի շրջանակում են, որը լիազորված է Զենքի արտահանման վերահսկման ակտով (AECA) և իրականացվում է ԱՄՆ կառավարության և լիազորված ստացող կառավարությունների միջև պաշտոնական պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա: FMS ծրագիրը «ներառում է կառավարությունից կառավարություն պաշտպանական ապրանքների կամ ծառայությունների վաճառքը պաշտպանության նախարարության (DOD) ներկայիս բաժնետոմսերից կամ DOD-ի կառավարվող պայմանագրերից»: Միջազգային քաղաքականության կենտրոնի (CIP) վերլուծական կենտրոնի «Security Assistance Monitor»-ի տվյալներով՝ 2000 թվականից ի վեր ԱՄՆ-ն անվտանգության ոլորտի համար զգալի օգնություն (ռազմական օգնություն) է տրամադրել երկու երկրներին: Հայաստանը ստացել է 210 միլիոն դոլարի, իսկ Ադրբեջանը՝ ավելի քան երկու անգամ շատ՝ ավելի քան 418 միլիոն դոլարի: Համեմատության համար նշենք, որ այս երկու երկրների հարևան Վրաստանը ստացել է գրեթե 1,4 միլիարդ դոլարի:

Եվրոպական Միություն

ԵՄ-ն գործարկել է իր անդամ երկրներից զենքի արտահանման առցանց տվյալների բազան 2020 թվականի հոկտեմբերին: Այն ներառում է 2013-ից 2019 թվականները:

Ըստ տվյալների բազայի՝ ԵՄ անդամ երկրները Հայաստան են արտահանել 30,6 մլն եվրոյի սպառազինություն: 2013-2019 թվականներին Բուլղարիայից զենքի ներմուծումը (29,5 մլն եվրո) կազմում է ԵՄ ընդհանուր ծավալի ավելի քան 96%-ը: Լեհաստանն արտահանել է 0,9 միլիոն եվրո կամ ընդհանուրի 3%-ը, մինչդեռ այլ երկրներ արտահանել են շատ ավելի քիչ՝ Ֆինլանդիան՝ 25,000 եվրո, իսկ Ֆրանսիան՝ ընդամենը 4,150 եվրո: Բուլղարիայի արտահանման ավելի քան 90%-ը (26,8 մլն եվրո) կազմել են «զինամթերք և ապահովիչներ միացնող սարքեր և հատուկ նախագծված բաղադրիչներ», մինչդեռ մնացածը՝ «ռումբեր, տորպեդներ, հրթիռներ, այլ պայթուցիկ սարքեր և լիցքեր ու հարակից սարքավորումներ և պարագաներ» (2,2 միլիոն եվրո) և «20 մմ-ից պակաս տրամաչափով հարթափող զենքեր» (0,5 միլիոն եվրո): Լեհաստանի արտահանման կեսը (460,000 եվրո) եղել են «զրահապատ կամ պաշտպանիչ սարքավորումներ, կոնստրուկցիաներ և բաղադրիչներ»:

ԵՄ անդամ երկրները 2013-ից 2019 թվականներին տասն անգամ ավելի **շատ արտահանել են Ադրբեջան՝ մոտ 340 միլիոն եվրոյի:** Նույն ժամանակահատվածում ԵՄ անդամ երկրները 4,7 միլիարդ եվրո արժողությամբ արտահանման լիցենզիաներ են տրամադրել: Ադրբեջան զենքի արտահանման գրեթե 90%-ը կատարվել է ընդամենը երկու երկրից՝ Բուլղարիայից (151 մլն եվրո) և Ֆրանսիայից (148 մլն եվրո): Մնացածը եկել է Իսպանիայից (19,5 մլն եվրո), Չեխիայից (7,2 մլն եվրո), Ռումինիայից (5,3 մլն եվրո), Իտալիայից (2,6 մլն եվրո), Խորվաթիայից (2,6 մլն եվրո), Ավստրիայից (1 մլն եվրո) և Էստոնիայից (0,8 միլիոն եվրո): Ինչպես Հայաստանի դեպքում, Բուլղարիան հիմնականում արտահանել է «զինամթերք և ապահովիչներ տեղադրող սարքեր» Ադրբեջան՝ կազմելով երկու երկրների միջև զենքի վաճառքի գրեթե 94%-ը:

Տվյալների բազան չի նշում Ֆրանսիայի կողմից Ադրբեջան զենքի արտահանումը, սակայն կարելի է ենթադրել, որ գրեթե 150 միլիոն եվրո արժեցել է Spot 7 Earth դիտորդական արբանյակը, որը Ադրբեջանը գնել է Airbus Defense and Space-ից 2014 թվականի դեկտեմբերին: Արբանյակը վերանվանվել է Azersky և կառավարվում է պետական «Ազերկոսմոս» գործակալության կողմից: Իսպանիայից 19,5 միլիոն եվրոյի զենքի արտահանումը տեղի է ունեցել 2019 թվականին, երբ նա Ադրբեջանին վաճառեց «պատկերազարդման կամ հակազդեցության սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված են ռազմական օգտագործման համար և հատուկ նախագծված բաղադրիչներ»: Սա հավանաբար SIPRI տվյալների բազայում հայտնաբերված Lanza-LTR օդային որոնման ռադարի արժեքն է: Չեխիայից Ադրբեջանը հիմնականում ներմուծել է «օդային մեքենաներից ավելի թեթև

ինքնաթիռներ, անօդաչու թռչող սարքեր, օդանավերի շարժիչներ և սարքավորումներ, հարակից սարքավորումներ և բաղադրիչներ», որոնք կազմում են ընդհանուրի ավելի քան 70%-ը: Ռումինիան վաճառել է ինքնաթիռներ (33%), կրակի կառավարման և դրա հետ կապված ազդարարման և նախազգուշացման սարքավորումներ (30%), 20 մմ կամ պակաս տրամաչափով հարթափող զենքեր (15%) և «իրերի մշակման, արտադրության կամ օգտագործման տեխնոլոգիա. վերահսկվում է ԵՄ Միասնական ռազմական ցուցակում» (15%):

Միացյալ թագավորություն

2020 թվականի հոկտեմբերին Action on Armed Violence (AOAV) բրիտանական բարեգործական կազմակերպությունը հրապարակեց Միացյալ Թագավորության կառավարության տվյալները վերջին տասնամյակում Հայաստանին և Ադրբեջանին զենք վաճառելու վերաբերյալ: 2010 թվականից Միացյալ Թագավորության միջազգային առևտրի դեպարտամենտը հավանություն է տվել «անվտանգության արտահանման» վաճառքին՝ 86 միլիոն ֆունտ ստերլինգով Ադրբեջան և ընդամենը 4,2 միլիոն ֆունտ ստերլինգով Հայաստան: Մեծ Բրիտանիան Ադրբեջան է արտահանել «օդային թիրախային սարքավորումներ, գրոհային հրացաններ, գնդացիրներ, ատրճանակներ, փոքր զինամթերք և թիրախային սարքավորումներ», իսկ Հայաստան՝ «ռազմական մեքենաներ, խլացուցիչներ և փոքր զինամթերք»:

Եզրակացություն

Հայաստանի ռազմական տեխնիկայի ճնշող մեծամասնությունը 1990-ականների սկզբից մատակարարվել է Ռուսաստանի կողմից: Ռուսաստանը նաև զգալի քանակությամբ սպառազինություն է մատակարարել Ադրբեջանին: Հայաստանը փոքր քանակությամբ զենք է գնել Չինաստանից և Հնդկաստանից. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում քիչ մասնաբաժին ունեցող մի շարք երկրներ վաճառել են երկու կողմերին ֆինանսական շահի համար: Դրանք ներառում են Ուկրաինան, Բելառուսը, Բուլղարիան, Սերբիան և Սլովակիան, ինչը հիմնականում վերաբերում է խորհրդային ժամանակաշրջանի օգտագործված սարքավորումներին: Ադրբեջանի գլխավոր մատակարարները, բացի Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից, հատկապես 2010-ականներից ի վեր եղել են Իսրայելը և Թուրքիան:

Հայաստան զենքի մատակարարումները

Վերանկախացումից ի վեր Ռուսաստանը մատակարարել է Հայաստանի սպառազինության ճնշող մեծամասնությունը: Հայաստանը սպառազինություն է ձեռք բերել միայն մի քանի այլ երկրներից, որոնցից շատերը մատակարարել են օգտագործված խորհրդային/ռուսական արտադրության զենքեր: Ըստ SIPRI-ի, դեռևս 2015-2019 թվականներին Հայաստանի զենքի ներմուծման մոտ 94%-ը բաժին է ընկել Ռուսաստանին: Ռուսաստանը Հայաստանին զենք սկսել է մատակարարել 1993-94 թվականներին՝ Առաջին Արցախյան պատերազմի երկրորդ փուլում: Ռուսական առաջին մատակարարումները ներառում էին 2Կ11 «Կոուգ» «երկիր-օդ» հրթիռային համակարգեր՝ 349 հրթիռներով և «Ֆագոտ» հակատանկային հրթիռային համակարգ, որը նախատեսված է անշարժ և շարժական զրահապատ նպատակակետերի, ինչպես նաև թեթև դաշտային կառույցների ու կրակակետերի խոցման համար՝ 945 հակատանկային հրթիռներով: Վերջիններս մատակարարվել են մինչև 1996 թվականը: Հայաստանը ստացել է նաև 9Մ33 40 հրթիռ 9Կ33 «Օսա» ՀՕՊ համակարգերի համար: Ռուսաստանը 1994-1996 թվականներին Հայաստանին մատակարարել է 84 Տ-72 տանկ: Ռուսաստանը Հայաստանին զգալի քանակությամբ սպառազինություն է տրամադրել առաջին պատերազմից հետո երկու տարում (1995-96 թթ.): Դրանք ներառել են 18 Դ-1, 18 Դ-20 և 36 Դ-30 հաուբիցներ, 18 ԲՄ-21 Գրադ բազմակի հրթիռային կայաններ, ութ 9Կ72 Էլբրուս՝ 24 հրթիռներով (խորհրդային 9Կ72 Էլբրուս բալիստիկ հրթիռն ավելի հայտնի է Արևմուտքում որպես «Սկադ» («Սկադ» համակարգերը նախատեսված են թշնամու կարևոր ռազմավարական օբյեկտները, ինչպիսիք են օդանավերի թռիչքադաշտերը, զորքերի մեծ կուտակումները խոցելու համար), 40 «Իգլա ՍԱՄ» արձակման կայան՝ 200 հրթիռներով, չորս ԲՐԴՄ-2 տանկային կործանիչներ և 50 «ԲՄՊ-2» հետևակի մարտական մեքենաներ: 1996 թվականին պաշտոնյաների և մերձավոր դաշնակիցների նեղ շրջանակում ունեցած ելույթում Հայաստանի այն ժամանակվա պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հայտարարել էր, որ մինչև 1996 թվականը Հայաստանը երեք անգամ ավելի շատ զենք ուներ, քան ժառանգել էր Խորհրդային բանակից 1992 թվականին: Նա դա բացատրել է այն փաստով, որ Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը համոզել է Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովին Հայաստանում թողնել ռուսական բանակի երկու գնդերը, որոնց զինանոցում եղել են 905 երկաթուղային վագոն զենք և զինամթերք՝ Վրաստանի Խաշուրիում գտնվող նախկին խորհրդային բազայից: Սարգսյանի խոսքով,

1992-1996 թվականներին հայոց բանակի տանկերի թիվը 120-ից հասել է 300-ի: Ընդհանուր առմամբ, 1992-1996 թվականներին Ռուսաստանը Հայաստան է փոխանցել 1 միլիարդ դոլարի տեխնիկա:

Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք Հայաստանը 2004 թվականին Ռուսաստանից ստացավ ընդամենը երկու «Իլյուշին Իլ-76» տրանսպորտային ինքնաթիռ: Ռուսաստանը կրկին սկսեց մեծ քանակությամբ զենք մատակարարել Հայաստանին 2009 թվականից՝ Սերժ Սարգսյանի նախագահի պաշտոնը ստանձնելուց մեկ տարի անց: 2009-2010 թվականներին Հայաստանը ձեռք է բերել երկու Ս-300 **«Ֆավորիտ»** զենիթահրթիռային համալիրներ (ԶՀՀ)՝ 144 հրթիռով: Սրանք ունակ են խոցելու գերցածրից մինչև գերբարձր բարձրություններում թռչող նշանակետեր: Նշանակետերի խոցման հեռավորությունը կազմում է 150-ից 300 կմ կախված համակարգում կիրառվող տարրերի, մասնավորապես կիրառվող հրթիռների տեսակից: 2013 թվականին Ռուսաստանը մատակարարել է 200 «Իգլա» «երկիր-օդ» հրթիռ և ևս 200 հրթիռ՝ 2016 թվականին: 2016 թվականին Հայաստանը ձեռք է բերել «Իսկանդեր» չորս բալիստիկ հրթիռային համակարգեր՝ 25 հրթիռներով, որոնք Հայաստանի ամենահզոր հրթիռներն են մինչ օրս: 2014 թվականին Հայաստանը ռուսական տանկային մրցույթում շահել է Տ-90Տ տանկ, որը ստացել է 2016 թվականին: 2016-17 թվականներին Հայաստանը ձեռք է բերել նաև վեց «Սմերչ» բազմակի հրթիռային կայան, 200 «Վերբա» «երկիր-օդ» հրթիռ և 100 «Կորնետ» հակատանկային հրթիռ:

Նիկոլ Փաշինյանի իշխանության գալուց հետո Հայաստանը ձեռք բերեց ավելի ժամանակակից սպառազինություն, այդ թվում՝ երկու ՏՕՌ ՀՕՊ համակարգեր՝ 50 հրթիռներով և չորս Սու-30 կործանիչներ, որոնք մատակարարվել էին մինչև 2019 թվականը: 2018 թվականի հունիսին Փաշինյանը սելֆի էր հրապարակել Սու-30-ով, որն արդեն Երևանում էր: Երկուսն էլ հրապարակայնորեն ցուցադրվել են 2019 թվականի դեկտեմբերին: Սամվել Բաբայանը՝ Արցախի զինված ուժերի նախկին հրամանատարը և 2020 թվականի պատերազմի ժամանակ Արցախի Անվտանգության խորհրդի քարտուղարը, պնդում էր, որ հայկական կողմն ուներ վեց ՏՕՌ համակարգ, թեև այս պնդումը ենթակա չէ օբյեկտիվ ստուգման: 2020 թվականի պատերազմի ժամանակ Հայաստանը հավանաբար օգտագործել է ռուսական արտադրության Օրլան-10 անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ով է շահագործել այս անօդաչու սարքերը: Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ, պատերազմի տարիներին ՊՆ գլխավոր ռազմական տեսուչ Մովսես Հակոբյանը պնդում է, որ Ռուսաստանի մատակարարած «Պոլե-2» էլեկտրոնային պատերազմի համակարգերը չորս օր շարունակ խափանել են Ադրբեջանի անօդաչու թռչող սարքերի աշխատանքը: Կար նաև ենթադրություն, որ Ռուսաստանը մատակարարել է «Կրասուխա-4» EW համակարգեր, սակայն դա ևս մնում է չհաստատված: Չնայած հայտարարություններին, որ 2020-ի նոյեմբերից հետո Ռուսաստանը Հայաստանին զենք չի մատակարարել, 2022-ի հունվարին պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ զինված ուժերը համալրվել են ժամանակակից, բազմաֆունկցիոնալ նոր ուղղաթիռներով, որոնք նախատեսված են դեսանտային, կրակային, տրանսպորտային և սանիտարական խնդիրներ կատարելու համար:

Դրանք ռուսական արտադրության Մի-8ՄՏՎ-5 ուղղաթիռներ են, որոնք Մի-8 ուղղաթիռների ռազմական գործածության համար արդիականացված տարբերակներից են:

Ըստ Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI)-ի տվյալների՝ Հայաստանը Ռուսաստանից ձեռք է բերել այդպիսի չորս ուղղաթիռ: Միաժամանակ, դրանց վաճառքի տարի է նշվում 2020-ը, չնայած փաստացի առաքվել են 2022-ի սկզբին:

1999 թվականին Չինաստանը Հայաստանին վաճառեց չորս WM-80 բազմակի հրթիռային կայան, ինչը դարձավ Հայաստանի առաջին ոչ խորհրդային/ռուսական սպառազինության գնումը: Սա նաև Չինաստանի կողմից զենքի առաջին վաճառքն էր Հարավային Կովկասի երկրի: 2013 թվականին հայկական ռազմական աղբյուրը «Ազատություն» ռադիոկայանին հայտնեց, որ Հայաստանը Չինաստանից ձեռք է բերել AR1A բազմակի հրթիռային կայաններ: Դրանք ռուսական «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի չինական մոդիֆիկացիան են: Ռուսական վերլուծական կենտրոնի զեկույցի համաձայն՝ Չինաստանը 2011 թվականին Հայաստանին մատակարարել է վեց AR1A MRL:

2004 թվականին Հայաստանը Սլովակիայից գնել է տասն օգտագործված Սու-25 ինքնաթիռ՝ 8 միլիոն դոլարով: Հայաստանը 2004 թվականին Ուկրաինայից ձեռք է բերել երկու L-39C «Albatros» ուսումնական ինքնաթիռ, և ևս չորս ինքնաթիռ՝ 2010-2011 թվականներին: Բելառուսը 2007 թվականին Հայաստանին մատակարարել է տասը Դ-30 քարշակային հաուբից:

2010 թվականին Հայաստանը Չեռնոգորիայից գնել է 16 Դ-30 հաուբից: 2011 թվականին Մոլդովայի կառավարությունը հաստատեց, որ Հայաստանին վաճառել է ռազմական տեխնիկա, որը, ըստ տեղեկությունների, ներառում էր խորհրդային արտադրության հակատանկային հրթիռներ, զինամթերք և տասնյակ ԲՄ-27 Ուրագան խորհրդային արտադրության համազարկային կրակի ռեակտիվ համակարգ: 2012 թվականին Երևանում կայացած ռազմական ցուցահանդեսում նկատվել են MILAN հակատանկային հրթիռներ, որոնք Գերմանիայի և Ֆրանսիայի համատեղ արտադրության են: Ռուսական աղբյուրը, հայտնում է, որ Հայաստանը հակատանկային հրթիռները գնել է նաև Հունաստանից 2012 թվականին, որոնք մատակարարվել են 2013 թվականին: Ադրբեջանական բանակի անանուն աղբյուրները 2013 թվականին պնդում էին, որ Հայաստանը ոչ միայն 20 MILAN հրթիռ է գնել Հունաստանից, այլ նաև գնդացիրներ և նռնականետեր, ինչպես Հունաստանից, այնպես էլ Կիպրոսից: Բաքվում Հունաստանի դեսպանատունը հերքել է այդ լուրերը:

SIPRI տվյալների բազայի համաձայն՝ Հայաստանը 2019 թվականին ստացել է չորս օգտագործված Օսա-ԱԿ ՀՕՊ համակարգ՝ անհայտ մատակարարից (հնարավոր է Ռուսաստանից) և 120 հրթիռ դրանց համար: Համակարգերը Փաշինյանին ցուցադրվել են 2019 թվականի դեկտեմբերին: Jane's Defence Weekly-ն (Jane's Defense Weekly-ն (JDW) շաբաթական ամսագիր է, որը խմբագրվում է Փիթեր Ֆելստեդի կողմից, և լուսաբանում է ռազմական և առևտրային հարցերը: Jane's Information Group-ի ստորաբաժանումն է, որը ներկայումս պատկանում է IHS-ին), վկայակոչելով իր աղբյուրները, պնդում է, որ դրանք ձեռք են բերվել Հորդանանից: Այս լուրը հաստատել են Հայաստանի պաշտպանության նախարարության աղբյուրները: Այնուամենայնիվ, Հորդանանը հերքել է հաղորդագրությունները, և ենթադրել, որ վաճառքը «հնարավոր է, որ իրականացվել է մասնավոր ընկերությունների կողմից, որոնք զենք են գնել Հորդանանի պաշտպանական արդյունաբերությունից»:

2020-ի պատերազմից հետո Հայաստանը մեծացրել է իր ռազմական ծախսերը: Հայաստանը պաշտպանությանը հատկացրել է 785 մլն դոլար: 2021-ին այս ծախսերը կազմել են 663 մլն դոլար: 2024-ին Հայաստանը նախատեսում է այդ նպատակով հատկացնել 1,4 մլրդ դոլար:

Ադրբեջանը նույնպես զգալիորեն ավելացրել է իր ռազմական բյուջեն: 2020-ին Ադրբեջանի պաշտպանական ծախսերը կազմել են 2,2 մլրդ դոլար, իսկ 2021-ին՝ 2,7 մլրդ դոլար: 2024-ին Ադրբեջանն ավելի մեծացրեց իր ռազմական բյուջեն՝ հասցնելով այն 3,7 մլրդ դոլարի: 2023-ի հոկտեմբերի 23-ին ստորագրված երկկողմ համաձայնագրով Ֆրանսիան Հայաստանին տրամադրել է և կտրամադրի պաշտպանական տեխնիկա, մասնավորապես՝ երեք Ground Master

200 (GM 200) ռադար և գիշերային տեսանելիության սարքեր: GM 200-ը ռադար է, որը հայտնաբերում, նույնականացնում և հետևում է թիրախին բոլոր տեսակի միջավայրերում և տեղեկություն է փոխանցում ցամաքային ՀՕՊ-ին՝ թիրախին հարվածելու համար: Դրա կիրառումը Հայաստանում կարող է ծառայել փոքր ԱԹՍ-ների դեմ պայքարին, որոնք, ինչպես ցույց տվեց 2020-ի պատերազմը, հայկական բանակի ամենախոցելի կետերից են: Հայաստանի զինված ուժերը կստանան, ընդհանուր առմամբ, մոտ 50 Bastion գրահամեքենա: Ֆրանսիայի զինված ուժերի նախարար Սեբաստիեն Լեկորնուն հայտարարել է Mistral տեսակի հրթիռների վաճառքի մասին: Այս հրթիռն օգտագործվում է սպառազինության համակարգերի լայն տեսականիում՝ նախատեսված՝ ցածր և շատ ցածր բարձրություններում հակաօդային պաշտպանության համար: Հայաստանը նաև պաշտպանական և հարձակողական զենքեր է գնել Հնդկաստանից: Swathi ռադարը նախատեսված է հակառակորդի կողմից արձակված հրետանային արկերը և հրթիռները հայտնաբերելու և դրանց հետևելու, ինչպես նաև դրանց արձակման վայրը տեղորոշելու համար: Հայաստանը գնել է նաև Pinaka հրթիռային կայանքներ, հակատանկային զենքեր և այլ զինամթերք, MArG 155 ինքնագնաց հաուբիցներ, վեց հատ ATAGS 155 մմ հաուբիցներ, որոնց ընդհանուր թիվն այս պահին 90 է, Հնդկական Zen հակաօդային պաշտպանության համակարգ, Akash զենիթահրթիռային համակարգեր: Հնդկական սպառազինությունը հիմնականում կազմված է հրետանային տեխնիկայից: Եվ դա նաև շատ տեղին ընտրություն է, քանի որ կարող ենք հստակ տեսնել, որ կան կիրառման տարբեր շրջանակներ: Հայաստանն ունի մի քանի հրթիռային համակարգեր, որոնց հեռահարությունը հասնում է մինչև 120 կմ-ի, ինչը որոշ չափով համարժեք է խորհրդային «Սմերչ» համակարգին, որն օգտագործում էր Ադրբեջանը: Հայաստանը նաև ունի հնդկական համակարգ, որը ֆրանսիական Caesar-ի համարժեքն է և օգտագործվում է նաև Ուկրաինայում: Խոսքը MArG 155 ինքնագնաց հաուբիցի մասին է, որն ավելի փոքր է, իսկ հեռահարությունը՝ մի փոքր ավելի քիչ: Սակայն

այն չափազանց շարժունակ է նեղ ճանապարհներով և լեռնային տարածքում տեղաշարժելու համար: Բացի այդ, կան քարշակվող զինատեսակներ, որոնց կրակի հեռահարությունը բավական մեծ է և ունեն, մասնավորապես, արկերի շատ հետաքրքիր տեսականի, նկատի ունեմ խելացի, ժամանակակից տեխնոլոգիաների արդյունք արկեր: Այնպես որ, քննարկված հրետանային տարբեր համակարգերը միասին ապահովում են գործառույթների և կարողությունների համապարփակ շրջանակ, որոնք բավարարում են օպերատիվ տարբեր կարիքներ տարբեր սցենարների դեպքում: 2020 թվականի մարտին The Times of India-ը՝ վկայակոչելով կառավարական աղբյուրները, հայտնել էր, որ Հայաստանը 40 միլիոն դոլարով Հնդկաստանից չորս Swathi ռադար է գնել: Հաղորդվում է, որ դրանց մատակարարումը սկսվել է 2021 թվականի հունվարին: 2020 թվականի հուլիսին Տավուշում տեղի ունեցած փոխհրաձգության ժամանակ Ադրբեջանը մեղադրել է Սերբիային Հայաստանին զենք մատակարարելու մեջ: Սերբիայի պաշտոնյաները, ի վերջո, հաստատեցին, որ երկիրը 2020 թվականի մայիսին և հունիսին Հայաստանին մատակարարել է մեկ միլիոն եվրոյից պակաս թեթև սպառազինություն (հրացաններ և ատրճանակներ): 2020 թվականի պատերազմի ժամանակ Ադրբեջանը պնդում էր, որ իրաքյան արտադրության ականանետեր է գրավել հայերից, որոնք հավանաբար, արտադրվել են Բոսնիայում և առաքվել սերբական պետական ընկերության կողմից:

Պատերազմական կորուստների քրոնիկոն

Ռազմական գործողությունների սկզբից ադրբեջանական կողմը կրել է և՛ մարդկային, և՛ նյութական լուրջ կորուստներ: Հայկական ուժերը, օգտագործելով հիմնականում հակատանկային կառավարվող հրթիռներ, հրետանի և հրթիռային նռնականետեր, կարողացել են ոչնչացնել և գրավել.

20 Տ-72Ա հիմնական մարտական տանկ,

2 Տ-90 Ս հիմնական մարտական տանկ,

ԲՄՊ-1, ԲՄՊ-2 և ԲՄՊ-3 հետևակի մարտական 17 մեքենա,

ԲՏՐԱ-82Ա 5 զրահափոխադրիչ:

Այս թվերն արձանագրելիս պետք է հիշել մի քանի կարևոր բան:

Նախ, քանի որ հայկական ուժերն իրենց տրամադրության տակ չունեին մարտական անօդաչու թռչող սարքեր, շատ ավելի քիչ են տեսագրել և ավելի քիչ նկարել հակառակորդի ոչնչացված մեքենաները: Երկրորդ, քանի որ Baytaktar անօդաչու թռչող սարքը կրակում է փոքր MAM-S և MAM-L արկեր, որոնք կշռում են համապատասխանաբար 20 և 50 ֆունտ (9 - 22 կիլոգրամ) (համեմատենք ամերիկյան Hellfire հակատանկային հրթիռների հետ, որոնք կշռում են 105-110 ֆունտ (47 - 50 կիլոգրամ)), տանկերի վրա հարձակումները միշտ չէ, որ հանգեցնում են այդ մեքենաների ոչնչացմանը կամ զգալի վնասների:

Այսինքն՝ վնասված մեքենաների մի մասը կարող էր արագ վերադարձվել ծառայության, իհարկե, եթե դրանք չգրավվեին հակառակորդի ուժերի առաջխաղացման միջոցով: Այսպիսով, արդարացի կլինի ասել, որ բաց աղբյուրներից ստացված տեղեկատվությունը մեզ հստակ պատկերացում չի տալիս ադրբեջանական կողմի կորուստների մասին: Սակայն դա թույլ է տալիս եզրակացնել, որ օդային հարձակումների հետևանքով Հայաստանը կորցրել է մեծ քանակությամբ հրետանի և մեքենաներ: Ռազմական գործողությունների առաջին օրը՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, ադրբեջանական անօդաչու թռչող սարքերը հարձակվել են հիմնականում փոքր հեռահարության հակաօդային պաշտպանության համակարգերի վրա Լեռնային Ղարաբաղում: Այս խորհրդային համակարգերը, որոնք թողարկվել են 1970-ական և 1980-ական թվականներին, հիմնականում օգտագործվում էին ինքնաթիռների դեմ, չունեին անօդաչու թռչող սարքեր հայտնաբերելու և ոչնչացնելու հնարավորություն մեծ բարձրության և մեծ հեռավորության վրա: Հետագայում հարձակումներ են իրականացվել ավելի հզոր U-300, և ինքնագնաց «Կուբ» (GRAU ինդեքսը՝ 2Կ12, ըստ ՆԱՏՕ-ի դասակարգման՝ SA-6 Gainful, ռուս. «շահավետ»)՝ խորհրդային զենիթահրթիռային հակաօդային պաշտպանության ՀՕՊ համակարգերի ինչպես նաև ՀՕՊ համակարգերի ռադարների վրա, որի հետևանքով վնասվել, կամ ոչնչացվել են.14 միավոր 9Կ33Մ3 «Օսա» զենիթահրթիռային և 9 միավոր Կ35 «Ստրելա-10» զենիթահրթիռային համակարգեր, 4U-300ՊՍ զենիթահրթիռային համակարգ և մեկ 2Կ12 զենիթահրթիռային համակարգ, ՀՕՊ 8 ռադար:

Ստորև ներկայացված է հայկական մեքենաների մասնակի ցանկը, որոնք վնասվել, ոչնչացվել կամ էլ ավարառվել են: Ընդհանուր առմամբ, մեքենաների այս թիվը համապատասխանում է մոտավորապես հինգ տանկային կամ մոտոհրաձգային գումարտակների մեքենաների թվին.

144 հիմնական մարտական տանկ Տ-72 և Տ-72Բ, 35 հետևակի մարտական մեքենաներ ԲՄՊ-1 եւ ԲՄՊ-2, 19 բազմաֆունկցիոնալ փոխադրող տրակտոր, որոնցից մի քանիսը հագեցած էին ծանր զինատեսակներով, 310 բեռնատար, ջիպ և ոչ զրահապատ մեքենաներ: Հայկական կողմի կորուստները հրետանու առումով.

49 միավոր 122 մմ և 152 մմ տրամաչափի քարշակային հաուբիցներ և դաշտային հրացաններ, 12 ինք-

նագնաց հաուբից 2U1 և 2U3 52 միավոր 122 մմ տրամաչափի ԲՄ-21 «Գրադ» բազմակի արձակման հրթիռային համակարգեր, 3 բազմակի արձակման հրթիռային համակարգեր BM-30 և WM-8:

Ռուսական «Լենտա.ռու» կայքի տվյալներով. «Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության սկզբից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) բանակները կորցրել են 112 տանկ և 26 հետևակի մարտական մեքենա, իսկ ադրբեջանական զինուժը կորցրել է 23 տանկ և 20 հետևակի մարտական մեքենա: Երկու երկրների կորուստները համեմատվել են Oryx-ն իր կայքում, ըստ որի Հայաստանի և ԼՂՀ բանակները կորցրել են, կամ լքել են զինտեխնիկայից և արկերից՝ 19 զրահամեքենա, 1 մարտական վերականգնողական մեքենա, 2 ինքնագնաց հակատանկային հրթիռային համալիր, 41 քարշակ հրետանի, 12 ինքնագնաց հրետանային կայանք, 52 բազմակի արձակման հրթիռային համակարգ, 1 բալիստիկ հրթիռ, ինքնագնաց զենիթահրթիռ, 20 զենիթահրթիռային համակարգ, 8 ռադար, 1 ինքնաթիռ, 2 անօդաչու թռչող սարք, 273 բեռնատար և այլ մեքենա, 40 հակատանկային կառավարվող հրթիռ: Ադրբեջանն իր հերթին, ըստ Oryx-ի հաշվարկների, կորցրել է 8 ինքնաթիռ և ուղղաթիռ, 17 անօդաչու թռչող սարք, 13 բեռնատար և այլ մեքենաներ, ինչպես նաև ինժեներական տեխնիկա: Հայկական կողմը պնդում է ադրբեջանական բանակի հետևյալ կորուստները.

Մարդուժ՝ 7630 զոհ, զինտեխնիկա. 4 SOU-1 (ռուս.՝ TOC-1), համազարկային կրակի՝ ծանր հրանետային համակարգ (ԾՀՀ) (ռուս.՝ тяжёлая огнемётная система, TOC), 580 միավոր զրահատեխնիկա, 23 ինքնաթիռ, 16 ուղղաթիռ, 202 ԱԹՍ: Ադրբեջանի մարդկային կորուստների առումով կան հետաքրքիր այլ տվյալներ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղում մարտերի ընթացքում զոհվել է 2,89 հազար մարդ, ևս 19-ը համարվում են անհետ կորած: Սակայն, 2020 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին Ադրբեջանում մահացության անսպասելի բարձր ցուցանիշներ են գրանցվել: Հոկտեմբերին այն գերազանցել է ամսական միջինը 29%-ով, նոյեմբերին՝ 83%-ով, դեկտեմբերին՝ 203%-ով, իսկ հունվարին՝ 51%-ով: Այս տվյալները ներկայացնում է բրիտանական The Economist հրատարակությունը: Այն հետևում է «ուռճացված» մահերին՝ ըստ երկրների, ամբողջ աշխարհում: Նախորդ տարիների ամսական միջին ցուցանիշները համեմատվում են 2020 և 2021 թվականների պաշտոնական տվյալների հետ՝ գնահատելու համար, թե որքան կարող է լինել նոր կորոնավիրուսից մահացության իրական թիվը, քան պնդում են տարբեր երկրների իշխանությունները: The Economist-ը նշում է, որ տեղեկատվությունը վերցված է Human Mortality Database-ից (զոհերի տվյալների բազան է (HMD), զարգացած երկրներում մահացության վերաբերյալ աշխարհի առաջատար գիտական տվյալների ռեսուրսը):

HMD-ն տրամադրում է մահացության և բնակչության ներդաշնակեցված մանրամասն գնահատականներ հետազոտողներին, և World Mortality Dataset-ից, որը համաշխարհային մահացության տվյալների հավաքածուն է և պարունակում է շաբաթական, ամսական կամ եռամսյակային բոլոր պատճառներով մահացության տվյալներ 103 երկրներից և տարածքներից: Այն պարունակում է 2015-2021 թվականներին բոլոր պատճառներով մահացության վերաբերյալ երկրի մակարդակով տվյալներ՝ հավաքագրված տարբեր աղբյուրներից: Դատելով բրիտանական հրապարակման տվյալներից՝ բացի Ադրբեջանից, մահացության նման անսովոր բռնկումներ գրանցվել են միայն Հարավային Ամերիկայի մի քանի երկրներում՝ Բոլիվիայում, Էկվադորում և Պերուում:

Ադրբեջանում 2020 թվականի վերջին և 2021 թվականի սկզբին մահացությունների աճը համընկել է երկրում կորոնավիրուսի առաջին լուրջ բռնկման հետ: Coronavirus Monitor-ի տվյալներով՝ Covid-19-ի դեպքերի թիվը հասել է օրական 4,45 հազարի՝ 30 անգամ ավելի, քան նախկինում գրանցվածը: Կորոնավիրուսից մահացության պաշտոնական մակարդակը, օրինակ, դեկտեմբերին կազմել է 1249 մարդ: Միաժամանակ միջին ամսական աճը գերազանցել է 9,6 հազար մարդը՝ 4,7 հազարից հասնելով 14,5 հազարի:

Նման տվյալները կարող են վկայել, որ մահացության աճի ուղղակի և անուղղակի պատճառը կարող է լինել ղարաբաղյան երկրորդ պատերազմը, որը տևել է սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը: Մի կողմից՝ բանակը, բնականաբար, լուրջ կորուստներ ունեցավ, մյուս կողմից՝ բանակում մարդկանց կենտրոնացումը և զինվորականների զանգվածային վերադարձը տուն չէին կարող չհանգեցնել նոր կորոնավիրուսով հիվանդացության աճի և, համապատասխանաբար, մահացության աճի: Միևնույն ժամանակ, հոկտեմբեր-հունվար ամիսներին երկրում մահացությունների թիվը գերազանցում է մահացության միջին ցուցանիշը՝ զուգորդված կորոնավիրուսից պաշտոնապես մահացածների թվի հետ գրեթե 15 հազար մարդով: Այսինքն՝ պատերազմից իրական կորուստների թիվը կարող է լինել չորսից հինգ անգամ ավելի, քան նշում է Ադրբեջանի ՊՆ-ն:

Հայ մտավորականության լույսն ու ստվերը

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Հաստատ հիշում եք, որ 88-ի արցախյան շարժման բուռն օրերին ալեկոծվող հրապարակները պահանջում էին, որ մտավորական գործիչները խոսք ասեն տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Հասարակությանը քաջ հայտնի մարդիկ՝ գրողներ, գիտնականներ, հրապարակախոսներ և ուրիշներ, հաղորդակցվում էին հանրության հետ, և շատ էլ կարևոր չէր, թե նրանց մտքերը, քաղաքական առումով, ինչքան էին գործնական և օգնում պայքարին: Նրանց ներկայությունն առավել արժեքավոր էր, քան արտահայտած մտքերը: Տարիների հեռվից առավել հստակ է, որ նրանք նույնքան անիրազեկ և անպատրաստ էին ընթացող քաղաքական գործընթացներին, որքան հասարակ զանգվածը: Խորհրդային պետության թևերի տակ ապրած, կրթված և գործունեություն ծավալող հայ մտավորականությունը, ակնհայտորեն ապաքաղաքական տարր էր: Բացառությունները հատուկենտ անհատներ էին, բայց նրանք, մեծ հաշվով, եղանակ չէին ստեղծում: Ամեն բան մտածված էր շատ խորամանկ ձևով. մտավորական շերտը ևս չպետք է պարզորոշ հասկանար, թե իրականում ի՞նչ է ծրագրված, ի՞նչ է արվում և ինչպե՞ս:

Ինչո՞ւ այսքան հեռվից եկանք: Նրա համար, որ չափից ավելի մեծ ակնկալիքներ չունենանք մտավորական շերտի հարցում, չմտածենք, որ եթե մտավոր ոլորտի մարդիկ առավել կրթված ու զարգացած են, ապա գլուխ են հանում նաև քաղաքական գործընթացներից: Առհասարակ, «մտավորականություն» եզրույթը ծայրից ծայր թաղված է անհստակության մեջ: Պատահական չէ, որ երբ փորձ է արվում բնութագրել մտավորականի կերպարը, առաջանում է մտքի խճճվածություն և վերացականություն: Միայն մտավոր գործով զբաղվելը բավարա՞ր է մարդկանց մտավորական անվանելու համար: Իհարկե՝ ոչ: Կամ՝ կաշառակեր դոկտոր-պրոֆեսորին կարո՞ղ ենք համարել մտավորական: Էլի՝ ոչ: Ո՞ւմ լեզուն կպտտվի իշխանությունների ոտքերի տակ քարշ եկողին անվանել մտավորական: Մեկ այլ տարբերակ՝ գլուխը իր արվեստանոցի ու լաբորատորիայի պատուհանից դուրս չհանող, միայն ու միայն իր գործով տարված, հանրային ու ազգային կյանքից մեկուսացած մարդուն կարո՞ղ ենք անվանել մտավորական: Սա ևս դժվար է: Իր գործին ամբողջովին նվիրված, պարկեշտ, երկրի վիճակով խիստ մտահոգ ու սրտացավ, բայց ավա՜ղ, զգուշավոր, ծույլ ու հայեցող մարդուն ևս դժվար է անվանել մտավորական: Եթե այնուամենայնիվ, փորձենք մի բնորոշում գտնել, ապա այն կարելի է ձևակերպել մոտավորապես այսպես. «**մտավոր գործունեություն ծավալող, պարկեշտ, անարծաթ և անպայման քաղաքացիական քաջություն ունեցող մարդն է մտավորականը, որը հարկավոր պահին, դիմանալով բազում զրկանքներին, ցուցաբերելով պատասխանատվության բարձր զգացում ազգի, նրա արժեքների, ներկայի և ապագայի հարցում, ժողովրդի կողքին է, պայքարի առաջնագծում»:**



Չպետք է հուսալ, թե խեղճ ու թույլ պետության մեջ մի հրաշքով կարող է ձևավորվել բարձրակարգ մտավորականություն: Մտքի և գործի ազատությունը ինքնաբերաբար ի հայտ չի գալիս. դրանք իրական են դառնում պետական համապատասխան համակարգի գոյության պայմաններում: Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» հերոսները պետականազուրկ ազգի ցավալի դրսևորումներ են, որոնց երգիծաբանը այնքա՜ն խիստ է դատել ու ծաղրել: Ի վերջո, մի քանի տարի անց նրանք դարձան ցեղասպանության առաջին զոհերը: Սրանք շատ նուրբ ու խորը շերտեր ունեցող հարցեր են, առանց որոնց ընդհանուր պատկերը կազմելու դժվար կլինի ներկայացնել օրվա մտավորականության թեկուզ մոտավոր դիմանկարը: Առանց պետության մտավորականության գոյությունը թեև հնարավոր է, բայց թերի է, նվազ արդյունավետ: Այդ ֆրանսիական արքունիքն էր թևեր տալիս Վոլտերին, իսկ Ռուսաստանում էլ՝ Լոմոնոսովին: Նույնն էր տեղի ունենում եվրոպական գրեթե բոլոր երկրներում՝Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում և այլուր: Պատահականություն չէր, որ

լուսավորյալ միապետները քաջալերում էին իրենց ազգի մտքի ասպետներին՝ աջակցում նրանց տարբեր ձևերով: Միաժամանակ հենց մտավորականությունն էր դառնում իշխողների առաջին հակառակորդը: Այդ մտավորականության երկնած գաղափարներն էին պայմանավորում տվյալ երկրների քաղաքական, գիտական, տնտեսական, հոգևոր և արժեքային առաջընթացը: Նրանք մեծ գաղափարների «գեներատորներ» էին՝ առաջընթացը իրենցով պայմանավորող անհատականություններ: Նրանց հզոր ու բացառիկ տեսակը նոր ու ուժեղ գաղափարների հետ հրապարակ էր բերում մտածողության նոր կերպ ու հայացք, թելադրում էր ճաշակ ու գործելաոճ և այլն: Պարույր Սևակը հենց նրանց նկատի ուներ, երբ իր «Վարք մեծացում» ասում էր՝ «**Արքաների հետ խոսում են «դու»-ով, եթե իհարկե լսում են նրանց, եթե չեն լսում, մեկ է, չեն լռի, կխոսեն անգամ կոշկի հետ իրենց ...»:** Տիրակալները հանդուրժում են մտավորական – անհատականություններին մինչև այն պահը, քանի դեռ նրանք չեն արթնացրել զանգվածներին: Սա հակասություն չէ, սա բնականոն գործընթաց է, առանց այս հակադրությունների ցանկացած երկրում հասարակական կյանքի ճահճացումն անխուսափելի է: Հայոց իրականության մեջ այս ամենը այլ ընթացք է ունեցել: Երանի չէ՞ր մենք էլ ունենայինք պետություն և միապետներ, ու նրանք հալածեին մեր մտավորականներին: Հայոց մտավորական շերտի ուսերին միշտ էլ օբյեկտիվորեն մի քանի անգամ ավելի ծանր բեռ էր դրված, քան նրանց, ովքեր գոյաբանական խնդիրներ չունեին:

ՀՅ Դաշնակցության գինանշանի վրա պատկերված փետուրն ու սուրը ճշգրտորեն արտացոլում են հայ մտավորականության ծանր առաքելությունը: Եվրոպայում ու Ռուսաստանում լավ կրթություն ստացած, լեզվաբանության, իրավագիտության, բժշկության և մյուս ոլորտներում հմտացած հայ մտավորականները տառապում, պատեպատ էին լինում գտնելու համար հայության փրկության բանալին: Փանոս Թերլեմեզյանի մի ուսին հրացան էր, մյուսին՝ նկարչական մոլբերտը, Ռուբեն Տեր-Մինասյանը, որը զինվորագրվել էր արևմտահայությանն արթնացնելու և զինական պայքարի տանելու ծանր գործին, բնատուր գրող էր, գրականության կարոտն առնում էր արևմտահայության կյանքը ամենագունեղ ու ճշգրիտ երանգներով նկարագրելով: Նիկոլ Դումանը ռազմարվեստի իր հարուստ փորձառությունը գիտելիքի էր վերածում հայդուկային կռիվների ամենածանր օրերին: Էլ չենք խոսում Նժդեհի, Արամ Մանուկյանի, Նիկոլ Աղբալյանի, Ռուբեն Դարբինյանի, Սիմոն Վրացյանի, Կարո Սասունու և շատ ուրիշ փայլուն մտավորականների մասին: Նրանք բոլորն էլ ժողովրդի նվիրյալ զավակներն էին, անարծաթ, անանձնական... Պոլսում «Ազատամարտ» թերթի խմբագրատանը, խմբագիր Ռուբեն Զարդարյանի շուրջ խմբվել էին Դանիել Վարուժանը, Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Սևակը և Պոլսի մտավորական ընտրանին, իսկ նույն պահին, Թիֆլիսում Հովհաննես Թումանյանի «Վերնատունը» մշտապես իր դռները բաց էր պահում ազգի տաղանդավոր զավակների համար: Սա յուրահատուկ երևույթ էր՝ հայությունը չուներ պետություն, բայց իր մտավոր ներուժով՝ Կոմիտասով, Թումանյանով, Աղայանով, Իսահակյանով, Բաշինջաղյանով և մյուս մեծերով ստեղծում և առաջ էր մղում ազգի հոգևոր և մշակութային զարգացումը: Ասել է թե՝ մտավորականությունը ակամայից դարձել էր «պետություն» ու ավելին: «Հոգևոր հայրենիքի» տերը տեր էր կանգնել ազգին, ստանձնել էր նրա ֆիզիկական գոյության պատասխանատվությունը: Խորհրդային շրջանը ծնեց մտավորականի իր տեսակը: Քաղաքական և գաղափարախոսական սեփական տարածք չկար, սակայն հայ մտավորականությունը գլխովին նետվեց կյանքի հորձանուտը ու սկսեց արարել բարձրակարգ արժեքներ՝ ճատարապետության, գրականության և արվեստի, գիտության և արտադրության ոլորտներում: Ու թեև գործում էր գաղափարախոսական մամլիչը, բայց դա չխանգարեց, որ հայ մտավորականը պահպանի իր ազգային դեմքը, ստեղծի ու հարստացնի ազգային գանձարանը: Հավանաբար, խորհրդային ղեկավարությունը դա ևս համարում էր իր մեծ ժառանգությունը և հարստությունը: Այստեղ մեր բախտը իրոք բերեց, բայց միամիտ չլինենք՝ մեր մտավորականի մտքի լույսը ինչքան մեզ էր լույս տալիս, տասն անգամ ավելի ծառայում էր խորհրդային կայսրությանը: Սա հայ մտավորականի կերպարի և գործի ակնհայտ, տեսանելի կողմն է, բայց կա նաև մյուսը, որի խորապատկերի վրա երևում են նրա տձև ստվերները:

նաչ մտավորականներից շատերը բնավ էլ դեմ չէին լինել իշխանության սիրելիները: Սերո Խանզադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը և այլք, խիստ գնահատված էին և ազատ ելումուտ ունեին իշխանական տարածքներ: Նրանց կողքին կար մտավորականի թիկնոց կրող «մաֆիոզ և կիսամաֆիոզ» մեկ այլ տեսակ, որը բարձրագույն իշխանության մշտական հյուրն էր: Նա հատուկ հովանավորություն էր վայելում և զանազան հարցեր լուծում իր և մերձավորների համար: Բնակարան, ավտոտնակ, «դաչա», հարազատների, զավակների արտոնյալ մուտք բուհեր, պաշտոն իրենց մտերիմների և ազգականների համար և այլն: Ահա բարիքների այն փոքրիկ ցանկը, որը ձգում էր այս «երևելիներին» դեպի իշխանական միջանցքներ: Նրանք իհարկե վսեմ արարքների ընդունակ չէին: Ազգանպաստ մեծ գործերում նրանք անելիք չունեին: Համո Սահյանին ոչ ոք իշխանության դռները թակելուց չտեսավ, իսկ Հրանտ Մաթևոսյանը, Պարույր Սևակը, ինչպես ասում են՝ «Պերսոնա նոն գրադա» էին: Մի խոսքով՝ կային ոչ քիչ թվով պարկեշտ մարդիկ, որոնց իշխանությունը դժվարությամբ էր հանդուրժում: Ակադեմիայի երևելիների զգալի մասը հնազանդ գիտնականներ էին, նրանց ճնշելն ու խեղճացնելը իշխանության համար որևէ դժվարություն չէր ներկայացնում: Նույն ժամանակ երկրում կար իսկական մտավորականություն, որը ողջ խորությամբ գիտակցում էր հայոց հիմնախնդիրները, գործ էր անում, իսկ հարկավոր պահերին ընդվզում էր: Իսկ եթե չէր ընդվզում, գործերը գլուխ էր բերում «փափուկ ուժի» օրենքով: Բարդ երկիր էր, այլ կերպ հնարավոր չէր: Մտավորականությունն առանձին մարդիկ չեն, այն մեծ հանրույթ է՝ մեծ իղձերով ու լուսավոր ձգտումներով: Այս հանրույթը իր կերպարով, հավաքական ընկալումներով և կեցվածքով որոշում է հասարակական տրամադրությունների գլխավոր վեկտորը, այն եղանակ է ստեղծում երկրում, ընդվզում այլանդակ բարքերի դեմ: Ի՞նչ եք կարծում, եթե մտավորականությունը ի լուր, ի տես ամենքի, գոռար ու մռնչար, թե «**հասկացեք վերջապես, Արցախը բեռ չէ, Արցախը Հայաստանի անբաժան մասն է, հարստությունը, նրա զրահաբաճկոնը**», դրածո սրիկաները կհանդգնեի՞ն այն սկուտեղի վրա մատուցել Ադրբեջանին. չէին կարող, այդպես չէր լինի: Չհնչեց բողոքի ձայնը ինչպես հարկն է, տեղի չունեցավ այդ միասնական ընդվզումը, և ստահակներն արեցին իրենց սև գործը: Այս պատմությունը անձամբ լսել եմ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսան Մատվեևիչ Կիրակոսյանից. «**Մոսկվայից հրահանգ էր եկել, որ Հայաստանը պետք է երկրում ռուսերենը դարձնի գլխավոր գործածական լեզու: Հրեշավոր որոշում էր, սարսափած իրար էինք նայում: Հրավիրվեց Կենտկոմի պլենում, Կարեն Դեմիրճյանը պնդում էր, որ պետք է արագացված տեմպերով համաձայնություն տալ դրան: Կենտկոմի անդամները, թեև հնազանդ, բայց ևս հոգեբանորեն ճնշված էին: Այս մասին տեղյակ էր նաև Գիտությունների ակադեմիան, համալսարանը: Ես և Ջոն Կիրակոսյանը կարողացանք մտնել Դեմիրճյանի մոտ և խնդրել, որ ձգձգի վերջնական որոշումը, քանի որ ուժեղ խմորումներ կային Վրաստանում և մերձբալթյան հանրապետություններում: Ասացինք՝ համբերենք, տեսնենք, թե ինչ են անում մյուսները, ի՞նչ իմաստ ունի առաջիններից լինել մեզ համար այդքան վտանգավոր հարցում: Կարեն Սերոբիչն անդրդվելի էր, համառում և ուզում էր օր առաջ գոհացնել Կրեմլին: Ներքին խողովակներով ակադեմիկոսներին հասկացրինք, որ դժգոհության ալիք առաջացնեն տեղերում, բայց, ո՛վ զարմանք, ակադեմիական մտավորականությունն այնքան վախկոտ էր ու խղճուկ, որ ասելու բան չի: Ի տարբերություն մեզ՝ Վրաստանը հանդգնեց ընդվզել այդ կեղտոտ որոշման դեմ, նրան հաջորդեցին մերձբալթյան հանրապետությունները, և արդյունքում՝ Մոսկվան հրաժարվեց ազգային լեզուների դեմ ոտնձգությունից»:** Այս պատմությունը լսելուց հետո կարծես պարզ է դառնում, թե ինչպես է Նիկոլ անունով մի տգետ, թերուս դուրսպրծուկ իր ալենսիմոնյաններով ու «սորոսակոյտով» մեր օրերում, բոլորիս աչքի առջև, խեղճացրել ակադեմիական մտավորականությանը: Մեկը կասի՞, թե հայրենիքից ու պատվից, գիտնականի անունից առավել բարձր ի՞նչ կա, որ ստիպում է այդպիսիներին դառնալու այդքա՞ն խեղճ: Ուրեմն՝ նրանք այսօր չէ, որ այդպիսին դարձան... Անկախության հռչակումը ոչ միայն չարբագրեց իրավիճակը, այլև պայմաններ ստեղծեց մեր մտավորականության նոր գահավիժման համար:

90-ականների սկզբներն էին, խառը օրեր, Գրողների միության պլենումն էր, միությունը տրոհվել էր երկու մասի, ծով անորոշություն բոլոր հարցերում: Գնացել էի լուսաբանելու Պլենումի աշխատանքները: Հնչում էին ճոռոմ ելույթներ գրողի դերի և նշանակության մասին: Բայց կար մի տհաճ թեզ, որն արտահայտվում էր ներկաների մեծ մասի խոսքում.

«**Հիմա ո՞ւմ հետևից գնանք, սովետը չկա, ո՞վ է մեզ հրահանգողը, ո՞ւր է այն կուսակցությունը, որը մեզ պետք է ուղղորդի»:** Ասել է թե՝ գրողները մորը կորցրած գառների պես տեր էին փնտրում:

Նրանք համառորեն չէին հասկանում, որ գրողներն իրենց ներկայությամբ արդեն «կուսակցություն» են, հանրության ձայնն են, ազգային, հոգևոր, մշակութային արժեքների, մարդկային խղճի, ազգային հոգսերի պատասխանատուներն են և բարոյականության պաշտպաններն ու պահապաններն են, այսինքն՝ նրանք «**արժեքների կուսակցությունն**» են: Բայց արդեն սկսվել էր կապիտալի կատաղի կենտրոնացումը և գերկենտրոնացումը մի խմբի ձեռքում: Օլիգարխները շուտով դարձան մտավորականների ճորտատերեր, և պարոնյանական «մեծապատիվների» թեման գուժեց նոր անկումների մասին: Կոմպոզիտոր ընկերիներիցս մեկը պատմեց, թե ինչ է տեղի ունեցել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական հոլովակի երգի ձայնագրման ժամանակ. «**Ձայնագրման ստուդիաներից մեկում հավաքվել էին երկու տասնյակից ավելի կոմպոզիտորներ և երգիչներ: Նրանց մեծ մասը ժողովրդական և վաստակավոր արտիստներ էին: Փողի պոչ էր երևացել... Եվ ահա բացվեց ստուդիայի հետնադուռը և ներս մտավ մի ճարպակալած էկզոտիկ արարած: Եկավ, կանգնեց բեմի առջև... «Բարև ցս՛ուս, - խոխոացրեց նա ու շարունակեց... ո՞վ ա ստեղի շեֆը»: Այս «հրաշքին» տեսնելով՝ գործի կազմակերպիչն առաջ եկավ: «Ապե, - արհամարհական հայացք նետելով բոլորի վրա ասաց նա, - ընգեր, պարոն Ծառուկյանը ասեց՝ գնա էն համերգի բանվորների փողը տուր»:** Ու հենց այդ պահին էլ բոլոր ժողովրդական և վաստակավոր արտիստներս հասկացանք, թե ինչպիսի՜ ժամանակներ են եկել, տեսանք, որ Աբիսողոմ աղան փառավորապես բազմած է դահլիճում, իսկ մենք այս ու այն կողմ ցատկոտող կապիկներ ենք: Եվս մի «շքեղ» դրվագ, և փորձենք ամփոփել մեր ասելիքը: Այն ինձ պատմել է մեր հանրությանը քաջ հայտնի հումորիստ, նմանակող, Սամվել Բաղդասարյանը. «**Առաջարկ էի ստացել մասնակցելու մի կառավարական համերգի Օպերայի դահլիճում, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և երկրի ընտրանու մասնակցությամբ: Փորձերի պահին դահլիճ մտավ այդ օրերի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը: Համերգի կազմակերպիչն այլևայլ բաների մասին զեկուցելուց հետո, սկսեց ներկայացնել դահլիճի հյուրերի նստելու դասավորությունը: «Առաջին շարքում, ինչպես միշտ, իր տիկնոջ հետ կնստի նախագահը, աջ կողմում՝ կաթողիկոսը, ձախում՝ Սահմանադրական դատարանի նախագահը: Հետևի երկրորդ շարքը նախատեսել ենք բարձրաստիճան զինվորականների համար, իսկ մյուս թևում՝ կնստեն նախարարները: Երկու, թե երեք շարք կարծես դատարկ էր մնում: Բեգլարյանը նայեց դատարկ աթոռներին ու ասաց. «Հարց չի, ըտեղ էլ բերեք ճանաչված մտավորականներ, արվեստագետներ, բաներ լցրեք»:** Հիմա պա՞րզ է չէ, թե որտեղից ուր հասանք... Կարծում եմ՝ նաև մտովի տեսաք այդ «լցոնվածների» դեմքերը: «Լցոնովի» մտավորականը հատուկ տեսակ է, գուցե նաև՝ կարգավիճակ, նրան նույնիսկ դուր է գալիս այդ դերը: Կարո՞ղ եք արդյոք, թեկուզ ձեր ուղեղի հեռավոր ծայրով պատկերացնել, որ այդ «լցոնումների» համար նախատեսված շարքերում նստած լինեին, օրինակ, մեր ազգային երգի անզուգական վարպետ Սահակ Սահակյանը, քարտեզագետ ու ճարտարապետության հմուտ գիտակ Սամվել Կարապետյանը, սքանչելի արձակագիր ու թարգմանիչ Ռուբեն Հովսեփյանը, հայկական պարի վարպետ, պարուսույց Գագիկ Գինոսյանը: Չեք կարող, չի ստացվի, այս մարդկանց կարելի էր ցավ պատճառել, հալածել, բայց այս տեսակին անհնար է գնել և օգտագործել: Հայտնի խոսք է, որ. «**Մտավորական կամ կարգին մարդ լինել, բոլորովին էլ չի նշանակում սխրանքներ գործել, դա ընդամենը նշանակում է մաս չկազմել կյանքում տեղի ունեցող ստորություններին...»:**

Ամփոփելով մեր ասելիքը նկատենք հետևյալը. խնդիրը միայն մտավորականությունը չէ, այլ ողջ հասարակությունը: Տրոհվել, ջլատվել ու քարուքանդ են եղել պետությունն ու իշխանությունը, առաջացնելով մի սոսկալի խզում: Իսկ դա նշանակում է, որ մեր հասարակությունը հետզհետե վերածվում է ապաքաղաքական ամբոխի, որի համար պետությունը ոչինչ է, այսինքն՝ պետությունը պարտվել է: Իսկ երբ պարտվում է պետությունը, գահավիժում է ամեն ինչ: Թվում է նաև, թե հայ հանրությանը սկսել է բավարարել դարերով փորձված կրոնական և մշակութային համայնքային գոյաձևը: Պետական ու քաղաքական իրականություն այդպես էլ չի կայանում: Գլուխը կախ, բացառապես հաց փնտրող, շփոթված, միայն փնթփնթացող մտավորականը այսօր մեր ողբերգությունն է և ազգի վախճանի ցուցիչը: Ավա՜ղ.... Մեծ հաշվով՝ մենք երբեմն մեր մտավորականությունից պահանջում ենք որակներ, որոնք նա չունի: Վերագտնելով, վերակազմավորելով պետությունը, հասարակությունը կրկին կազատագրի և կառողջացնի նաև իր մտավորականությանը: ■

Ռազմավարական հենասյուն Սևանը ձախողվող պետական քաղաքականության ներքո

Արմեն Վարդանյան
Լրագրող

Սևանա, նախկինում՝ Գեղարքունի լիճը կամ Գեղամա ծովը, Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն՝ ոչ միայն որպես քաղցրահամ ջրի մեծ բնական պահեստարան, այլև որպես պետության պարենային անվտանգության հիմնական բաղադրիչ: Լիճն իր էկոհամակարգով գրեթե ամբողջությամբ ձևավորում է Հայաստանի կենսաբազմազանությունը, էական ազդեցություն թողնում տարեկան միջին ջերմաստիճանի վրա: Այն հայ ժողովրդի համար ունի ոչ միայն տնտեսական, բնապահպանական նշանակություն, այլև պատմամշակութային արժեք՝ անքակտելիորեն կապվելով հայոց հազարամյակների ոսկեղեն պատմության հետ:

Լիճը և նրա էկոհամակարգի պահպանությունը կարևորելով՝ 2001 թվականին՝ Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին, ընդունվեց «Սևանա լճի մասին» օրենքը: Իրավական ակտի ընդունման նպատակը ոչ միայն այն տնտեսական գործունեության վնասակար ազդեցությունից հնարավորինս զերծ պահելն է, այլև նրա էկոհամակարգի հետևողական վերականգնումը, որը խարխլվել էր Խորհրդային Միության գոյության դեռ վաղ տարիներին:

Սևանա լճի մակարդակը սկսել են իջեցնել դեռ 20-րդ դարի 30-ական թվականներին, երբ խորհրդային իշխանությունները, լենինիզմի գաղափարախոսությամբ տոգորված, որոշեցին, որ պետք է «զարկ տան» հիդրոէլեկտրակայանների կառուցմանը, իսկ լճի ջրերից ազատված հողերի վրա զարգացնել գյուղատնտեսությունը: 1933 թվականին որոշվեց լճից ջուր վերցնել՝ հիդրոէլեկտրակայանին մատակարարելու համար: Այդ նպատակով Սևանից դուս եկող միակ գետի՝ Հրազդանի հունն ընդլայնվեց, իսկ 40 մետր խորության վրա կառուցվեց թունել լրացուցիչ ջուր բաց թողնելու համար: Այդ տարիներից սկսած լճի մակարդակը տարեկան մեկ մետրով նվազել է:

Սևանա լճի ջրերը Հրազդան գետի միջոցով այսօր էլ ոռոգում են Արարատյան դաշտը՝ միաժամանակ ջրով ապահովելով Հրազդան գետի վրա կառուցված 6 էլեկտրակայաններից բաղկացած հանրապետության ամենամեծ՝ Սևան-Հրազդան հիդրոկասկադը: Տասնամյակներ անց միայն Հայաստանի խորհրդային իշխանությունները պետք է գիտակցեին այդ որոշման աղետաբեր հետևանքները, երբ արդեն իսկ անդառնալի հարված էր հասցվել լճի և հարակից տարածքների բնական էկոհամակարգին: Ջրի մակարդակի իջեցման հետևանքով ոչնչացան Սևանի իշխանի 4 ենթատեսակներից երկուսը՝ Ձմեռային Իշխանը և Բոջակը, իսկ մյուս երկուսը՝ Ամառային բախտակը և Գեղարքունին այսօր արհեստական են բուծվում և բաց թողնվում լիճ, քանի որ ջրի մակարդակի իջնելու և գետերի համակարգի խաթարման հետևանքով բնական ձվադրմամբ չեն բազմանում:

Սևանա լճի «ծաղկման» հիմնախնդիրը

Լճի մակարդակի իջեցումը դարձավ նրա ճահճացման հիմնական պատճառներից մեկը: Կապտականաչ ջրիմուռները, որոնք վերջին շրջանում գրեթե ամեն տարի լճի «ծաղկման» պատճառ են դառնում, Սևանում առաջին անգամ նկատվել են նախորդ դարի 40-ականներին, իսկ «ծաղկման» առաջին դեպքն արձանագրվել է 1964 թվականին և տարբեր ծավալներով պարբերաբար կրկնվել նաև այլ տարիների: Ջրի լայնածավալ ծաղկում դիտարկվել է 2018 թվականին, երբ գրեթե ամբողջ ջրային հայելին պատվեց կապտականաչ թունավոր ջրիմուռներով:

Դրա պատճառն այն է, որ տարածաշրջանում միակ քաղցրահամ ջրի բնական պահեստարանի մակարդակի իջեցման հետևանքով Փոքր Սևանում ջրի հիպոլիմնիումի շերտը կրճատվել է, իսկ Մեծ Սևանում վերացել է: Հիպոլիմնիումի կամ սառը շերտի կրճատման և բացակայության հետևանքով հատակային շերտից տեղի է ունենում ֆոսֆորի ինտենսիվ անցում՝ ջրաշերտ:

Մյուս կողմից, լճում շարունակում է աճել ֆոսֆորի կոնցենտրացիան, որովհետև այն ծանրաբեռնված է մարդու գործունեության հետևանքով առաջացած կեղտաջրերի բերած կենսանյութերով: Դրա հետևանքով ֆոսֆորի և ազոտի միացությունների մեծ քանակություն է առաջանում, որը կապտականաչ ջրիմուռի համար ծառայում է որպես սննդանյութ, և ամռանը ջրի բարձր ջերմաստիճանի և լույսի բավականին մեծ ինտենսիվության պայմաններում լիճը պատվում է դրանցով:

Լճի ինտենսիվ «ծաղկման» հետևանքով ֆոսֆորի կոնցենտրացիան նվազում է, ինչն ամռան տաք եղանակին, կապտականաչ ջրիմուռների աճի հետևանք է: Այդ ընթացքում ջրիմուռի կենսազանգվածն ինտենսիվորեն յուրացնում է ֆոսֆորը, և երբ ջրում վերջինիս կոնցենտրացիան գրեթե հավասարվում է զրոյի, 2-3 շաբաթվա ընթացքում «ծաղկումն» ավարտվում է:

Այսօր Սևանի ջրի նման վիճակի պատճառը նաև կոմունալ-կենցաղային չմաքրված և ափամերձ հանգստյան գոտիների կեղտաջրերն են, որոնք թափվում են լիճ: Կեղտաջրերի աղբյուր են հանդիսանում նաև գյուղատնտեսությունը և անասնապահությունը, ջրածածկ բուսական տարածքները, որոնք հատկապես ավելացել են վերջին 20 տարվա ընթացքում՝ ջրի մակարդակի բարձրացման արդյունքում, ինչպես նաև լճում իրականացվող ցանցավանդակային ձկնաբուծության և կոյուղատարին չմիացած հարյուրավոր մերձափնյա ժամանցի կետերի սեպտիկ հորերի պատճառով:

Նման աղետալի պատկերի պատճառն այն է, որ լիճ թափվող կոյուղու ոչ մի համակարգում կենսաբանական մաքրում չի իրականացվում, իսկ եղած երկու մաքրման կայաններում կատարվում է միայն մեխանիկական մաքրում: Հայաստանի իշխանությունները երկար տարիներ փորձում են Գավառի մեխանիկական մաքրման կայանի վերազինման շնորհիվ կատարել կենսաբանական մաքրում, ինչպես նաև Սևանա լճի ավազանի Վարդենիկ և Ծովինար բնակավայրերի կեղտաջրերի հեռացման և համատեղ մաքրման համակարգ ստեղծել, սակայն այդ աշխատանքները ծրագրավորման փուլից այն կողմ չեն անցնում:

Սևանի ճահճացմանը նպաստող գործոններից է նաև ձկնապաշարների նվազումը: Բանն այն է, որ լճում առկա օրգանական նյութերի մեծ մասը պետք է ի վերջո դառնար ձկան կեր, և ֆոսֆորի որոշակի քանակությունը ձկան որսի միջոցով դուրս բերվեր ջրից, սակայն այն չի արվում, որովհետև մեծածավալ ապօրինի ձկնագողության հետևանքով ձկնաքանակն էականորն նվազել է: Մյուս կողմից, չկարգավորվող որսի հետևանով Սևանա լճից արդեն վերացել է կողակ ձկնատեսակը, որը լճի հատակից սնվելով հեռացնում էր այնտեղ կուտակվող օրգանական նյութերը:

Հետևաբար լճի ճահճացումը կանխելու համար այս փուլում պետք է իրականացվի սիգի արդյունագործական որսի կարգավորում, ձկնապաշարի համալրում, ջրի նորմերի հաստատում (ինչը մինչ օրս արված չէ), ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում

անտառմաքրման աշխատանքների ինտենսիվացում, աղբահանության և աղբի տեղափոխման խնդրի կարգավորում:

Ոռոգման համակարգում կոռուպցիոն մեխանիզմներ՝ Սևանա լճի հաշվին

Սևանի հիմնական խնդիրը շարունակում է մնալ ջրի մակարդակը: Լիճը փրկելու համար 1978 թվականին ստեղծվել է «Սևան» ազգային պարկը, իսկ ջրի մակարդակը վերականգնելու համար 1963–81 թվականներին կառուցվեց 48.3 կմ երկարությամբ Արփա-Սևան թունելը, այնուհետև, արդեն նորանկախ Հայաստանում 2004 թվականին շահագործման հանձնվեց 21, 6 կմ երկարությամբ Որոտան-Արփա ջրատարը, որի միջոցով գետի ջրերը հասցվում էին թունել, այնուհետև՝ Սևանա լիճ:

Նորանկախ Հայաստանում 1998 թվականից սկսած հետևողական քայլեր կատարվեցին Սևանի մակարդակը բարձրացնելու համար: Գիտնականների գնահատմամբ, լճի նախընտրելի մակարդակը ծովի մակարդակից 1901.5 մետրն է, որի դեպքում հնարավոր կլինի որոշակի չափով վերականգնել հիպոլիմնիումի շերտը: Այդ թիրախին հասնելու համար ընդունվել են օրենսդրական կարգավորումներ, պարբերական՝ ամենամյա իրավակարգավորող նորմեր՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրեր:

2018 թվականին Սևանին պաշտպանության եկած քաղաքական ուժը, սակայն, հետևողականորեն խախտում է օրենքներով սահմանված իրավական նորմերը և ձախողում անհրաժեշտ միջոցառումները: Հայաստանի գործող իշխանության կառավարման տարիներին Սևանա լճի մակարդակը հետևողականորեն իջնում է: Չնայած վերանորոգումից հետո 2019 թվականից լիարժեքորեն շահագործման էր պատրաստ Արփա-Սևան թունելը, բայց այն որևէ ազդեցություն չունեցավ այդ բացասական միտումի վրա: Վերջին 5

Սևանի ափերի մաքրումը

տարիներին Սևանա լճի մակարդակը նվազում է, ինչն արգելված է նույնիսկ «Սևանա լճի մասին» օրենքով:

Օրենքի 11-րդ հոդվածով սահմանված են լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, որի կետերից մեկով ամրագրված է. «Սևանա լճի ջրային բացասական հաշվեկշռի բացառումը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) և լճի էկոլոգիապես անհրաժեշտ մակարդակի բարձրացման ապահովումը»: Այսինքը, օրենքով սահմանված է, որ յուրաքանչյուր տարի նախորդ տարվա նկատմամբ լճի ջրի մակարդակը պետք է բարձրանա, կամ առնվազն մնա նույն մակարդակի վրա:

«Սևանա լճի մասին» օրենքի այս պահանջը սկսեց խախտվել նոր իշխանությունների օրոք՝ 2018 թվականից սկսած, ինչում կարելի է համոզվել՝ ուսումնասիրելով պաշտոնական վիճակագրությունը: Այսպես՝ լճի մակարդակը 2016 թվականի առաջին օրը եղել է ծովի մակարդակից 1900,190 մետր բարձրության վրա, իսկ վերջին օրը՝ 1900,463 մետր: 2017-ին միջին տարեկան մակարդակը եղել է 1900.60 մետր, իսկ ահա 2018 թվականի ավարտին լճի մակարդակը եղել է 1900.39 մ.՝ նախորդ տարվանից 0.07 մ-ով պակաս: Այդ տարի լճի միջին մակարդակը եղել է 1900.57 մ: 2019 թվականին տարվա վերջին լճի մակարդակը եղել է 1900.43 մ, իսկ 2020 թվականի տարվա վերջին՝ 1900.60 մ՝ 2017 թվականի մակարդակին: Դրանից հետո լճի մակարդակը նորից սկսել է իջնել՝ 2021 թվականի տարվա սկզբին լինելով 1900.52 մ, իսկ վերջին օրը՝ իջնելով մինչև 1900.43 մ: Արդեն 2022 թվականի առաջին օրը Սևանի մակարդակը ծովի մակերևույթից եղել է նույն՝ 1900.43 մետրի վրա, իսկ վերջին օրը՝ 1900.28 մ: Սևանի մակարդակն ավելի է իջել 2023 թվականին, երբ տարվա վերջին օրը ջրի մակարդակը հասել է աղետալի՝ 1900, 17 մետրի, 2016 թվականի ցուցանիշից 0.26 մետրով պակաս, ինչն օրենքի պահանջի խախտում է:

Ջրի մակարդակի նման բացասական ցուցանիշների պատճառ են նաև ոռոգման համար Սևանից ջրի հավելյալ բացթողումները: Ոլորտը կարգավորող իրավանորմատիվային կարգավորումներով սահմանված է, որ Սևանից կարելի է տարեկան մինչև 170 մլն մ^3 ջուր բաց թողնել, բայց լճի մակարդակի բացասական ֆոնին անգամ 2023 թվականին Հրազդան գետով բաց է թողնվել 228.23 մլն մ^3 ջուր: Այդ տարի Սևան մուտքերը եղել են 1213.66 մլն մ^3, իսկ ելքերը կրկին ավելին էր՝ 1302.13 մլն մ^3:

2022 թվականի տեղումնառատ տարում, չնայած Հրազդան գետով բաց է թողնվել 165.06 մլն մ^3 ջուր՝ նախատեսվածից 4.4 մլն մ^3-ով պակաս, բայց տարվա ընթացքում լճից ջրի ելքը կրկին գերազանցել է տարեկան մուտքերը՝ 1284.16 մլն մ^3-ը 1152.0 մ^3-ի հարաբերակցությամբ: Նախորդող տարիներին լճից Հրազդան գետով բացթողումները եղել են համապատասխանաբար՝ 2021 թվականին՝ 227.65 մլն մ^3, 2020թ.՝ 162.39 մլն մ^3, 2019 թ՝ 143.86 մլն մ^3, իսկ 2018 թվականին 200.62 մլն մ^3 և բոլոր վերոնշյալ տարիներին լիճ մուտքերն ու ելքերը եղել են բացասական հարաբերակցությամբ:

Սևանա լճի նման հյուծման պատճառը հանրապետությունում ոռոգման համակարգի մաշվածությունն է ու կոռուպցիոն դրսևորումները: Խորհրդային տարիների 280 հազար հա հողատարածքի փոխարեն այժմ Արարատյան դաշտում ամենալավատեսական հաշվարկներով մշակվում է մոտ 130 հազար հա: Տարեկան ոռոգման համար տարբեր հաշվարկներով անհրաժեշտ է մոտ 350 մլն մ^3 ջուր, և տարիներ են եղել, որ ոռոգման համակարգում հաշվարկվել է 50-70 % կորուստ: Միամտություն կլինի կարծել, թե նման ահռելի քանակության ջուրը, որը մեծ արժեք ունի, Հայաստանում կորչում է հնամաշ ոռոգման համակարգի ջրուղիների ճեղքերից, միանշանակ է, որ այդտեղ գործում է կոռուպցիոն խոշոր մեխանիզմ, որը տարիներ շարունակ արմատավորվելով ներկայում էլ ավելի է խորացել: Այս ամենի հետևանքը լինում է այն, որ օրենքի խախտում համարվող Սևանի մակարդակի բացասական հաշվեկշռի դեպքում էլ ոռոգման անվան տակ լճից ջուր է մատակարարվում Արարատյան դաշտ՝ հագուրդ տալով որոշ շրջանակների կոռուպցիոն ախորժակներին:

Մյուս կողմից էլ, Որոտան-Արփա ջրատարով Արփա-Սևան թունել անհրաժեշտ քանակով ջուր չի հասնում, քանի որ այն մղվում է այդ հատվածում գտնվող մասնավոր ՀԷԿ-երին՝ էլէկտրաէներգիա մատակարարելու համար, և նախատեսված ջրի մի չնչին հատվածն է միայն հասնում Սևանա լիճ՝ այն էլ միայն գարնանը և ձմռանը: Այստեղ կրկին որոշակի շրջանակների եկամուտներն են որոշիչ դեր խաղում:

Սևանա լիճը ծաղկած վիճակում

Պետական կառավարման ձախողումը՝ Սևանի խնդիրների կուտակման հիմք

Վերոնշյալ խնդիրները, որոնք պետական կառավարման կոպիտ թերացումների և օրենքի խախտումների հետևանք են, հանգեցրել են Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական առաջնային նշանակություն ունեցող Սևանա լճի աղետալի վիճակին: Այն դեպքում, երբ տարածաշրջանի գրեթե բոլոր պետություններն ունեն քաղցրահամ ջրի խնդիր, որը խորանում է գլոբալ կլիմայական փոփոխությունների հետևանքով՝ Հայաստանում հանցավոր մոտեցում է ցուցաբերվում պետության առանցքային հենասյուն հանդիսացող Գեղամա ծովի նկատմամբ: Այն կանխելու համար պետք է դադարեցնել սպառողական մոտեցումը Սևանի հանդեպ և ընդամենը կատարել ընդունված օրենքի պահանջները, Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պետական քաղաքականության հիմնական սկզբունքների համաձայն.

«- Սևանա լիճը և նրա ջրհավաք ավազանը, ըստ տարածքի գործառնական բնույթի, որպես մեկ ամբողջական համակարգ դիտարկելը.
- կենսաբազմազանության պահպանության գերակայությունը.
- Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի տարածքներում էկոլոգիապես մաքուր և անվտանգ տեխնոլոգիաների, այդ թվում՝ կենսատեխնոլոգիաների պարտադիր կիրառումը.
- կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և դրանց բնապահպանական պետական, ինչպես նաև օրենքով սահմանված այլ փորձաքննությունների պարտադիր ապահովումը.
- բնօգտագործման ավանդական ձևերի խրախուսումը և դրանց աջակցությունը»:

Տեղեկանք

Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի՝ քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Առաջինը Հարավային Ամերիկայում գտնվող Տիտիկակա լիճն է: Սևանի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է միջինը 1260 կմ² և ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 46.8 մ է, ամենախոր հատվածը գտնվում է Փոքր Սևանում և 83 մ է: Ջրի ծավալը 32, 92 մլրդ մ³ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ. միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9 մ):

Սևանա լիճը Հայկական բարձրավանդակի՝ մեծությամբ երրորդ լիճն է՝ Վանա լճից և Ուրմիայից հետո: Ի տարբերություն վերջիններիս՝ Սևանից գետ է հոսում, ինչի արդյունքում էլ այն ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, և սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում՝ հրաբխային գործունեության հետևանքով միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրերի լցվելու արդյունքում:

Օննիկ պապիկի՝ մնացորդաց սերնդի հայի թափառական ճակատագրի մասին

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Երբ Ուշիում հատիկ-հատիկ կարդում եմ Մարգար Շարապխանյանի (1937-2023) արխիվի նյութերը, առանձնահատուկ հուզումով եմ թերթում «Արձագանգ»ի այն էջերը, որտեղ հանդիպում եմ պարոն Մարգարի հոր՝ Օննիկ Շարապխանյանի (1903-1984) ստորագրությանը: Թղթերի միջից դուրս եկավ «Հորիզոն» (Մոնրեալ) թերթի 1984 թ. 31-32-րդ համարի կտրոնը՝ Օննիկ պապիկի հիշատակին նվիրված հոդվածով:

Մեծ Նոր Գյուղի «երեւելի ընտանիքի զաւակը» նախ Պոլիս է մեկնում, ապա ուսանում Պարտիզակի ամերիկյան վարժարանում: Շարապխանյանների գերդաստանն անցնում է աքսորի անհույս ճամփաներով: 12 տարեկան «բոլորովին մերկ» տղան քրդի այծերն է արածացնում մեկ տարի, հետո փախչում մոտակա ասորական (ուրեմն՝ քրիստոնյա) գյուղ և ասորի ընտանիքի խնամքի շնորհիվ ջուլհակություն է սովորում: Մի քանի տարի անց մեծ դժվարությամբ միանում է իրենից տարիքով մեծ երկու եղբայրներին, որոնց հետ վերադառնում է հայրենի գյուղ: Եղբայրներից մեկի սպանությունից հետո մյուս եղբոր հետ ապաստանում է Հունաստանում, դառնում Գալամաթայի հայ համայնքի գործոն անդամներից: ՀՅԴ անդամ էր, երկար տարիներ ուսուցիչ էր տեղի հայկական վարժարանում, որի հոգսը հոգում էր նաև իր սուղ նյութական միջոցներով: Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Շարապխանյանները երեք զավակներով տեղափոխվում են Աթենք:

1965-ին Օննիկ Շարապխանյանը Կանադայում միանում է իր զավակներին՝ մնալով նույն հոգատար ու գործուն հայ մարդը, կուսակցականը: «Տիպար հայր եւ տիպար հայ՝ նուիրուած ընտանիքին, զաւակներուն ու թոռներուն, միշտ ալ ժամանակ գտած է հետեւելու հայկական կեանքին եւ մամուլին,– կարդում ենք «Հորիզոն» թերթի այդ համարում: – Յոյժ ընթերցասէր, լաւատեղեակ Հայկ. Անցեալի պատմութեան ու ժամանակակից հոլովոյթին, միշտ կը պրպտէր Ջարդին մասին գրուած գրքերը եւ իր անձնական փորձառութեան փաստացի տուեալները կը գտնէր: Միշտ աշխոյժ եւ գործի գլուխ»:

Ներկայացնում եմ «Արձագանգ»ի էջերից մի քանիսը:

ԿԱՂԱՆԴ Է

Դուրսը ցուրտ է: Երկինքը ծածկուած է գորշ ամպերով: Հովը սաստիկ կը փչէ ու իր սուլոցներով կարծես եղանակ մը կը յօրինէ: Ակամայ կը պարեն ամպերը՝ իրենց շրջազգեստներու քղանցքներով ալելով տանիքներու կատարները:

Ձիւն կը տեղայ. կարծես թիթեռնիկներու պարն է, որ տեղի կ'ունենայ օդին մէջ: Գետինը փռուած սաւանի մը տեսքը ունի ու կը նմանի ալեկոծ ծովու մը:

Տղաքը փողոց թափուած են, ուր տեղի կ'ունենայ ձիւնամարտ մը: Անոնց ձեռքերը սառած ու քիթերը կարմրած են, մեր պարտէզի լոլիկներուն պէս: Ոմանք կը դողան ցուրտէն, սակայն չեն ուզեր հրաժարիլ իրենց զուարճութենէն:

Ձեռքերս կզակիս սեղմած, նստած եմ պատուհանի առջեւ, այս օտար ափերուն: Կը դիտեմ դուրսը, մանկութիւնս ու գիւղս կը վերյիշեմ երազուն:

Առուներ սառած, տանիքներէն շարան-շարան կախուած են սառոյցներ՝ նման մեր աղօթարանի մոմերուն: Հեռուն՝ Քէլ Տէփէն, ձիւնը ծածկած է անոր ճաղատութիւնը՝ զայն նմանցնելով քօղազարդ հարսի մը՝ որ անհամբեր կը սպասէ իր փեսային: Աւելի մօտը՝ Պօղոս Աղայենց քարին վրայ, խումբ մը գայլեր կ'ոռնան քաղցէն:

Մանրանկար բլուրներու շարք մը կ'երկարի մինչեւ բազար-գիւղը: Ո՜հ, կը յիշեմ, քարի դեզեր են անոնք, որոնք պիտի ծառայէին խճուղի մը շինելու, բայց, աւա՜ղ:

Երկու հուժկու ձիեր կառք մը կը քաշեն դէպի գիւղ՝ պայքարելով ձիւնին ու մրրիկին դէմ: Կառքին առաջամասին կառապան Մելքոնն է նստած, որ մերթ աղաչանքով, մերթ սաստով իր ձիերը կը մղէ յառաջ:

Վարը՝ կապուտակ լիճը, երկայնքին փռուած մինչեւ հինաւուրց, պատմական քաղաքը՝ Նիկեա: Մեղմ ալիքներ, մին միւսը հրելով, կը հասնին լճափ ու կը հարուածեն ուռենիներու շարքը:

Օդը՝ ամպամած, լուսինը տժգոյն՝ կ'ուզէ լիճը լուսաւորել, բայց ամպերու պատուարը արգելք կ'ըլլայ իր բաղձանքին: Երբեմն ցոլք մը կը յաջողի թափանցել, թացութիւն մը իջնել դէպի ցած: Այդ մի-

ջոցին ալիքներու պղպջակները, մարգարիտներու փոխուելով, աւելի կը հարստացնեն զայն: Այսպէս գեղեցիկ էին Նիկիոյ լիճն ու Մեծ Նոր գիւղերը:

Խումբ մը մշակներ, որոնց մէջ իր բարձր հասակը ցցած է Դամանենց Մանուկը, բահերը ուսերնին՝ կը շտապեն դէպի գիւղ:

Կաղանդ է:

Խոկումէս զարթուն, կը տեսնեմ՝ դուրսը տղաք տակաւին ցնծութեան մէջ են: Կը թաւալին ձիւնին մէջ, զիրար կը հարուածեն ձիւնէ գնդակներով ու անհամբեր կը սպասեն Կաղանդ Պապային: Կը խօսին իրենց նուէրներուն մասին, կը փորձեն մին միւսը գերազանցել իրենց ստանալիք ընծաներով՝ ինծի համար խորթ ու դժուարհասկնալի լեզուով մը:

Բոլորին աչքերը սեւեռած են մօտակայ բլուրին՝ ուրկէ դէպի վար կը սահի սահնակ մը լծուած չորս զոյգ եղնիկներով: Կաղանդ Պապան է, որ կու գայ, կոնակը պարկ մը լեցուն խաղալիքներով ու ընծաներով բեռնաւոր:

Կ'ուզեմ ձեռքերովս փող կազմել ու պոռալ ուժով՝ ինչո՞ւ այդ խեղճ կենդանիները կը չարչարես լծելով սահնակիդ. չէ՞ որ բերած նուէրներդ ոչինչի ծառայեցին. այդ մենք լաւ գիտենք:

Կաղանդ Պապան չ'ուշանար մեր փողոցն ալ հասնելու: Երախաները զինքը պաշարեր են արդէն, եւ բոլորին սառած ձեռքերը օդին մէջ, կը փորձեն ժամ առաջ խլել իրենց բաժինը: Կաղանդ Պապան, «Ապրի՛ք, շա՛տ ապրիք» ըսելով կը բաշխէ:

Վերջին ծրարը ձեռին, գիս կը տեսնէ պատուհանիս ներսը, ձեռքի շարժումով մը կը հասկցնէ, թէ կը փափաքի ինծի տալու:

– Չեմ ուզեր,– կ'ըսեմ գլուխս վեր-վար շարժելով:

– Ինչո՞ւ կը մերժես. չէ՞ որ դուն ալ տարիներու բեռան տակ ընկճուած մանուկ մըն ես:

Գիտեմ, որ ինք անմեղ է, սակայն իր նախորդներուն հանդէպ ունեցած դառնութիւնս իր վրայ կը թափեմ:

– Հազիւ աչքերս բացած ու սեւեռած ապագային, փոխան իմ խնդրած համեստ նուէրիս, իմ բաժինը եղաւ անծայրածիր անապատներու տաժանքը, ուր թշուառութեան մինչեւ վերջակէտը հասնելով՝ ակամատես եղայ իմ սիրելիներուն անխնայ կոտորումին, ի վերջոյ, հազիւ կարողացայ մազապուրծ փրկուիլ այդ ահաւոր սպանդէն:

Մարդը, ձեռքը ծնօտին դրած, ուշի-ուշով մտիկ կ'ընէ գիս, զարմացումի արտայայտութիւններ դէմքին վրայ՝ չարիքներու ունկնդիր:

– Երիտասարդութեան կանաչ օրերուս, թէեւ կրկին փորձը յիմարութիւն էր, դարձեալ սպասեցի լաւ նուէրներու: Դժբախտաբար կրկին աւեր ու սպանդ եղաւ քու ընծան: Արմատախիլ մեր հայրենի ու պապենական օճախներէն, փոթորիկէ քշուած շիւղերու նման, աշխարհի չորս ծագերուն ցիր ու ցան:

Կաղանդ Պապան անհանգիստ՝ կրկին երկարեց նուէրը:

– Դուն կ'աշխատիս կրկին գիս խաբել, որպէս ալեհեր մանուկ, բայց կը սխալիս. ինչու որ քու նախորդներուդ գէշ նուէրներուն ազդեցութեան տակ է, որ կ'ապրիմ իմ վերջին օրերը: Օտարութեան մէջ դառնութեամբ կը լսեմ շուրջիս հայորդիներու այլալեզու ճռուողումը, որոնք կը սպառնան ականջներուս թմբուկը պայթեցնելու:

Ճարահատ կ'ըսէ.

– Գիտէ՞ք մէկը, որուն կրնամ տալ այս վերջին նուէրս:

– Այո՛,– կ'ըսեմ,– կրնաս տալ թուրքին, որ, հակառակ իր գործած չարիքներուն ու նախճիրին, անպատիժ է ու շատերուն գուրգուրանքին առարկայ:

Մարդը դուռը բացաւ եւ դուրս ելաւ:

– Պակաս ըլլայ նուէրդ,– ըսի ...

Բայց ես առանց Կաղանդ Պապայի ալ կարող եմ իմ սրտաբուխ նուէրներս տալ իմ ազգիս զաւակներուն անխտիր՝ մաղթելով, որ իրենց ճիգն ու ջանքը անսպառ ըլլայ հայօրէն մտածելու եւ գործելու համար, որպէսզի տոկան մեզի համար ալ անկեղծ եւ բարի տարիներ:

«Արձագանգ» ամսաթերթ (Թորոնթօ),
1972 թ. 12-րդ համար

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սովորութիւն եղած է ինծի համար ամէն առաւօտ փողոց նետուիլ: Այսօր դարձեալ դուրսն եմ, ծծելու համար հանապազօրեայ թարմ ու կենսատու օդը:

Կը հանդիպիմ ընկերոջս, որուն անունը չեմ ուզեր յայտարարել, չծանօթացնելու համար: Ան ամէն ինչ բախտի վերագրող մէկն է՝ նախապաշարումներով լեցուն անձ մը: Ջիրար բարեւելէ ու բարի մաղթանքներ յայտնելէ վերջ, այսպէս կ'ըսէ.

– Նշանաւոր բախտագուշակ մը կը ճանչնամ: Անցեալ օր իրեն այցելեցի, լսեցի ստոյգ եւ ճշգրիտ գուշակութիւններ, ապագային ինծի սպասող: Դուն ալ գնայ, բան մը չես կորսնցներ, այցեգինը 5 տոլար է միայն:

Կը խոստովանիմ որ գուշակներու տաղանդին վրայ այնքան ալ հաւատք չունիմ, սակայն չեմ գիտեր ինչո՞ւ միտքս փոխեցի, եւ որոշեցի երթալ բախտագուշակին մօտ, լսելու համար ոչ թէ իմ ապագային

գալիք նորութիւնները, նկատելով որ այլեւս շա՜տ ուշ է ինծի համար, այլ լսելու համար Սփիւռքի հայութեան գալիք անակնկալներուն՝ տարեմուտի առթիւ:

Յաջորդ օրը, մատս բախտագուշակին դրան զանգին կոճակը սեղմեց: Ձիս առաջնորդեց առանձնասենեակը: Մէջտեղը սեղան մը կար, վրան՝ փոշեթաթախ գրքեր, կլոր գունտ մը, որ կը դառնար հրշէջներու կառքին գունտին նման. տարբերութիւնը այն էր, որ, փոխան կարմիր լոյսին, կը տեսնէի ինծի համար նորութիւն եղող անծանօթ բաներ:

Իր դիմացի աթոռը ցոյց տուաւ, երբ նստեցայ, բաց ափը ինծի երկարեց՝ պահանջելով իր այցեգինը:

– Ի՞նչ իմանալու եկած էր, պարո՛ն:

– Սփիւռքի հայութեան գալիք նորութիւններուն համար:

Մարդը յօնքերը կիտեց եւ ըսաւ.

– Այն ատեն տարբեր է ձեր վճարումը, որովհետեւ ժողովուրդի մը համար են գուշակութիւններս՝ նուազագոյնը քսան տոլար:

Ակամայ պարի մէջ մտած էի, ստիպուած էի շարունակել՝ ցնծալով յաւելեալ գումարն ալ:

– Հիմա հարցումներդ ուղղէ՛, ես, մոգական գունտիս մէջ տեսնելով, պիտի պատասխանեմ:

Քսան տոլարնոց գուշակութիւն լսելու միտումով, թեւերս սոթտելով, սկսայ.

– Կը փափաքիմ լսել, թէ ի՞նչ վիճակի պիտի հասնին Սփիւռքի հայութեան ազգապահպանման աշխատանքները եւ ուծացման վտանգը:

Գուշակը կեցաւ վայրկեան մը, խորհրդաւոր դէմքի արտայայտութիւն առաւ ու ըսաւ.

– Կը տեսնեմ կազմակերպութիւններ, միութիւններ, ամէն ջանք կը թափեն ուծացման վտանգին առաջը առնելու: Բազմութիւն մը՝ն ալ կեցած է անդունդի մը եզերքը՝ երերուն, գահավէժ ըլլալու դատապարտուած: Վարը իրենց կը սպասեն կլափնին բաց՝ օտարազգի կլանողներ: Ազգին գործօն մասը կը զգուշացնէ, կառչած է գահավիժողներուն ու կ'աշխատի հեռու պահել զանոնք սպասող վտանգէն: Բոլորն ալ կրծքերնին ամուր կը ծեծեն՝ «Մենք հայ ենք» պոռալով: Այսպէսով իրենց ազգային պարտականութիւնները կատարած ըլլալու գոհունակութեամբ կ'ապրին:

– Ձիս շատ կը հետաքրքրէ բոլորի բաղձանք եղող միասնականութեան արդիւնքը:

Գուշակը պիշ կը նայի աչքերուս:

– Կը տեսնեմ ճառախօսներ, բանախօսներ, նաեւ հայկական թերթեր, որոնք կ'աշխատին հարթելու համար համաձայնութեան ուղին: Ոտքերնին ամուր գետինը կը զարնեն, տեղքայլի նման, առանց քայլ առնելու:

Գուշակը զիս չի խանդավառեր, բայց դեռ կը շարունակեմ.

– Ո՞ւր պիտի յանգի եկեղեցիներու շուրջ ստեղծուած տարակարծութիւնը:

– Կը տեսնեմ անթիւ եկեղեցիներ, փարթամ քահանաներ, դպիրներ, նոյնաձայն մեղեդիներ, շարականներ: Հաւատացեալները նօսրացած են: Արդէն ո՞ր կրօնքին մէջ չեն պակսած: Վեղարաւոր կրօնականներ, այցելութիւններ կը փոխանակեն: Կ'ըսեն թէ ամէն ինչ պիտի հարթուի: Դժուարութիւն կը հասցնեն ԵԹԷ, ՊԻՏԻ, ԲԱՅՑ բառերը: Այս բառերը միայն ձեր ազգը չէ, որ տարակարծիք պահած են, այլ բոլոր մարդկութեան գլխու փորձանքն են:

Կը ջղայնանամ ու կը հարցնեմ բախտագուշակին.

– Է՜հ, բարեկա՛մ, շատ երկարեցիր: Այդ երեք բառե՞րն են բոլոր չարեաց աղբիւրը:

– Կը սխալիք,– կ'ըսէ արժանապատուութիւնը վիրաւորուած գուշակը,– դուք կրնաք փորձել որեւէ բանակցութիւն կամ վէճ՝ գործածելով այդ բառերը: Ըսելով «ԵԹԷ մեր պայմանները ընդունիք, կրնանք համաձայնիլ», պատասխանը, «ԲԱՅՑ հակասահմանադրական է ձեր ըսածը»: «ՊԻՏԻ հարթենք դժուարութիւնները, ԵԹԷ ընդունիք մեր պայմանները», «ԲԱՅՑ դուք անդրդուելի կը մնաք...»: Կը տեսնեմ թանձր վարագոյր մը որ կը ծածկէ անհամաձայնութեան բուն պատճառները: Իմ կարողութիւնս չի ներեր թափանցելու աւելի խորը: Հիմա հասկցա՞ր, պարո՛ն: Դուք ձեր կեանքին մէջ ալ, այդ բառերը գործածելով, անպարտ կրնաք համարուիլ:

Տեղի տալու վրայ եմ իմ բարկութեանը, բայց քսան տոլարը կը յիշեմ:

– Ինչպէ՞ս կը տեսնէք մեր ժողովուրդի նիւթական վիճակը:

– Կան հարուստներ, շատեր ալ հարստանալու ճամբուն վրայ են, սակայն կարծես թէ դրամը պատճառ կ'ըլլայ, քայլ առ քայլ հեռացնելու ենթակաները հաւաքականութենէն: Կան բաւական թիւով անձեր, որոնք լիաբուռն կը մասնակցին, հաւատացէք, որ հրաշքներ կրնաք կատարել՝ փրկուելով ձեզի սպասող վտանգներէն:

Ցասումս իր գագաթնակէտին հասած էր, զայրոյթով պոռացի մարդուն երեսին:

– Բարեկա՛մ, ե՛տ տուր դրամս:

– Ինչո՞ւ,– կը պատասխանէ բախտագուշակը:

– Որովհետեւ անցեալ տարուան պատահածներն են, որ ինծի կը կլլեցնես, որպէս գուշակութիւն:

Ըմբոստանալու կարգը բախտագուշակին հասած էր.

– Ինչո՞վ եմ ես յանցաւոր, երբ այս տարի ալ նոյն բաներն են, որ պիտի պատահին: Իմ գուշակութիւններս երբեք սխալ չեն ելած:

Դուրս կը ցատկեմ այդ անիծեալ տունէն, քրտնաթաթախ ու բեկանուած սրտով: Գէշ խօսքեր ալ կ'ըսեմ իմ սիրելի բարեկամիս հասցէին՝ զիս խաբած ու ինծի սրտնեղութիւն պատճառած ըլլալուն համար ...

Յանկարծ զգաստ, ես ինծի հարց կու տամ, թէ ինչո՛ւ արժէք կու տամ ու ցաւ կը զգամ փուճ ու սին բաներու համար: Մաղթէ, աշխատէ, որպէսզի սուտ ըլլան չար մարդու գուշակութիւնները: Հայ ազգը ըլլայ աւելի տոկուն, գուրգուրալով իր գեղեցիկ բարբառին վրայ, զայն պահելով իր սրտի ամենատոկուն անկիւնը: Այն ատեն հալալ ըրէ մարդուն տուած ստակդ: Երբ մեր չար բախտէն, իրականանան գուշակութիւնները այս տարուան միջոցին, կ'երդնում, որ այլեւս ոչ թէ բախտագուշակի չեմ այցելեր, այլ[եւ] անէծք կը կարդամ՝ դառնութեամբ լեցուն: ■

«Արձագանգ» ամսաթերթ (Թորոնթօ),
1973 թ. 2-րդ համար

Սփիւռքը վարկաւորել ըստ արժանւոյն

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Սփիւռքը, որ diaspora բառին հայերէն համազօրն է, ունի իր գլխաւոր իւրայատկութիւնը, որ զինք կը տարբերէ այլ ժողովուրդներու նոյն այդ օտար բառով ճանչցուած սփիւռքներէն:

Մինչ այլոց պարագային իրենց հայրենիքէն դուրս ապրող արտագաղթած կամ դրսեծին մարդիկ կրնան նկատուիլ որպէս այդ diaspora-ները բաղկացնող տարրեր, առանց որ այդ սփիւռքները յատուկ կենսական առնչութիւն մը ունենան անոնց հայրենիքներուն հետ (զանց առնելով լեզուական ու մշակութային կապերը, երբեմն ալ տնտեսական կամ քաղաքական մեծ կամ փոքր նպաստները), մեր պարագային մեր ժողովուրդը կարելի չէ պատկերացնել առանց Սփիւռքին: Մերը առնչութեան հարց մը չէ: Անքակտելիութեան հարց է:

Հայաստան եւ Սփիւռք ամբողջութիւն մըն են, որքան ալ զիրենք բաժնող, իրարմէ տարբերող մեծ ազդակներ գոյութիւն ունենան, ինչպէս՝ հայերէնի լեզուաճիւղն ու ուղղագրութիւնը, վերջին 100-150 տարիներու պատմութիւնը, ներսէն թէ դուրսէն կրած ազդեցութիւնները եւ այլն:

Աւելի կարեւոր եւ ուժեղ են, սակայն, զիրենք միացնո՛ղ ազդակները, ինչպէս՝ լեզո՛ւն ինքը՝ հայերէնը, բազմահազարամեայ պատմութիւնն ու մշակոյթը ու մանաւանդ ապագան: Յատկապէս այդ վերջինն է, որ մեզ կը շաղկապէ, կը նոյնացնէ: Կը վերածէ մէկ ազգի՝ հայութեա՛ն:

Այո՛, կարելի՞ է հայութիւն ըսել ու անտեսել Սփիւռքը, որ իր թիւով քանի մը անգամ կը գերազանցէ տակաւին Հայաստան կամ Հայաստանի Հանրապետութիւն կոչուող մեր Հայրենիքի վերապրող մասնիկին վրայ հաւատարմօրէն ու վճռակամօրէն իր կեցութիւնը պահող մեր ժողովուրդէն:

Կարելի չէ՛:

Կարելի չէ, որքան ալ մեր թշնամիներն ու անոնց կամակատարները այդպէս ուզեն, այդպէս ջանան սեպ խրել մեր միջեւ, իրարմէ անջատել երկրին ու արտերկրին ապագաները:

Կարելի չէ, որքան ալ իր այլազանութեամբ, բազմերկրութեամբ, կազմակերպութիւններու, աւանդութիւններու եւ դիմագիծերու տարբերութիւններով Սփիւռքը չերեւի որպէս մէկ ամբողջութիւն:

Կարելի չէ, որքան ալ այդ իսկ պատճառաւ անկարելի կը թուի Սփիւռքը կառավարել, Սփիւռքը համախմբել ու միասնականացնել հայութեան ապագայի տեսլականով: Կը թուի, ոչ թէ իրապէս այդպէս է:

Չմոռնանք: Ոչ միայն թիւով, այլեւ իր ներուժով հայութեան ու Հայաստանի ալ ողնահարը Սփիւռքն է:

Իր տնտեսական կարողութիւններով:

Իր մշակութային հարստացմամբ:

Իր կազմակերպական փորձառութեամբ:

Իր քաղաքական յարաբերութիւններու լայն ծիրով:

Այս ըսելով չեմ ուզեր երբեք ստորագնահատել Հայաստանի կարեւորութիւնը Սփիւռքին համար:

Այո, չմոռնանք, Սփիւռքը սփիւռք չի՛ կոչուիր, չի կրնար կոչուիլ առանց Հայրենիքի, գլխագրուա՛ծ Հայրենիքի, որ անկասկած կը ներառէ իրական հողը, բայց նաեւ՝ Երազը, Տեսլակա՛նը: Վերցուցէք այդ վերջինը, Սփիւռքը կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքն իսկ:

Ահա թէ ինչու մենք պարտաւոր ենք պայքարելու, ամե՛ն զոհողութեան դիմելու պահելու, պահպանելու համար մեր «հողն այդ փոքրիկ»: Սակայն այդ զոհողութիւնները չենք կրնար ստանձնել, այդ պայքարը չենք կրնար տանիլ յանուն Հայրենիքին, եթէ մենք մեզ չկարենանք պահել, եթէ մենք կքինք ու տկարանանք, եթէ մենք սրբուինք աշխարհի երեսէն:

Ահա այդ պատճառաւ ալ շատ լաւ պէտք է գիտակցինք մեր դերին, մեր ներուժին, մեր գործին եւ աշխատինք կազմակերպականօրէն հզօրացնել մենք զմեզ:

Սփիւռքը չի կրնար փոխարինել Հայաստանը, Սփիւռքը Հայաստան չէ, սակայն Սփիւռքը Արտահայաստան է, եւ Հայաշխարհը այդ երկուքին անբաժանելի ամբողջութիւնն է:

Առաջարկ է, որ մեր բոլոր կազմակերպութիւնները իրենց գալիք աշխատանքները ծրագրելու ատեն մտահան չընեն այս իրողութիւնը:

Առաջարկ է, մանաւանդ, որ ՀՅԴ գալիք Ընդհանուր ժողովը, մեր ռազմավարութիւններն ու մարտավարութիւնները ճշտելու ատեն առաւել ուշադրութեամբ նկատի առնէ Սփիւռքի դերակատարութիւնը՝ ընդհուպ ամբողջացնելով Ծրագիր ու Կանոնագիր, վերարժեւորելո՛վ Սփիւռքը:

Սփիւռքը վարկաւորելով ըստ արժանւոյն: ■

Բաց նամակ «Դրօշակ» պաշտօնաթերթի խմբագրութեան

Առաջնորդվելով ազատ մամուլի պարտավորությամբ՝ հրապարակում ենք այս գրությունը, որի հեղինակն այն անվանել է «Բաց նամակ»: Ձերծ ենք մնում, որևէ մեկնաբանությունից այն թողնելով ընթերցողին, որը դրա համար ունի նաև Մովսես Ծիրանիի համապատասխան հոդվածն ընթերցելու հնարավորություն:

Խմբագրություն

Յարգելի ընկերներ,

Նամակիս դրդապատճառը՝ «Դրօշակ»ի 2024-ի վեցերորդ համարի «Հայ կեանք» բաժնին մէջ Մովսէս Ծիրանիի կողմէ ստորագրուած ««Բագին»ը եւ Խորհրդային Հայաստանի մտաւորականութիւնը «Բագին»ի 60-ամեակի առիթով» խորագրեալ յօդուածն է: «Ազդակ» օրաթերթը «Դրօշակ»ի նշեալ համարի բովանդակութեան ծանուցումը տուած էր իր 5 Յուլիս 2024-ի համարով, Մովսէս Ծիրանին ներկայացնելով «Իբրեւ այդ ժամանակի եւ շօշափուող իրադարձութիւններու գործուն դերակատար»: Ընդհանրապէս չեմ շահագրգռուած Մ. Ծիրանիի գրութիւններով, սակայն, այս յօդուածը, որուն խորագրին առաջին իսկ բառը՝ «Բագին»ն էր՝ հետաքրքրութիւնս քրքրեց եւ սկսայ կարդալ… այնտեղ գտնելով բազմաթիւ սխալ տեղեկութիւններ, որոնց պիտի անդրադառնամ առանձին-առանձին եւ մէջբերումներով:

Գրութիւնը կը սկսի 1979-ի յուլիսով մը, որուն խնդրոյ առարկայ անձը հայրս է՝ Պօղոս Մնապեանը: Նախ, առ ի տեղեկութիւն ըսեմ, որ այդ տարիներուն Մովսէս եւ իր եղբայրը՝ Պետիկ, հօրս Արեւմտեան Պէյրութի (Համրայի) բնակարանի յաճախակի այցելուներն էին, գրեթէ «բնակիչ»ները, որովհետեւ կու գային Այնճարէն եւ քաղաք մնալու համար ուրիշ ապաստան չունէին: Անոնք՝ երկուքն ալ կը վայելէին ոչ միայն հօրս, այլեւ մօրս անմիջական հոգածութիւնը: Մովսէս ուսանող էր Երեւան, եւ հօրս թելադրանքով ու ցուցմունքներով «Բագին»ի համարներ եւ այլ գրութիւններ կը հասցնէր Հայաստան, առ որ անկ է: Փակագիծ մը բանալով ըսեմ՝ որ 70-ական թուականներու վերջերուն Հ.Յ.Դ. Բիւրոյի կողմէ Հայաստան ուսանող դաշնակցական տղոց պարտականութիւն տրուած էր դաշնակցական մամուլը տարածելու հայրենիքի մէջ եւ փոխադարձաբար՝ հայրենի մտաւորականութենէն գրութիւններ հասցնելու Սփիւռք, ի մասնաւորի՝ Պէյրութ: Բիւրոյի կողմէ այդ աշխատանքին կը հսկէին Սարգիս Ջէյթլեան, իսկ գրական հարցերու պարագային՝ Պօղոս Մնապեան: Մէկ խօսքով՝ Մովսէս, որ խորհրդաւոր պայմաններու մէջ Մնապեանի տունը հրաւիրուած ըլլալ կը թուի, միակը չէր որ այդ աշխատանքը կը կատարէր, այլ, ինչպէս նշեցինք, շատ ուրիշ երիտասարդներ իրենց պարտականութեանը գիտակից՝ լռելեայն ու լիուլի կը հետեւէին իրենց տրուած ցուցմունքներուն եւ յանձնարարութիւններուն: Մինչդեռ ինք՝ Մովսէս, նուազագոյն յղում իսկ չի կատարեր այդ մասին եւ ինքզինք կը ներկայացնէ իբրեւ այդ գործին միակ «դերակատարը»…

Նկարագրուած հանդիպումին ժամանակ Մնապեան իր մտահոգութիւններն ու մտածումները «կը պարզէ» այն օրերուն տակաւին շատ երիտասարդ ու անփորձ Մովսէս Հերկէլեանին, ըսելով թէ՝ «Ղեկավարութիւնը տրամադրուած է փակելու «Բագին»ը, որովհետեւ պահանջուած նիւթաբարոյական զոհողութիւնները չեն արդարացներ արդիւնքը: Ընթերցողները չափազանց պակսած են: Պատկերացուր, որ «Բագին»ի բաժանորդներուն թիւը տասէն վար է: Եւ եթէ այսպէս շարունակուի եւ «Բագին»ը փակուի, արդարօրէն, ոչ ընթերցողները կը շատնան, ոչ գրողներու մակարդակը կը բարձրանայ եւ ոչ ալ կուսակցութեան նիւթական վիճակը կը բարելաւուի»: «Բագին»ի հասցէին շպրտուած այս անհիմն ու բացարձակ սխալ տեղեկութիւնները ոչ միայն վիրաւորական են երեսուն տարի շարունակ «Բագին»ի նիւթաբարոյական հովանաւորութիւնը ստանձնած Հ.Յ.Դ. Բիւրոյին համար, այլեւ վնաս կը հասցնեն «Բագին»ի վարկին եւ անունին: Ճիշդ է որ Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն Արտասահմանի հետ կապի, կամ փոխադրութեան դժուարութիւններ կային եւ բաժանորդներուն թիւը զգալի կերպով նուազած կրնար ըլլալ, բայց երբեք, երբեք «10-էն վար»ի սահմաններուն հասած չէր: 70-80-ական թուականներուն, Լիբանան տակաւին հայկական եռուն դիմագիծ ունէր եւ «Բագին»ի ցրումը, թէեւ ոչ կանոնաւորաբար, իր հունով կ՚ընթանար: Եթէ հազարաւոր բաժանորդ ըսելը չափազանցութիւն է, ապա ուրեմն՝ հարիւրաւորը արդար պիտի ըլլար («Բագին»ի հիմնադրութեան օրերուն բաժանորդներու թիւը կը հասնէր 2000-ի, պարագայ մը, որմէ խմբագրապետ Կարօ Սասունի գոհ չէր եւ կը փորձէր այդ թիւը բարձրացնել 2500-ի (Տես «Նամակներ Պօղոս Մնապեանին», Պէյրութ, 2023, Կարօ Սասունիի 29 Նոյեմբեր, 1962 թուակիր նամակը, էջ 234): Ուելի՛ն, Հ.Յ.Դ. Բիւրոն երբեւէ «Բագին»ը փակելու մասին մտածած չէ, ընդհակառակը, ի գին մեծ զոհողութիւններու շարունակած է հրատարակութիւնը անընդմէջ (հետամուտ ըլլալով նաեւ անոր տարածումին), մինչեւ անոր փոխանցումը Համազգայինի Կեդրոնական վարչութեան (1994): Նոյն պարբերութեան մէջ, դարձեալ Մնապեանի բերնով՝ «Անձնապէս շատ մտահոգուած չեմ գործս կորսնցնելով, կրնամ Այնճարի մէջ խանութ մը բանալ եւ ընթացքին կամ շարունակել «Միջնաբերդ» տարեգիրքը կամ ալ նոր պարբերական մը սկսիմ հրատարակել Անդրանիկ Ծառուկեանի նման»:

Ջրոյցին թուականը 1979 ըլլալով՝ նշենք որ Մնապեան արդէն 1974-ին Այնճարի մէջ բացած էր հանրախանութ մը (Մինի մարկետ), որուն ամբողջ գործառնութիւնը ստանձնած էր մայրս: Գալով «Միջնաբերդ» տարեգիրքին, որ երկու համարներով լոյս տեսած էր, առաջինը՝ 1957-ին եւ երկրորդը՝ 1959-ին, չեմ կարծեր որ Մնապեան մտադրէր շարունակել անոր հրատարակութիւնը 20 տարի ետք, տնտեսական դժուարութիւններու կամ այլ դառն փորձառութիւններու պատճառով: Իսկ արդեօք Պօղոս Մնապեան կարիք ունէր «Անդրանիկ Ծառուկեանի նման» հանդէս մը հրատարակելու, թէ արդէն ան կայացած խմբագիր մըն էր… Շարունակենք:

Ըստ Մովսէսի՝ «այս անգամ, իսկապէս, խնդիրը լուրջ է» եւ ինք՝ Մովսէսը «Բիւրոյի նիստերուն, թէ ընդհանուր պատգամաւորական ժողովներուն» մէջ քննարկուած հարցերէն տեղեակ ըլլալու ինքնավստահ հաստատումներ ալ կ՚ընէ… Ապա, Մնապեանի բերնով ըսել կու տայ՝ «Ճիշդ ես, Մովսէս, լաւ կ՚ըլլայ, որ այս կէտը եւս յատուկ շեշտես [Բիւրոյի հետ] հանդիպման ժամանակ» եւ… «Պէտք է պատրաստուած երթանք»… Պօղոս Մնապեան երեւի պէտք ունէր Մովսէս Հերկէլեանի մը կարծիքը եւ խորհուրդները առնելու Բիւրոյի հետ հանդիպման երթալու համար, նոյնիսկ՝ «նոթեր ալ գրած էր» …

Ըստ Մովսէս Ծիրանիի դարձեալ՝ «Արտաշէս Տէր-Խաչատուրեան, Վահէ Սէթեան, Յակոբ Իսկէնտէրեան, Աւօ Թումայեան, Ժիրայր Դանիէլեան տարբեր միջոցներով կ՚օգնէին «Բագին»ին»: Թէ ինչ էին այդ «միջոցները» եւ ինչո՞ւ միայն յիշատակուած այդ անձերը ինչ-որ բանով «կ՚օգնէին» «Բագին»ին, մենք չենք գիտեր, պէտք է թերեւս աւելի մանրամասնութիւններ «իմանալ» Ծիրանիէն, որ այնքան հաստատ է իր տեղեկութիւններուն մէջ: Իսկ «Գր. Պըլտեանի եւ Մ. Նշանեանի նման գրողներ» ինչո՞ւ Պօղոսը «կը փորձէր հեռու պահել «Բագին»էն», պատճառը չի յստակացներ Ծիրանին, սակայն «Բագին»ի էջերուն բազմիցս իրենց ստորագրութիւնները թողած այս երկու գրողները վստահաբար երախտապարտ են «Բագին»ի մէջ տպագրուելու համար (նկատի ունիմ Պօղոս Մնապեանի խմբագրութեան օրերու «Բագին»ը):

Պօղոս Մնապեան «մասնագիտական կանոնաւոր կրթութիւն ստացած չըլլալու բարդոյթը կ՚ապրէր»,– կ՚ըսէ Ծիրանին: Թէեւ անհասկնալի են այս նախադասութեան գոյութիւնն ու միտք բանին այստեղ, բայց առ ի տեղեկութիւն աւելցնեմ, որ հայրս ո՛չ մէկ ատեն բարդոյթ ունէր այդ ուղղութեամբ, իսկ երբ Հայաստանի մտաւորական շրջանակը, օրին, պատուաւոր դոկտորի կոչում ուզեց շնորհել իրեն՝ կտրուկ մերժում ստացաւ: Հօրս դոկտորական վկայականները եղան գրական իր հարուստ ժառանգութիւնն ու հասցուցած սերունդները:

Յօդուածը կը շարունակուի (Երեւան, Քոչարի փողոց, 1997 Սեպտ.) յուլիսով մը, ուր տեղ գտած է սա հեքիաթը. «Պօղոս Մնապեանը ստալինեան հալածանքները որակեց «երկրորդ եղեռն» Սարգիս Ջէյթլեանի թելադրանքով»: Պօղոս Մնապեանը ո՛չ ոքի պէտք ունէր իր խորագիրները ընտրելու համար: Աւելի ուշ՝ 2008-ին Մնապեան հրատարակեց «Երկու սպանդ» անուն հատոր մը՝ Ստալինեան հալածանքներուն վերաբերեալ, զուգահեռ մը գծելով Առաջին Սպանդին հետ:

Աւելի անդին՝ ««Բագին»ի «Գրական խմբակ»ի ղեկավար նշանակուած էր Պօղոս Մնապեանը» հաստատումը, մեղմ ասած՝ գլորուած սուտը, միանգամընդմիշտ սրբագրել կ՚արժէ, որովհետեւ նշեալ գրական խմբակի ստեղծումը Պօղոս Մնապեանի անձնական նախաձեռնութիւնն էր եւ ո՛չ թէ նշանակովի պարագայ մը: «Բագին»ի շուրջ խմբուած էին խումբ մը գրասէր երիտասարդներ, որոնք, շնորհիւ իրենց Պարոնին, «գրեթէ բոլորը յետագային եղան յայտնի գրողներ եւ կամ հրապարակախօսներ» (Փա՛ռք Աստուծոյ այս վերջին հաստատումը ճիշդ է):

Կը մէջբերուին նաեւ հայրենի պատկառելի մտաւորականներու անուններ, վաւերական թէ նոր սերունդի գրողներ, որոնց կապը «Բագին»ն էր, այո՛, բայց Ծիրանին սոսկ գրաբեր մըն էր: Ինչեւէ:

Յարգելի խմբագրութիւն, Ես անդրադարձայ այն կէտերուն, որոնք ուղղակի առնչութիւն ունէին հօրս հետ: Կասկածով կարդացի յօդուածին մէջ տեղ գտած այլ տեղեկութիւններ: Ասցնինք: Կ՚արժէ սակայն յետադարձ ակնարկ մը նետել «Բագին»ի անցած ուղիին եւ առնուազն վերակարդալ այս խիստ հետաքրքրական նիւթին շուրջ ծաւալած վերլուծումներն ու քննարկումները եւ Պօղոս Մնապեանի ակնարկներն ու նշմարները, որոնք թերեւս ստուար հատոր մը կրնան լեցնեն…

Անշուշտ մեռած մարդոց բերնին մէջ խօսքեր դնելը շատ հեշտ է, «երբ որ գայլը հոս չէ», ինչպէս կ՚ըսեն: Բնական է, որ մարդիկ ազատ խօսքի իրաւունքը ունենան, բայց իրենց չափն ու սահմանը պէտք է գիտնան:

Պօղոս Մնապեանը հայրս է, բայց վստահաբար իմ կամ ոեւէ մարդու պաշտպանութեան կարիքը չունի: Հին թէ նոր, սփիւռքահայ թէ հայրենի մտաւորական շրջանակներու մէջ իր հեղինակութիւնը կերտած գրողգրաքննադատ-խմբագիր-հրապարակագիր-ուսուցիչն է, որմէ շատ բան ունէինք եւ ունինք սորվելիք տակաւին: Պօղոս Մնապեանի շուքն անգամ դեռ երկար պիտի հալածէ այն անձերը, որոնք եթէ աւելի քաջ ըլլային, ողջերուն ողջութեան պիտի ստորագրէին նման յօդուածներ:

Յարգանքով՝
Ի դիմաց Պօղոս Մնապեան ընտանիքի՝
Թամար Մնապեան-Սուրճեան

ՀՅԴ Բյուրոյի ուղերձը՝ Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առթիվ

ՀՅ Դաշնակցության համար հայոց անկախ պետականությունը եղել և մնում է անսակարկելի արժեք

Սիրելի՛ հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման 33-րդ տարեդարձը կարևոր առիթ է արժևորելու անկախ պետականության կայացումը, ինչպես և անդրադառնալու մեր պետության առջև ծառացած մարտահրավերներին: Անկախ պետականությունը յուրաքանչյուր ազգի ինքնակազմակերպման բարձրագույն ձևն է և բաղձալի երազանքը: Այս նվաճումը պահպանելն ու զարգացնելը պահանջում են հետևողական և համառ պայքար:

Հայ ժողովուրդն հերթական անգամ պատմական ընտրության առջև կանգնեց 1991 թ. և արցախյան գոյամարտի բովում կյանքի կոչեց ազատ ու անկախ ապրելու դարավոր իղձը: Անցած երեք տասնամյակների ընթացքում, չնայած առկա խնդիրներին և բացթողումներին, մեծ առաջընթաց արձանագրվեց հայոց նոր պետականությունների կայացման ասպարեզում, ձևավորվեց ուժեղ և հուսալի բանակ, զարգանում էր երկրի տնտեսությունը, Հայաստանն արտաքին աշխարհին ներկայանում էր որպես հարգանքի արժանի պետություն: 30 տարուց ավելի Արցախի անկախ Հանրապետությունը գործեց ու արարեց հայ ժողովրդի անընկճելի ոգու, տաղանդի, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության շնորհիվ: Հայ Յեղափոխական Դաշնակցությունը մշտապես և իր ողջ կարողականությամբ եղավ հայոց երկու Հանրապետությունների զարգացման գործընթացի մասնակիցը:

Հայաստանի Հանրապետության այսօրվա իշխանության ազգավնաս գործունեությունը հանգեցրեց Ադրբեջանի ցեղասպանական գործողությունների միջոցով Արցախի հայաթափմանը: Այսօր արդեն անմիջական սպառնալիքի ներքո են հայտնվել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու անկախությունը:

Աշխարհաքաղաքական ներկա պայմաններում հայ ժողովրդից պահանջվում է բացառիկ համախմբում և ոգու արիություն պաշտպանելու և պահպանելու համար Հայաստանի Հանրապետության անկախությունն ու ինքնիշխանությունը, վերականգնելու՝ մեր ազգային արժանապատվությունն ու ազգային արժեքների դերը:

Այս մարտահրավերների լուծումը պահանջում է Հայաստանում նոր որակի իշխանության ձևավորում, որի առաջնահերթ անելիքները պետք է լինեն Հայաստանի արտաքին և ներքին անվտանգային հուսալի համակարգերի ձևավորումը, պատմական բնօրրան՝ արցախահայության վերադարձի խնդրի հետապնդումը: Իշխանություն, որը հայ ժողովրդի համար կապահովի իրական խաղաղություն և բարգավաճում:

Հայ Յեղափոխական Դաշնակցության համար հայոց անկախ պետականության գոյությունը եղել և մնում է անսակարկելի արժեք:

Սիրելի հայրենակիցներ,

Շնորհավորելով անկախության տոնի առթիվ մենք խոնարհվում ենք Հայաստանի անկախության և ինքնիշխանության համար նահատակվածների անմար հիշատակի առջև:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ինչպես երեկ, նույնպես և այսօր ու վաղը ոչ մի ջանք չի խնայելու հայ ժողովրդի ազգային երազանքների իրականացման համար:

Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրո

21.09.2024 թ.



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1995 թվականի սեպտեմբերի 2-ը ԼՂՀ տարածքում
ոչ աշխատանքային օր հայտարարելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը
որոշում է՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետակա
անկախության մասին հռչակագրի ընդունման չորրորդ տարելի
առթիվ 1995 թվականի սեպտեմբերի 2-ը ԼՂՀ ողջ տարածքո
հայտարարել ոչ աշխատանքային օր:

2. ԼՂՀ նախարարություններին, պետական վարչություններ
կոմիտեներին, պետական հիմնարկներին, ձեռնարկություններ



1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Արցախի անկախությունը:

ԴՐՕՇԱԿ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ԴԵՊԻ ՌԱԶՄԱԴԱՇՏ ԿՈՉԸ

25 մայիսի, 1918 թ.
Երևան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրաւորական տրամադրութիւնը վերջապէս ազդեց հայ ժողովրդի հոգու վրայ։ Այժմ, գոնէ, պարզւում է, որ մենք մեր յոյսը պիտի կապենք մեր խիզախութեան հետ։ Ամեն տեղ ոգևորութիւն է տիրում։ Սարդարաբադի շրջանում հայ զինուորներն ու նրանց եզդի դաշնակիցները գովելի արիութեամբ յետ են վանում թշնամուն՝ թուրք ասկեարներին և թուրք ու քիւրդ խուժանին։ Էջմիածնի գաւառի բոլոր գիւղերից օգնութեան են գնում քաջերին։ Աւելի սրտապնդիչ թռիչքներ են կատարում Դիլիջանի շրջանում։

Ժողովուրդը ոտքի է կանգնել և իր հազարաւոր զաւակներին մղում է դէպի ռազմի դաշտ։ Հայ գիւղացիները տալիս են իրենց ամբողջ ունեցածը՝ հրացան, փամփուշտ ու հաց։ Հայ ժողովուրդը հարիւրաւոր դարեր քաջութեամբ է պաշտպանել իր հայրենի օջախը, իր տունն ու ընտանիքը. նրան յաղթել են, բայց նրա հոգին ընկճել չեն կարողացել։ Վերջին պատերազմական և քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել։ Այսօր այդ հիւանդութիւնը բուժւում է, հին խիզախութիւնը վերածնւում է, և այդ փրկութեան միակ իրական ելքն է մեր դժուարին պայմաններում ու ժամանակներում։

Ի զէն, մեր քաջեր, դէպի ռազմադաշտ։

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ (ԴՐՈ)
Ծնվել է 1883 թ. մայիսի 31-ին Իգդիրում – մահացել է 1956 թ. մարտի 8-ին Բոստոնում:
Ազգային ազատագրական պայքարի և Առաջին հանրապետության
նշանավոր ռազմական գործիչ

ԴՐՕՇԱԿ